

II

ԵՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅ ԳՐԵՐԻ
ՍՏԵՂԾՄԱՆ 1600-ԱՄՅԱԿԻՆ
ԵՎ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՍԱՆՁԱՑ ԲՈՒՅԼԻՆ

«ԴԱՇԱՆՑ ԹՈՒՂԹ».
ԿԱԶՄԸ, ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ, ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ
ՆՊԱՏԱԿԸ

ՀՐԱՋ ԲԱՐԹԻՎԻՅԱՆ,

Սույն հոդվածի հետազոտությունն առարկան «Դաշանց Թուղթ» խորագրով կրող բազում ընդօրինակություններով մեզ հասած աղբյուրն ըստ իր բովանդակության վերաբերում է հռոմեական կայսր Կոստանդին Մեծի և Հայոց արքա Տրդատ III-ի միջև Հռոմում կնքված պայմանագրին: Աղբյուրում մանրամասն խոսվում է Տրդատ արքայի և Գրիգոր Լուսավորչի պայմանագրի թափուրով Հռոմ ժամանելու, կայսեր ու Հռոմի պապ Սեղբեստրոսի կողմից նրանց ցուցաբերած արտակարգ ընդունելության, շնորհված նվերների և բազում այլ հարցերի մասին:

«Դաշանց Թուղթն» առաջին անգամ հրատարակվել է Վենետիկում 1683 թ. Հովհաննես Հոլովի իտալերեն թարգմանությամբ հանդերձ: Այդ հրատարակությունը հետազոտողներին հայտնի դարձավ սոսկ 1961 թ., երբ հայտնաբերվեց Հ. Անաոյանի կողմից Մաշտոցի անվան Մասենադարանի № 2272 դրչադրի ժողովածուի կաղմի մեջ¹: Այն վերնագրված է «Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդինոսի և սրբոյն Սեղբեստրոսի վեհագունի փափին և Տրդատայ Հայոց արքայի, և սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչին: Շարագրեցեալ յամի Տեսուն երեք հարիւր և տասն և վեց. և սպաղրեալ ի թուրի Փրկչին 1683, ի Վէնէտիկ քաղաքի»²:

Այնուհետև հայտնաբերվեցին աղբյուրի բազմաթիվ արտագրություններ, որոնցից երկուսը հրատարակության արժանացան: Մեկը լույս տեսավ 1709 թ. որպես հավելված Ազաթանգեղոսի «Հայոց պատմության»: Պատճառն այն է, որ «Դաշանց Թղթի» վերջում ասվում է. «Այս գիր միաբանութեան և սիրոյ և հաստատ հայրենագրութեան ի հետ Հայոց գրեցաւ հրամանաւ մերով Կոստանդեսոյ կայսեր և Սեղբեստրոսի պապի ... լատին

¹ Հ. Ս. Ա ն ա յ ա ն. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. Երևան, 1961, էջ 51, ծանոթ. 1:

² Իտալերեն թարգմանության վերնագիրն է. Lettera dell' Amicitia e dell' Unione di Costantino gran Cesaie e di San Siluestro Sommo Pontifice, e di Tridate Re dell'Armenia, e di S. Gregorio Illuminatore della Nazione Armena. Scritta nell' Ano del Signore 316. In Venetia. M.DC.LXXXIII. Appresso Michiel Angelo Barboni.

լեզուաւ մակադրեալ և արքունական մատանեաւ մերով կնքեալ և ստորագրեալ. և զհաւասարն այսմ թղթոյ միաբանութեան թուղթն ի հետ Տրդատայ և Սրբոյն Գրիգորի եղաք ի շամբուն արքունի. իսկ միւս գիրս փոխադրեալ աստենապարին Հայոց թագաւորին Տրդատայ Մեծի, Ագաթանգեղոսի, քաջ ճարտար գրչի և տարեալ ի Հայս...»³:

«Դաշանց թղթի» հաջորդ ամբողջական հրատարակութիւնն իրականացրեց Կ. Շահնազարյանցը: Պատճառն աղբյուրի բովանդակութեան և դրա քաղաքական-եկեղեցական ուղղվածութեան շուրջ գնացած սուր վեճն էր, որ հրատարակիչն ունեցավ Մատթեոս Կոստանդնուպոլսեցի արքեպիսկոպոսի հետ: Գրքույկը վերնագրված է. «Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը: Արար Կ. Վ. Շահնազարեանց, միաբան Սրբոյ էջմիածնի և անդամ խորհրդարանի Կ. Ճեմարանին Տեարց Լազարեանց, որ ի Մոսկվայ: Պարիս, 1862»:

Խնդրո առարկա աղբյուրին անդրագարձան բաղում հետադոտողներ, որոնցից առավել կարևոր կարծիքների մասին խոսելու ենք ստորև: Նախ և առաջ կանգ առնենք մեծանուն Միքայել Չամչյանի կողմից աղբյուրին տված դնահատականին: Նա, իր «Հայոց պատմութիւն» մեծարժեք աշխատութեան առաջին հատորի սկզբում, հիշատակելով իր օգտագործած աղբյուրները, առաջինը նշում է Ագաթանգեղոսին. «Սա գրեաց մատեան մի վասն Տրդատայ: ... իսկ թէ յոր լեզու շարագրեալ իցէ սորա գիրս իւր, արդեօք յունարէն թէ հայերէն, տարակոյս է»: Հիշելով Կոստանդնուպոլսում 1709 թ. լույս տեսած Ագաթանգեղոսի Պատմութիւնը, նա գրում է. «...յորոյ վերջն եղեալ կայ և թուղթն Դաշանց բազում յաւելուածով»⁴: Սրանից կարելի է եզրակացնել, որ նա «Դաշանց թուղթը» համարում է նույն Ագաթանգեղոսի գործ, բայց հետագայում այլևայլ օտարոտի շարադրանքներով ճոխացված:

Բուն գրքի շարադրանքում նա մանրամասն նկարագրում է Տրդատ արքայի և Գրիգոր Լուսավորչի Հռոմ ճանապարհելը, Կոստանդին կայսեր և Սեղբեստրոս սլապի կողմից մեծ սլապիվների արժանանալը, Հռոմում «Սիրոյ և միաբանութեան» դաշինք կնքելը և Գրիգոր Լուսավորչի Սեղբեստրոսի կողմից ձեռնադրվելը «պատրիարք հայոց կամ եպիսկոպոսապետ այսինքն մեծ հայրապետ» ինչպես «աւանդի յազգի մերում»⁵:

«Ծանօթութիւնք յերկրորդ գիրս» բաժնում Միքայել Չամչյանը հատուկ կանգ է առնում «Դաշանց թղթի» վրա: Նրա եզրակացութիւնը հետևյալն է. «Նախ թէ այս թուղթ դաշանց ո՛չ է կեղծիք, այլ ճշմարիտ. քանզի օրինակ նորա միշտ դատանիւր յազգի մերում, նաև յաւուրս խորենացոյն ... Նաև խորենացին իսկ անտի առնու ըստ մասին զպատմութիւն սրբոյ կուսին Նունեայ... Արդ ի կարգի պատմութեան Ագաթանգեղոսի ոչ գտանի այսպիսի բան վասն Նունեայ, այլ միայն համառօտիւ ի թղթին դաշանց: Սոյնպէս և ի յիշել խորենացոյն զմկրտիլ Կոստանդինոսի, և զերևուածն խաչին՝ ևայլն, վկայ բերէ և զԱգաթանգեղոս. որ զայգ աւանդէ

³ Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են:

⁴ Միքայել Չամչյանց. Պատմութիւն Հայոց. հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 10:

⁵ Նույն տեղում: Հմմտ. էջ 637:

ի թուղթն դաշանց»։ «Ուրեմն, — ավարտում է իր միտքը, — կայր յառաջն՝ նաև ի ժամանակս խորենացույն՝ այն թուղթ դաշանց»⁶։

Հարցի քննությունն օժանդակող Մ. Չամչյանի բերած աղբյուրները (Զենոբ Գլակ, Բուդանդ, խորենացի) իրոք հաստատում են, թե Տրդատ արքայի և Կոստանդին կայսեր միջև սլավոնացի (գաղինք) կնքվել է։ Իսկ սրանցից շատ հետո հայ հեղինակները լուր սրանց ասածն են կրկնում և որոշակի արժեք չեն ներկայացնում։

Վենետիկի Մխիթարյանները «Դաշանց թուղթը» վավերական փաստաթուղթ չեն համարում։ Դեռ Ազաթանգեղոսի Պատմության 1835 թ. հրատարակության առաջաբանում (էջ 14) նշում են, թե այն «խանգարուած է»։ Անդրադառնալով Ազաթանգեղոսի Պատմության ձեռագրերին, նրանք գտնում են, որ «Ցանկալի էր և ընթերցուած մի հարադատ և անխարդախ գրեմալ իսկ խանգարելոյն դայնորիկ զթղթոյ դաշանց, ունել ի հին և ի վավերական Ա. օրինակիս Փարիզեան, յորում չիք գլխովին, որպէս և ոչ ի Բ. օրինակն հնագիր գրեալ ի Չ.Թ.»։

«Դաշանց թղթին» ավելի մանրամասն անդրադարձել է Մատթեոս Կոստանդնուսլուսեցի արքեպիսկոպոսը (հետագայում Ամենայն Հայոց կաթողիկոս — 1858–1865)⁷։ Նրա ընդարձակ հոդվածը որևէ գիտական արժեք չի ներկայացնում, քանզի ըստ էության Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ում դրվածի արտագրությունն է։

Մատթեոս վեհափառի ասելով իր «այս աշխատության նպատակը պիտի ըլլա միայն հարադատ բնագրին ստուգությունը հաստատել՝ ցուցանելով արժանահավատ մատենագրաց վկայությամբ, թե կեղծիք չէ այն, այլ՝ ճշմարիտ»⁸։ Այս միտքը բառացի վերցված է Մ. Չամչյանից, որը գրել է. «Այս թուղթ դաշանց ոչ է կեղծիք, այլ՝ ճշմարիտ»⁹, այն տարբերությամբ, որ Չամչյանը Տրդատ-Մեծն Կոստանդինի գաղինքին է անդրադառնում և ոչ կիլիկյան շրջանի կեղծիքին։ Այնուհետև, նկատի ունենալով այն հանդամանքը, որ մի շարք եվրոպացի մասնագետներ ժխտել են «Դաշանց թղթի» վավերականությունը, ինքը մտադիր է «օտար աղագց կարծիքական գրություններուն տված շփոթությունը մերժելու, և մանավանդ աչառուությամբ և կողմնասիրությամբ գրված խոսքերը հերքելու, և ապա ազատամիտ ոգով պիտի քննե զանի»¹⁰։ Ասլա նույն ոգով. «ստուգապատում Դաշանց թղթոյն վրայով անտեղի կարծիքական խորհրդով և կողմնակցություն կրիվք գրվածները և գայթակղությունները կըմերժվին այստեղ»¹¹։

Մենք հնարավոր է ուշագրություն չդարձնեինք Մատթեոս վեհափառի հոդվածին, բայց դա արեցինք, քանզի այն մանրամասն քննադատության

⁶ Նույն տեղում, էջ 642։ Հմմտ. էջ 636-637։

⁷ Մատթեոս կաթողիկոս Ամենայն Հայոց։ Հաստատութիւն ստուգութեան Դաշանց թղթոյն, զոր Կոստանդինոս մեծ ինքնակայն Հռովմայ և Ս. Սեղբեստրոս Հայրապետն Հռովմայ տուած են Տրդատ թագաւորին և Ս. Գրիգոր Հոսաւորիչ Հայրապետին. — «Ճոաքաղ» (այսուհետև «Ճոաքաղ») կրօնական, բանասիրական և ազգային գիտելեաց։ Հ. Բ., տետրակ ԺԶ, 1861, էջ 253-260։

⁸ Նույն տեղում, էջ 238-239։

⁹ Մ. Չ ամ չ ան ց. նշվ. աշխ., էջ 642։

¹⁰ «Ճոաքաղ»։ Հ. Բ., տետրակ ԺԵ, էջ 237-238։

¹¹ Նույն տեղում, էջ 238։

առարկա դարձավ Կարապետ վարդապետ Շահնազարյանցի գրքոլկում, որին հետևեցին բազում հետազոտողներ:

Կարապետ Շահնազարյանցը հանդես եկավ առանձին հոդվածով, ապա նաև՝ առանձին գրքոլկով, որ լույս տեսավ Փարիզում¹²: Հնարավոր չէ չնկատել այն մտահոգությունն ու տագնապը, որ XIX դ. համակել էր արևմտահայոլթյանը, նախ և առաջ մտավորականոլթյանը: Հռոմի Propaganda Fide-ի, բողոքական հոգեորոնոլթյամբ զբաղված միսիոներները վխտում էին երկրում, քայքայում ու մասնատում հայոլթյունը, հեռացնելով, օտարացնելով հայ եկեղեցուց: Խորապես մտահոգվածներից մեկն էր Կարապետ Շահնազարյանցը, որն առանց հապաղելու ամենասուր, կրքոտ քննադատոլթյան ենթարկեց Մատթեոս Կոստանդնուպոլսեցու վերը հիշված հոդվածը, նաև բոլոր նրանց, ովքեր «Դաշանց Թուղթը» ստույգ փաստաթուղթ էին համարում¹³: «Դաշանց Թուղթը, — գրում է նա, — ավելի դեղին տենդով բախած ուղեղի ցնորք է, քան թե ճարտար խաբեբայի գյուտոր, որչափ թանձրամիտ ուսմիկ անձերու զարմանք կպատճառե, այնչափ ալ ավելի՝ կիրթ ճաշակաց վարժ մտաց զզվանք» (էջ 73):

Գալով «Դաշանց Թղթի» լույս աշխարհ գալու ժամանակին, Կ. Շահնազարյանցը դտնում է, որ այն «խաչակրաց ատենի շենք է» (էջ 85-86), իսկ սլատճառը՝ «Հայերը Մահմետականներու, Հոյներու նենգոլթենեն ու կեղեկանքեն զզված՝ նոր բարեկամ փնտռելու պետքը կզգային, մանավանդ երբ իմացան այն ատենի Պապերու անկոպար տիրապետոլթյունը Արևմտեանց վրա: Այս ատենս է, անտարակույս, այն՝ տպեալ Դաշանց Թուղթի բուն թվականը» (էջ 86):

Անդրադառնալով աղբյուրի բովանդակոլթյանը, Կ. Շահնազարյանցը վստահ է, որ «Դաշանց Թուղթ»-ը ոչ այլ ինչ է, քան կաթոլիկոլթյան և հայալավանոլթյան միոլթյունը՝ «միաբանոլթյան հավատ» (էջ 5), կրոնական ստրկոլթյուն, որում, սլարզ է, տուժողը ամեն տեսակետից հայ ժողովուրդն է լինելու: «Կրոնական միաբանոլթյան պատրվակալ մեր եկեղեցին որևիցէ եկեղեցվո աղախին» (էջ 57) պիտի լինի:

Կ. Շահնազարյանցին ծայր աստիճան խրտնեցրել է «Դաշանց Թղթի» այն հատվածը, որտեղ նշված է Սեյբեստրոս պապի Գրիգոր Լուսավորչին ցուցաբերած մեծարանքը, ինչ ունիթոռների խաբեոլթյուն համարելով, հավատացած է, որ եթե դա ընդունենք, «կպարտավորիմք մեր կաթողիկոսները Հռոմ ուղարկել միշտ ձեռնադրոլթյուն առնելու համար ու մեր աղատ քահանայապետոլթյունը Հռոմս փառամուլ կարվինալներու ծառայական լուծի տակը դնել» (էջ 107-108):

Կ. Շահնազարյանցը «Դաշանց Թուղթ»-ը «միջին դարու անապացույց գրույցք» (էջ 7) է բնորոշում, «ստապաճույճ» (էջ 99), «աղճատաբան» (էջ 73) ու «խայտառակ» (էջ 111): Եվ ավելի որոշակի. «Հիշյալ դաշնագիրը է և պիտի մնա, ըստ մեր զատողոլթյան, իբրև կեղծիք Միջին Դարու անգետ,

¹² Դաշանց Թղթոյ քնոլթիւնն ու հերքումը: Արար՝ Կ. վ. Շահնազարյանց. Պարիս, 1862:

¹³ Կ. Շահնազարյանցը համարակալել է «Դաշանց Թղթի» «ստոլթիւնները», առաջինից մինչև «երեքտասաներորդ ստոլթիւն Դաշանց Թղթոյն» (էջ 99-111): Այսուհետև «Դաշանց Թղթից» կատարված հղումների վերջում, փակագծերի մեջ, նշվում են աղբյուրի էջերը՝ Կ. Շահնազարյանցի հրատարակոլթյունից:

հիմնականում և լատինասեր ուղեղաց» (էջ 8-9): «Մեք ... ի սեր ճշմարտութ-
յան, և պատմությունը, ժամանակագրությունը, աշխարհագրությունը և
գրականությունը ձեռքս՝ կպնդեմք, որ այն խարդախյալ է, ի հետնոց ներ-
մուծյալ է, և ասիկար ամենևին որևիցէ կրիտիքի տոկալ» (էջ 9): Այն «ոչ
վինագրություն է, ոչ քաղաքական դաշն, ոչ խաղաղության ուխտ, ոչ
առևտրո պայմանագիր, ոչ մարդարեություն, ոչ պատմություն, ոչ աշ-
խարհագրություն, ոչ վկայաբանություն, ոչ գուշակություն, ոչ հայտ-
նություն, ոչ պարզեակազիր, այլ անճոռնի անդունդ մը, որու մեջ ամենայն
բանի կտորներ կան և ամենևին, ամբողջ բան մը չկա, որու ամեն անուն
կսլատաշաճի, բայց և ոչ մի անուն սեսլհական» (էջ 70-71):

Մի հարցում, սակայն, հեղինակը միանգամայն իրավացի է: Այն, որ
մինչև կիլիկյան շրջանը, աղբյուրներում (Զենոբ Գլաի, Խորենացի, ավելի
ուշ՝ Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Ասողիկ) հիշվող Տրդատ-
Կոստանդին գալիսքում Գրիգոր Լուսավորիչ, Սեդեքեստրոս պապ բացակա-
յում են (էջ 65 և հտ.), նրանք մուտք են գործել ավելի ուշ:

4. Շահնաղարյանցն իր գրքույկում հրատարակում է «Դաշանց թղթի»
մի այլ դրչադիր (էջ 11-30), ապա վերահրատարակում Մատթեոս կաթողի-
կոսի «Ճռաքաղում» լույս տեսած հոգվածը (էջ 31-55), որին անդրադար-
ձանք վերևում, վերջապես հանգես է գալիս այդ հոգվածի ջախջախիչ
քննադատությամբ: Հեղինակը չի բացառում «Տրդատի և Կոստանդինոսի
մեջ քաղաքական դաշնագրության մը գոյությունը» (բայց ոչ ելնելով
«Դաշանց թղթից»), «որո սլայմանները հավանականաբար սլիտի ըլլային
1. Հայոց Տերությունը տարեկան հարկ մը տար Հռոմայեցիոց. 2. անոնք ալ
իրենց գործով պաշտպանեին Հայաստանը Պարսից դեմ: Ասիկա հայտնի
կերևի սրբույն Վրդանիսի, Լուսավորչա որդվոյն, սու Կոստանտ կայսր,
Մեծ Կոստանտինոսի որդին, դրած նամակեն» (էջ 67):

4. Շահնաղարյանցն առանց վարանելու դիմում է Մատթեոս կաթողի-
կոսին, ասելով. «Առե՛ք Ունիթոյանց պատրանքը, և կերե՛ք իբրև Լուսա-
վորչի գործ» (էջ 63): 4. Շահնաղարյանցի գրքույկը հանդիսացավ «Դա-
շանց թղթի» ստուգությունը հերքող հետադա մասնագետների սեղանի
գիրքը, նրանց եղրակացություններն այս կամ այն չափով բխում են այդ
դործից: Հենց դա է պատճառը, որ մենք սույն հոգվածում դրան այնքան
մեծ տեղ հատկացրինք:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը 4. Շահնաղարյանցի աղբեցութ-
յան տակ փաստորեն կրկնում է նրան: «Դաշանց թղթը» մի ամբողջութ-
յուն համաբերով, նա դտնում է, որ այն «հետին դարերու աղավաղ և ան-
կապակից, գրական և լեզվաբանական և ժամանակագրական սխալներով
լեցուն գործ մըն է, որ այլևս իրեն համար պաշտպան չունի: Հռոմի աթո-
ւին կողմեն Հայոց աթոռին առանձնաշնորհումներ տրվիլը և անոնց դո-
րությամբ արևելյան եկեղեցիներու իրավասությանց փոփոխվիլը, ժամա-
նակին հոգվոյն և սովորությանց և հարաբերությանց հետ բոլորովին ան-
հաշտ ենթադրություն մըն է: Գրիգորի մինչև Հռոմ ճանապարհորդութ-
յուն ընելը, բոլորովին անհիմն ենթադրություն մըն է, որ ոչ մեկ կերպով
պատմության հետ չի գոգվիր»: Հեղինակը, ինչպես պիտի տեսնենք, միան-
գամայն ճիշտ, ցույց է տալիս, որ «Հայոց թագավորությունը իր հարաբե-

րուլթյունները կը պահեր ուղղակի Արևելքի կայսրներուն հետ, և Արևմուտքի հետ հարաբերությունն չուներ, իսկ Կոստանդինոս 323-են ետքը սկսավ Արևելքի մեջ իշխել, մինչև այն ատեն Լիկինիոս էր իշխողը: ... Ավելցնենք նաև որ 323-են ետքը Կոստանդինոս Հռոմն ալ սկսած էր լքել. և զինքն այնտեղ երթալու փնտռելու հարմարություն ալ կը պակսեր»:

Մ. արք. Օրմանյանը խորամուկոս դատելով, գրում է, թե «նկատողության արժանի է որ խորենացին Ագաթանգեղոսի Պատմությունը առջևն ունենալով իսկ, Գրիգորի ճանապարհորդելը չէ գրած, որով կամ զայն կեղակարծ դատած է, և կամ ուղևորության հատվածը հետո Ագաթանգեղոսի մեջ ներմուծված է»: Հեղինակը պաշտպանում է այն կարծիքը, որ պարզապես շփոթված է Տրդատ III-ը Տրդատ I-ի հետ, որ Ներոնի օրոք իրոք այցելել է Հռոմ:

Ավարտելով «Դաշանց Թղթի» վերաբերյալ իր դատողությունները, Մ. արք. Օրմանյանը գրում է. «Դաշանց Թուղթին հերյուրվածը, հայկական բարեմիտ նենգութուն մըն է խաչակիրներու ժամանակ կազմված, երբոր Անտիոքի լատին պատրիարքներ, Կիլիկիո նույն աթոռին դավառներեն մին լինելեն առիթ առնելով, Հայոց հայրապետության վրա իշխելու փորձեր ըրին: Հայեր չուզեցին ուղղակի Լատիններուն դիմադրություն ցուցուցած ըլլալ, և մտածեցին Հայոց աթոռին ազատությունը Հռոմի պապերուն կամքով եղած ցուցնել, որով թե Լատինաց բարեկամութենեն սպասված օգնությունը պիտի չկորսնցնեին, և թե իրենց ազատ հայրապետությունը պաշտպանած պիտի ըլլային: Հայտնի է ուրեմն որ ոչ Գրիգոր և ոչ Տրդատ Հռոմ չեն գացած, և Սեղբեստրոսի վերադրված տվուչությունը անհիմն հերյուրված մըն է»¹⁴:

Միանգամայն առողջ ու ընդունելի համարելով անվանի հեղինակի միտքը, թե «Դաշանց Թուղթը» «Հայերի բարեմիտ նենգություն մըն է», սակայն ոչ «Հայոց աթոռի ազատությունը» Անտիոքի լատին պատրիարքների ոտնձգություններից պաշտպանելու համար: Այդ մասին մանրամասն կասվի ստորև:

«Դաշանց Թղթին» առանձին գլուխ է նվիրել ակադ. Ա. Հովհաննիսյանն իր մեծարժեք երկհատոր աշխատության մեջ¹⁵: Նա այն հեղինակներից է, որ խորագույնս ընդգծեց Կ. Շահնազարյանցի «Դաշանց Թղթի» լույս աշխարհ դալն ունիթոռական շարժման հետ կապելու տեսակետը: «Փաստապես Թղթի անվավերականությունը, — գրում է նա, — վաղուց արդեն նշված է ու մերկացված»¹⁶: Աղբյուրը նա որակում է որպես «Կիլիկիայում արժարծված միաբանողական և խաչակրական պրոպագանդայի շիկացած մթնոլորտում խմբագրված ապոկրիֆ»¹⁷, որը «դառնալու էր սլասական եկեղեցու ունիվերսալ հավակնությունները և հայ-հռոմեական եկեղե-

¹⁴ Մ. արք. Օրմանյան. Ազգապատում. հ. Ա. — «Էջմիածին», 2001, սյունակ 113-115:

¹⁵ Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. հ. Ա, Երևան, 1957:

¹⁶ Նույն տեղում, էջ 67:

¹⁷ Նույն տեղում, էջ 75:

ցական միությունը հիմնավորող ազիտացիոն միջոցներից մեկը»¹⁸: «Միայն կեղծ, խաբուսիկ ու միտումնավոր մի թուղթ կարող էր շաղկապել հայ եկեղեցու սկզբնավորման պատմությունը Հռոմի հետ, ընդամին տիեզերական եկեղեցու մեջ վերադրելով հայ եկեղեցուն այնպիսի մի դիրք, որպիսին նա ունեցած չէ երբեք»¹⁹: «Այն կառուցված է «աստվածընտիր ժողովրդի», ներկա դեպքում Հռոմի գերիշխանության, նրա տիեզերական եկեղեցապետության գաղափարի վրա»²⁰: Աշ. Հովհաննիսյանը խնդրո առարկա աղբյուրը համարում է «հերյուրանք», որը գալիս է «հիմնավորելու» և «վավերականացնելու» հայ-հռոմեական կողմնորոշման հետ լծորդված պահանջներն ու սպասումները»²¹: Որոշակիացնելով «Դաշանց թղթի» լույս աշխարհ գալու ժամանակը, Աշ. Հովհաննիսյանը այն համարում է III և IV խաչակրությունների ժամանակը, որոնց հետ էին կապում հայերն իրենց փրկությունը²², որ «Դաշանց թղթի» անհայտ հեղինակը փաստապես արժարժում էր XII-XIII դդ. պատմական սահմանագծի վրա հուզված թեոկրատական իդեաներն ու ակնկալությունները: «Դաշանց թղթի» Լուսավորիչ կամ, Տրդատ, Սեղբեստրոս կամ Կոստանդինոս անունները անհայտ հեղինակի համար ժամանակակից Գրիգոր Ապիրատի և Լևոն Ռուբինյանի²³, Ինոկենտիոս պապի և «ալաման» կայսրի կեղծանուններն էին պարզապես»²⁴: «Դաշանց թղթի» գաղափարական առանցքը կազմում են միսիոներական-թեոկրատական այն իդեաները, որոնց բուն ջերմոցը Ինոկենտիոս III-ի Հռոմն էր»²⁵:

«Դաշանց թուղթը» համարելով մի ամբողջություն, Աշ. Հովհաննիսյանը կանգ է առնում Տրդատի և Կոստանդինի դաշինքի հարցի վրա և եզրակացնում, որ «դաշինքի պատմությունն այլ ինչ չէր, քան քրիստոնեացած մի զրույց հանդիսավոր այն ընդունելության մասին, որին մեր թվակալության առաջին դարում արժանացել էր հեթանոս Տրդատ I-ը, քրիստոնեահաված Ներոն կայսրի կողմից»²⁶:

«Դաշանց թուղթը» ուսումնասիրել է նաև Հ. Ս. Անասյանը, XVII դ. արևմտահայ ազատագրական շարժման ղեկավարների Արևմուտքից սպասվող օգնության և խաչակրաց նոր արշավանքների ակնկալիքների առնչությամբ: Նա ցույց է տալիս, որ լատինական կողմնորոշումը հայ հասարակական կյանքում նոր չէր, այն կազմվել էր դեռևս XI-XIII դդ., երբ, ըստ Հ. Անասյանի, երևան եկավ «մի գրական ստեղծագործություն, որը «Դաշանց թուղթ» էր կոչվում, և «վկայում էր» հայ-հռոմեական հին

¹⁸ Նույն տեղում, էջ 74:

¹⁹ Նույն տեղում, էջ 70:

²⁰ Նույն տեղում, էջ 69:

²¹ Նույն տեղում, էջ 74-75:

²² Նույն տեղում, էջ 65:

²³ Ինչպես կտեսնենք ստորև, Աշ. Հովհաննիսյանի դիտողությունը, թե ի դեմս Լուսավորիչ-Տրդատ զույգի մենք ունենք Գրիգոր Ապիրատ կաթողիկոսին և Լևոն II Ռուբինյան թագավորին (բայց ամենևին ոչ Ինոկենտիոս պապին և «ալաման» կայսրին, ինչպես նա կարծում է), հանճարեղ է, հակառակ այն բանին, որ մենք հայոց արքային և Լուսավորչին առնչվող խնդրին այլ բացատրություն ենք տալիս:

²⁴ Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 75:

²⁵ Նույն տեղում, էջ 79:

²⁶ Նույն տեղում, էջ 68:

բարեկամության մասին, որպես պատճենը հանդես գալով նույնինքն այն քաղաքական ու կրոնական գաղափարի, որն իբրև թե IV գարի սկզբներին կնքվել էր մի կողմից Հռոմի Կոստանդինոս Մեծ թագավորի ու Սեղբեստրոս պապի, իսկ մյուս կողմից հայոց Տրդատ թագավորի ու Գրիգոր Լուսավորչի հայրապետի միջև: «Այս «վավերագիրը», շարունակում է հեղինակը, «որն իր հայտնի քննադատի կողմից՝ անվանվում է հայերի և լատինների մերձեցումն ու փոխադարձ համակրանքը գորացնելու համար հնարված մի «բարեպաշտական խաբեություն», բայց որն ավելի ճիշտ կլիներ անվանել կիլիկյան շրջանում լատինասեր հոսանքի կողմից եվրոպական ազդեցությունն ամրապնդելու նպատակով հնարված մի գրական կեղծիք, մեծ ժողովրդականություն էր շահել հետագա դարերում՝ բարեկամության և արտաքին օգնության կարիքն զգացող հայ քաղաքական շրջաններում և այդ պատճառով բազմաթիվ օրինակներով ողողել էր հրապարակը»²⁷:

Վերջերս «Դաշանց Թղթին» նվիրված չորս հոդված է լույս տեսել, որոնցից երկուսը պատկանում են հայագետ Ռոբերտ Վ. Թոմսոնի գրչին: Առաջինը կրում է «Կոստանդինն ու Տրդատը հայկական ավանդության մեջ»²⁸ խորագիրը: Անդրադառնալով հայոց արքա Տրդատ III-ի Կոստանդին կայսերը կատարած այցելության ավանդությանը, հոդվածագիրը ցույց է տալիս, որ այդ պատմությունը պարզ է, և նշում առանձին հետազոտողների կարծիքն այն մասին, որ հավանաբար այն շփոթված է դրանից 250 տարի առաջ Տրդատ I-ի ներոն կայսրին կատարած այցելության հետ: Հեղինակը մանրամասն, մեկ առ մեկ, անդրադառնում է միջնադարյան հայ պատմիչների տվյալներին, որոնք հիշատակում են (կամ չեն հիշատակում) հայոց արքա Տրդատ III-ի և Գրիգոր Լուսավորչի այցելությունը Հռոմ և նրանց փառավոր ընդունելությունը Կոստանդին Մեծի և Հռոմի պապ Սեղբեստրոսի (կամ Եվսեբիոսի) կողմից, ինչպես նաև Կոստանդինի և Տրդատի միջև կնքված դաշինքը:

Շարունակության մեջ Թոմսոնը անդրադառնում է կիլիկյան շրջանին, XII-XIII դդ., երբ հայերը չփման մեջ են մտնում խաչակիրների հետ և, ըստ նրա, հայոց միությունը Բյուզանդիայի հետ դառնում է պակաս կարևոր, քան հարաբերությունների հաստատումը պապականության հետ: Տրդատ-Կոստանդին պատմությանն ավելանում է երկու նոր երևույթ: «Դաշանց Թղթում» Գրիգոր Լուսավորչի հանդես դալը որպես քրիստոնյա աշխարհի անկախ թևի պատրիարք, և Երուսաղեմի, սուրբ վայրերի վրա հայոց վերահսկողության փաստարկումը: Աղբյուրում Տրդատի՝ Կոստանդինի նկատմամբ ունեցած նախապատվությունը անտեսված է, իսկ պապի առաջնայնությունն ավելի ընդգծված: «Դաշանց Թղթում» դեպքերը նկարագրվում են հռոմեամետ տեսանկյունից: Այդպիսի նոր գաղափարների անդրադարձը Թոմսոնը գտնում է ամենից առաջ Կիրակոս Գանձակեցու

²⁷ Նկատի ունի Կ. Շահնազարյանցի դրքույլը:

²⁸ Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 50-51: Հեղինակին հայտնի են միայն Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 1322 թ. XVII դ. ներառյալ արտագրված երեք տասնյակ օրինակներ:

²⁹ R o b e r t W. T h o m s o n. Constantine and Trdat in Armenian Tradition.- "Acta Orientalia Academiae Scientiarum Hungariae". T. L (1-3), Budapest, 1997, p. 277-289.

մոտ³⁰: Բայց պետք է նշենք, որ Կիրակոս Գանձակեցու մոտ հիշյալ գաղափարի սոսկ անդրադարձի չէ, որ հանդիպում ենք, այլ «Դաշանց Թղթից» կատարված, կարելի է ասել՝ բառացի արտագրություն: Բերենք մի քանի ակնառու օրինակներ.

Դ.Թ. «Կենդանի վկայն Քրիստոսի եւ մեծ խոստովանողն» (էջ 12)

Կ.Գ. «որպէս խոստովանողի եւ առաքելաշնորհ վկայի Քրիստոսի» (էջ 11)

Դ.Թ. «ուխտ եւ դաշինս հաստատեցաք» (էջ 14)

Կ.Գ. «դնել ուխտս եւ դաշինս ի մէջ իւրեանց» (էջ 11)

Դ.Թ. «տալով նմա (Գրիգորին) ... նաև գրժկաբաշխ ձեռն բազկօքն հանդերձ երկոցունց առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի» (էջ 27)

Կ.Գ. «տան նմա և մասն ինչ ի նշխարաց առաքելոցն, եւ զահեակ ձեռն Անդրէի առաքելոյ» (էջ 11)

Դ.Թ. «սպարաստեցի և տեղի սպտարագի սրբոյն Գրիգորի ի Յարութեան մեծի եկեղեցւոյն զԳողգոթայ ղխաչելութեանն և զսնարից ղուպայն և ղմիջի կանթեղն մշտավառ» (էջ 28)

Կ.Գ. «և այլ ընծայս բազումս և յերուսաղէմ ղԳողգոթայ՝ զտեղի խաչելութեանն Քրիստոսի, և սուրբ Յակովբն, և տեղի մի սպտարագի ի սնարս սուրբ Յարութեան: Ասեն կախեաց կանթեղ մի սուրբ Գրիգոր ի վերայ գերեմանին Քրիստոսի» (էջ 11):

Կիրակոս Գանձակեցու կողմից «Դաշանց Թղթին» ծանոթ լինելը անսպասելի չսլիտի լինելը: Պատմիչը նախ Վարդենիս գյուղում 1255 թ. անձամբ հանդիպել է մոնղոլների մոտից վերադարձող Հեթում թագավորին, այսինքն կարող էր նրանից տվյալներ քաղած լինել, սակայն ունենք փաստ, որ Գանձակեցին աշխատել է Կիլիկիայի Սիս քաղաքում: Այստեղ 1269 թ. հորինած «Յայսմաւուրքում» ասված է. «Եղև իրականութիւնս այս ի թուխ ԶԺԸ (1269), յաշխարհիս Կիլիկեցւոց ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ, եւ յառաջին ամի իշխանորդոյ նորին Լևոնի» (էջ 10), այսինքն կարող էր «Դաշանց Թուղթը» ձեռքի տակ ունենալ:

Հոգևածի վերջում, նշելով, որ իրագրությունը նախախաչակրաց ժամանակաշրջանի համեմատությամբ խստիվ փոփոխվել էր, թոմսոնը համառոտում է «Դաշանց Թղթի» բովանդակությունը:

□ Հոմմի եպիսկոպոս Եվսեբիոսը նույնանում է Աեղբեստրոսի հետ, երկու անունները վերաբերում են միևնույն անձին:

□ Տրդատն ու Լուսավորիչը գնում են Հոմմ ոչ թե Կոստանդինի շնորհավորելու, այլ սուրբ վայրերը և մասունքներն այցելելու համար:

□ Հաստատվում, որ Գրիգոր Լուսավորիչը ընդգծում է պապի դերակալությունը:

□ Կոստանդինը դրավոր ուղերձ է հղում համայն Արևելք, հայտարարելով, որ ինքը Տրդատին համարում է իր կայսրության երկրորդ դեմքը, Արևելքի կառավարիչների գլխավորը, որն օգնում է իրեն պարսից արքայից արքայի դեմ մղվող պատերազմում:

□ Գծվում են Տրդատ արքայի պետություն տարածքի սահմանները:

³⁰ Նույն տեղում, էջ 285: Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե յ ի. Պատմություն Հայոց (աշխատասիրություն Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի). Երևան, 1961, էջ 11:

□ Վերջին ժամանակներում Հայաստանը հանդիպելու է փորձության և նրան օգնութեան են հասնելու Կոստանդին կայսեր հետնորդները:

□ Գերագույն պապ Սեղբեստրոսը Գրիգոր կաթողիկոսին նշանակում է Մեծ Հայքի անկախ և ինքնիշխան պատրիարք և վերադաս վրաց և աղվանից կաթողիկոսներին:

Գալով «Դաշանց Թղթի» (Թոմսոնի բնորոշմամբ՝ Էդիկտի) կազմողներին, հոգևածագիրը նշում է, թե «այն գրվել է Կոստանդինի, իսկ կնքվել Սեղբեստրոսի կողմից»: Սակայն բնագրում այլ է. «Այս գիր ... գրեցաւ հրամանաւ մերով Կոստանդեայ կայսեր և Սեղբեստրոս պապի ... և արքունական մատանեաւ մերով կնքեալ և ստորագրեալ», այսինքն կնքողն ու ստորագրողը Կոստանդին կայսրն է:

Ռ. Թոմսոնը «Դաշանց Թղթին» անդրադառնում է մի քանի տարի անց հրատարակած «Խաչակիրները հայոց աչքով»³¹ հոդվածում: Նա սեղմ գծերով կրկնում է իր նախորդ հոդվածի բովանդակությունը: Տարբերությունն այն է, որ այստեղ նա արդեն ենթադրաբար փաստաթուղթը համարում է Ֆրանսերեն բնագրից թարգմանություն: «Այն հաստատ արևմտամետ փաստաթուղթ է, Կիլիկյան Հայաստանի ծայրահեղ արևմտամետ կուսակցության ներկայացրած...»³²: Համոզված ենք հակառակը՝ դա հայերեն բնադրից կատարված Ֆրանսերեն թարգմանություն էր (Ֆրանսերեն թարգմանությունը չի սլաշպանված), կատարված հատուկ նպատակով, ոչ «Կիլիկյան Հայաստանի ծայրահեղ հոմեամետ կուսակցության», այլ ընդհակառակը՝ «ծայրահեղ» հայամետ իշխանություններին: Այդ մասին մանրամասն ստորև:

«Դաշանց Թղթի» վերաբերյալ իր նկատառումները Ռ. Թոմսոնը մեկ նախադասությունում տվել էր իր «Հայկական դասական գրականության մատենագիտությունը մինչև մ.թ. 1500 թ.» գրքում, ուր դրել է, թե դա «XII կամ XIII դ. մի կեղծիք է, հավանաբար լատիներեն բնագրից մի թարգմանություն, որ նկարագրում է հայոց և հռոմայեցիների միջև կնքված դաշնադրությունը՝ Տրդատ արքայի և սուրբ Գրիգորի Կոստանդին կայսրին և Սեղբեստրոս պապին կատարած այցելության ժամանակ (դա հաճախ հասնում է դալիս որպես Ագաթանգեղոսի Պատմության հավելված»³³:

Իտալահայ հայագետ Գաբրիելլա Ուլուհոյանը «Թուղթ սիրո և միություն»՝ Կոստանդին Մեծին վերաբերող մի ուշ հայերեն ասոկրիֆ»³⁴ (պարականոն գրություն) հոդվածում, նկատի ունենալով իր իտալացի ընթերցողներին, աղբյուրի մասին մանրամասն տեղեկություններ է տալիս՝ հատվածաբար բերելով նաև դրանց իտալերեն թարգմանությունը:

³¹ R. W. T h o m s o n. The Crusaders through Armenian Eyes.– In: «The Crusades from the Perspective of Byzantium and the Muslim World». Dumbarton Oaks. Trustees for Harvard University, Washington D.C., 2001.

³² Նույն տեղում, էջ 77:

³³ R. W. T h o m s o n. A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD. Brepolis - Turnhout, 1995, p. 149.

³⁴ G a b r i e l l a U l u h o g i a n. Un tardo apocrifo armeno relativo a Costantino il Grande. La Lettera dell' amicia e dell' unione – In: «Costantino il Grande nell' eta bizantina». Atti del Convegno Internazionale (Ravenna 5-10 Aprile 2001) in Bizantinistica. Rivista di Studi Bizantini e Slavi, 2004, № 5.

Հոգվածազիրը, հետևելով Մարի-Լուիզ Շոմոնին, բացառում է քրիստոնյա Տրդատ III-ի այցը Հռոմ, ընդունում դիտումների մեջ հայտնված կարծիքը, թե Տրդատ III-ին է վերագրված Տրդատ I-ի այցելությունը Հռոմ ներոն կայսեր ժամանակ (64 թ.): Նշելով «Դաշանց թղթի» բազմապիսի աղբյուրներից կաղմված լինելը, նա կանգ է առնում Գրիգոր Լուսավորչի Հռոմում Սեղբեստրոս պապի կողմից սրբագործվելու ժամանակ տեղի ունեցած հրաշքի վրա, դրա գուգահեռը տեսնում ներսես Ա կաթողիկոսի հետ Կեսարիայում կատարված հրաշքի, հիշատակված Փավստոս Բուղանդի կողմից, իսկ վերջինիս ղուգահեռն էլ՝ Ս. Բարսեղի կենսագրության մեջ: Հեղինակը գտնում է, որ «Դաշանց թղթում» խոսվում է հայոց գլխին ապագայում գալիք փորձությունների, Կոստանդին կայսեր ժառանգներից նրանց հասնելիք օգնություն և փրկություն մասին: Համարելով աղբյուրը հետագա դարերի ստեղծագործություն, նա չի ժխտում գրանում վաղ շրջանի հետքերի առկայությունը: Անդրագառնալով Կիրակոս Գանձակեցու պատմական երկին, Գ. Ուլուհոջյանը ցույց է տալիս, որ նրանում «Դաշանց թղթից» բառացի մեջբերումներ կան:

Գ. Ուլուհոջյանը ցույց է տալիս, որ XII-XIII դդ. Կիլիկիայի հայկական պետությունը Հռոմի հետ գիվանագիտական սերտ հարաբերություններ էր հաստատել: Նրա կարծիքով XII դ. հայ-հռոմեական եկեղեցիների միությունը հարցն առաջնահերթ էր դարձել, նա համոզված էր, որ եկեղեցիների միությունը ձգտում էին ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Գրիգոր Ապիրատը, ներսես Լամբրոնացին, թեև, ըստ մեզ, այդ «ձգտումները» հրեություն էին:

«Դաշանց թղթի» նորագույն հետազոտությունը պատկանում է Մանյա (Լյունա) Շիրինյանի գրչին: Իր «Թուղթ սիրո և միաբանության» Հռոմի և Հայաստանի միջև. Խաչակրաց շրջանից կեղծիքի մի օրինակ»³⁵ ընդարձակ հոդվածում հեղինակը նախ և առաջ անգրագառնում է աղբյուրի ստեղծման ժամանակին, ցույց տալիս, որ թեև դրա առաջին հրատարակության մեջ (չդիտես ինչի հիման վրա) այն գրված է համարվում 316 թ., ուսումնասիրողները համամիտ են, որ դա կեղծիք է, հավանաբար գրված XI-XIII դդ., կիլիկյան միաբանական միջավայրում: Այդ կարծիքը նա, իմիջիայնոց, հաստատում է «Դաշանց թղթում» հայոց արքայի Կոստանդինի կողմից «Ֆրեր» (եղբայր) անվանված լինելու փաստով: «Թերևս միայն «Ֆրեր» ֆրանսերեն բառը, — գրում է նա, — որը միակը է այս տեքստում, բավական է դրություն ուղ ժամանակի մասին գաղափար կազմելու համար»³⁶:

Մ. Շիրինյանը համանման բովանդակություն է նկատում «Դաշանց թղթի» և մի այլ «կեղծ փաստաթղթի»՝ Donatio Constantini-ի մեջ, չնայած վերջինում հայկական նյութը բացակայում է: Նա «Դաշանց թղթում» տեսնում է Հռոմի առաջնությունը փառաբանելու դադափարը, գտնում, որ

³⁵ M. E. S h i r i n i a n. "The Letter of Love and Concord" between Rome and Armenia. A Case of Forgery from the Crusaders Period. *Orientalia Lovaniensia Analecta*, 125. East and West in the Crusader States, Context -Contacts -Confrontations, III, edited by K. Ciggaar and H. Teule, Leuven, 2003, p. 79-99. Այստեղ մեր պարտք ենք համարում խորին շնորհակալություն հայտնել հոգվածազիրին իր, ինչպես և Թոմսոնի և Գ. Ուլուհոջյանի մեզ համար ոչմատչելի հոդվածների առանձնատիպերը տրամադրելու համար:

³⁶ Նույն տեղում, էջ 85:

այդ երկու «կեղծ գրվածքների նպատակն էր ապացուցել, որ կազմված են IV դարի սկզբում»³⁷:

Մ. Շիրինյանը «Դաշանց Թղթի» բովանդակությունը համարում է Արթուրյան «Պատմություն» համապատասխան հատվածի «ավելի ճշմարտացի» տարբերակը, առաջինում նկատելով Հռոմի պապի ավելի շեշտված փառաբանությունը: Երկար տարիներ մանրակրկիտ ուսումնասիրած լինելով «Վարք Սեղբեստրոսի» խորագիրը կրող աղբյուրը, նա համոզիչ կերպով ցույց է տալիս այն ակնհայտ աղբյուրները, որ առկա են այդ երկու աղբյուրների միջև, որ «Դաշանց Թղթի» հեղինակը օգտվել է թե՛ Սեղբեստրոսի Վարքի հունարեն բնագրից, թե՛ Donatio Constantini-ից:

Մ. Շիրինյանը եզրակացնում է, որ «Դաշանց Թղթի» քննությունը պետք է տարվի ոչ միայն հայկական աղբյուրների շրջանակում, այլ ավելի լայն համատեքստում, ներգրավելով այլ կեղծ գրվածքներ ևս»³⁸: Հեղինակը անտարակուսա ճիշտ է այն հարցում, որ պետք է ներգրավել օտար աղբյուրներ, բայց ինչպես կտեսնենք ստորև, շատ ավելի մեծ օգուտ են տալիս ոչ թե կեղծ, այլ ճշմարտախոս, վստահելի գրվածքները: Հոդվածագիրը Եվսեբիոս Կեսարացու այն տվյալների հիման վրա, համաձայն որոնց, օտարերկրացի վեհապետների այցելությունները կայսեր մոտ լինում էին, չի բացառում, որ հայ բարձրաստիճան անձանց այցելությունները Հռոմ նույնպես տեղի էին ունենում: Ուստի «այնուամենայնիվ արդարացի է մտածել, որ այս ավանդության մեջ հենքը վավերական է; և չորրորդ դարի սկզբի Տրդատ Թագավորի և Գրիգոր Լուսավորչի այցը Հռոմ պատմական տեղեկություն է»³⁹:

* * *

Բոլոր ուսումնասիրողները, ովքեր «Դաշանց Թուղթը» համարում են սկզբից-մինչև վերջ կեղծիք, կատարված «լատինամոլ», «լատինասեր», անգամ-ունիթոնական կողմնորոշում ունեցող անձի կողմից, շեշտը դնում են աղբյուրի այն տեղերի վրա, որոնցում գերադասվում է հոմեոկան կայսրը, իրենց կարծիքով ընդգծվում Հռոմի պապի գերակայությունը, ձգտում են հայոց եկեղեցին՝ ենթարկելու Հռոմին, մի խոսքով հայերին կաթոլիկացնելու մեջ: Նրանք նման խնդիր չեն տեսնում «Դաշանց Թղթի» այն հատվածներում, որոնք հակառակն են փաստում, շատ բարձր դիրք հատկացնում հայոց Թագավորին ու եկեղեցուն, եթե անգամ նկատում են, դա համարում են սոսկ կեղծիք, մի բան, որ իրականում այդպես չէ:

Ա) «Դաշանց Թուղթը» լատինամե՞տ է, թե՞ հայամետ

Այստեղ պարտավոր ենք նախ նշել «Դաշանց Թղթի» Հռոմի «օգտին» վկայող տվյալները: Նախ՝ քաղաքական հարցում.

1) «Ինքնակալ և մշտապաղթ կայսր Կոստանդինոս մեծ և օգոստոսափառ Թագաւորաց Թագաւոր» (։լ 11-12):

³⁷ Նույն տեղում, էջ 79:

³⁸ Նույն տեղում, էջ 87:

³⁹ Նույն տեղում, էջ 92:

2) «Տիեզերատարած և աշխարհածառալ, խրոխտ և անխոնարհելի իշխանութիւն Հռովմայեցւոց» (էջ 12):

3) «զՏրդատ յԱրևելս կացուցաք (Կոստանդինոս կայսրը – Հ. Բ.) իշխել տիրաբար բոլոր աշխարհիս» (էջ 16):

4) Հայոց «փրկութիւն ի Տեառնէ եղիցի և օգնութիւն յազգատոհմէ իմմէ (Կոստանդին կայսեր – Հ. Բ.): Բայց այս եղիցի ի ժամանակս յետինս»: (էջ 19):

Այսքանը հռոմայեցիները կայսրի և հռոմայեցիների մասին:

Առաջին և երկրորդ կետերը համապատասխանում են իրականության: Այդպիսին էր, գոնե իրենք հռոմայեցիներն այգպիսին էին համարում իրենց կայսրութիւնն ու սեփական կայսրին: Չորրորդ կետը ևս համապատասխանում է իրականության: Խաչակրաց արշավանքների սկզբնական շրջանում օտարի լծի տակ հեծող հայ ժողովուրդը փրկության հույսեր էր կապում Արևմուտքից արշավող քրիստոնյա ասպետների ու թագավորների հետ: Խաչակիրները, գրում է Մատթեոս Ուռհայեցին, «գային յօգնութիւն քրիստոնէից և առ փրկել յայլազգեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ և աղատել ի Տաճկաց զսուրբ Գերեզմանն աստուածընկալ»⁴⁰:

Երրորդ կետում ասվածը, որ ոմանք համարում են Հռոմեական կայսրության կողմից ոսնձգութիւն հայոց անկախ պետականության դեմ, ունի իր բացատրութիւնը: 298 թ. Արշակունյաց Հայաստանն ընկել էր Հռոմի աղղեցության տակ: «Սասանյանների կողմից ցնցված հայ Արշակունիների դահը հռոմայեցիների օգնությամբ նորից վերականգնվեց Մեծ Հայքում: Այդ ժամանակվանից սկսած՝ Հայաստանն ընկավ կայսրերի քաղաքական աղղեցության տակ կամ, ինչպես պատմագիրն է արտահայտվում (Ամմիանոս Մարկելինոսը – Հ. Բ.), գարձավ *juri Romano obnoxia* և սկսեց օգտվել նրանց հովանավորութիւնից»⁴¹:

Անցնենք «Դաշանց Թղթում» Հռոմի պապի մասին ասվածին:

1) «Ստորագրեցաւ Հրովարտակս հրամանաւ իմով մեծի Պապուս Հռովմայեցւոց Եւսեբիոսի, որ և Սեղբեստրոս, աթոռակալ գլխաւորաց Առաքելոցս Պետրոսի և Պօղոսի, որ երկնաւոր և երկրաւոր բանալեօքս ունիմ իշխանութիւն յԱրևմտից մինչև յԱրևելս ի վերայ ամենայն աղգաց և աղանց և լիզուաց քրիստոսադաւանից, կապօղ և արձակօղ ի յերկինս և յերկրի և հրամանահան հզօր յընդհանուր յեկեղեցիս Քրիստոսի» (էջ 12):

2) «Փոխանորդի նոցա պատուեալ պասլիս»⁴²:

3) «Ես ինքնադուլիս պոտասպապս Սեղբեստրոս և ամենայն աշխարհի» (էջ 24):

Ուսումնասիրողների համար գայթակղության քար է դարձել Սեղբեստրոս պապի «ուսնիմ իշխանութիւն յԱրևմտից մինչև յԱրևելս» հայտարարութիւնը, որ իբր «Արևելքի» տակ ենթադրվում է նաև Հայաստանը,

⁴⁰ Մատթեոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 254:

⁴¹ Ն. Ա. դ. ո. ն. ց. Հայաստանը Հռոմի տիրանոսի ժամանակաշրջանում: Քաղաքական կացութիւնը ըստ նախարարական կարգերի (ռուս. թարգմ. Ա. Թ. Խոնդկարյանը). Երևան, 1987, էջ 103-104:

Այսինքն Պետրոս և Պողոս Առաքյալների: Այսպես է ըստ «Դաշանց Թղթի» 1709 թ. հրատարակության: Կ. Շահնազարյանցի հրատարակած բնագրում «Փոխանորդի Աստուծոյ» (էջ 12):

ուստի Հռոմի պապը ոտնձգությունն է կատարում հայոց անկախ եկեղեցու նկատմամբ, անտեսելով հենց «Դաշանց Թղթում» դրվածը, որի համաձայն Սեղբեստրոս պապը գրել է ընդհանրական հրովարտականեր «առ Աւետարանչացն աթոռակալ պատրիարքունս որ յԱրևելս», այսինքն՝ Անտիոքի, Երուսաղեմի և Ալեքսանդրիայի: Գայթակղության քար է նաև նույն պապի հայտարարությունը, թե նա հանդիսանում է «հրամանահան հզոր յընդհանուր յեկեղեցիս Քրիստոսի», որի տակ ուսումնասիրողները ներառում են և հայոց եկեղեցին: Բայց դա իրականությանը չի համապատասխանում: «Արևելք» ասելով նա նկատի ունի Արևելքի երեք պատրիարքությունները՝ Անտիոքի, Երուսաղեմի և Ալեքսանդրիայի, իսկ «յընդհանուր յեկեղեցիս Քրիստոսի» դա ամենևին էլ չի նշանակում համայն աշխարհի եկեղեցիներ: «Ընդհանուր» բառը հունարեն καθολική - կաթողիկե բառի հայերեն թարգմանությունն է: Ուստի «ընդհանուր եկեղեցի» նշանակում է կաթոլիկ դավանություն հռոմեադավան (հարկավ ոչ IV դ.) աշխարհը: Բայց իրականությունն է՝, որ տիեզերական եկեղեցիների շարքում (Հռոմ, Կոստանդնուպոլիս, Անտիոք, Երուսաղեմ, Ալեքսանդրիա) Հռոմի եկեղեցին և նրա պապը, մինչ Փոստ պատրիարքի կողմից հարաբերությունների խզումը (սքիզմա) և Հռոմի եկեղեցու հեղեմոնիայից բյուզանդական եկեղեցու ձերբազատումը, առաջինն էր համարվում (տե՛ս տիեզերական ժողովների կանոնները): Փոտը 867 թ. վճռականորեն մերժեց Հռոմի պապի առաջնությունը⁴³:

Այժմ անդրադառնանք «Դաշանց Թղթի» հայոց «օգտին» վկայող փաստերին: Նախ և առաջ քաղաքական հարցին, այն է՝ հայոց սլետականության ու նրա վեհապետի:

1) Արշակունյաց (ինքնըստինքյան նաև Տրդատի) «աշխարհակալ և տիեզերասաստ արքայից արքայութիւն» (էջ 12):

2) «Եւ եկեալ ի պաղատն պանծալի բազմեցաք. արքայքս (Տրդատն ու Կոստանդինը – Հ. Բ.) ի միում բարձրաբերձ բազմականի» (էջ 13):

3) «Բազկակից եղբայր մեր (Կոստանդին Մեծի – Հ. Բ.) Տրդատ արքայ» (էջ 14):

4) «Թագաւոր և իշխան միահեծան, զմեծ արքայն Տրդատէս, զհամամիտ և համակարի եղբայրն իմ և զբազկակից բարեկամն, ... հրամանահան հզոր առ հասարակ ծովու և ցամաքի» (էջ 15-16):

5) «Կայսերակեսլին Տրդատայ» (էջ 16):

6) «Երկրորդի թագաւորութեան իմոյ Տրդատայ արևելեան ահեղանշան թագաւորի: Զի որպէս մեք յԱրևմուտս տիրեմք բոլոր աշխարհիս, նոյնպէս և Տրդատ յԱրևելս կացուցաք իշխել աիրաբար բոլոր աշխարհիս» (էջ 16):

7) «Մեք (Կոստանդինը – Հ. Բ.) սլսակեցաք զմեծ արքայն Տրդատ կայսերական թագիւ, ... աւժտեցաք զսա կայսերական և զինուորական զարդուք և զինուք մերովք» (էջ 16-17):

8) «Աստուածարեալ Սուրբ արքայն Տրդատ» (էջ 29):

9) «Տրդատն կայսերակերպ» (էջ 26):

⁴³ G. O s t r o g o r s k y. Histoire de l'Etat Byzantin. Paris, 1956, p. 259.

Անցնենք Հայոց եկեղեցուն և նրա հոգևոր առաջնորդին՝ կաթողիկոս Գրիգոր Լուսավորչին նվիրված տողերին:

1) Սեղբեստրոս պապի բնութագրմամբ «Կենդանի վկայն Քրիստոսի և մեծ խոստովանողն, սրբազնակատար կաթողիկոսն Տէր Սուրբ Գրիգորիոս, Լուսաւորիչն ամենայն Արևելից և Հիւսիսոյ» (էջ 12), որ, ոչ ավելի ոչ պակաս, Կոստանդին Մեծ կայսրը «եկն ահիւ մեծաւ առաջի Սուրբ Լուսաւորչին և ի ծունկս իջեալ համբուրեաց զբարձս նորա ըստ օրինի օֆրանդի: Եւ ապա համարձակեալ համբուրեաց զաջն և զխաչն և ապա զդէման իբրև ի նոյն ինքն Քրիստոս» (էջ 26):

2) Կոստանդին կայսրը, դիմելով Լուսավորչին, ասում է. «Ո՛վ երանելիութիւն ի հարս սուրբ հայրապետ ... աղաչեմք զքեզ սիւնդ անասանելի ամենայն աշխարհի՝ ուսո՛ մեզ զհաւատոյս մեր դաւանութիւն և աղօթեա՛ վասն ամենայն աշխարհի և առաւել վասն մերոյ թագաւորութեանս, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զտիեզերական իշխանութիւնս» (էջ 26):

3) «Ամենայն թագաւորք և իշխանք և եկեղեցականք՝ Հայք և Հռոմայեցիք անկանէին առ ոտս Սրբոյն Գրիգորի և խնդրէին թողութիւն մեղաց իւրեանց» (էջ 26):

4) Սեղբեստրոս սրապը Լուսավորչին է նվիրում Տեառնեղբայրից իրեն հասած «վախար», ապա իր «միթրը», «որ էր փակեղն Յիսուսի», և այլ շատ բազմարժեք բաներ (էջ 27):

5) «Եւ եկեալ ի սաղատն սլանծալի բազմեցաք ... հայրապետքս (Լուսավորիչն ու Սեղբեստրոսը – Հ. Բ.) ի միում դերահրաչ գահաւորակի» (էջ 13):

6) «Առաքեցի ես (Սեղբեստրոսը – Հ. Բ.) և ժողովեցի զամենայն խեղս, և զկաղս և զկոյրս, զմիակողմանիս և զանդամալոյծս և զայլս ամենայն, որ նեղեալ էին ի սէսպէս ցաւս և ի տանջանս, և զայսսլիսիս ժողովեալ հանի զնոսա ամենեսեան ընդդէմ Սրբոյն Գրիգորի, զորս միանգամ աղօթիւք բժշկեաց զամենեսեան» (էջ 19):

7) «Զի հաւատամ (պապը – Հ. Բ.) ճշմարտութեամբ եթէ չորք սիւն են յաշխարհիս ի մերում ժամանակիս՝ Սուրբն Սեղբեստրոս յԱրևմուտս և Սուրբն Գրիգորիոս յԱրևելս ...» (էջ 23):

8) «Եւ ես (պապը) յօժարեցայ ի պատուել զմեծ խոստովանողն Քրիստոսի զգահակիցս իմ զԳրիգորիոս» (էջ 24):

9) «Ձեռնադրեցաք զԿաթողիկոսն Հայոց զՍուրբն Գրիգոր՝ սլապ և սլատրիարք և հայրապետ հրամանտհան ի տիեղբերական ժողովս, համալատիւ մեր հլօր աթոռոյս, և Երուսաղէմացոց և Անտիօքացոց և Աղէքսանդրացոց ... և արարաք զսա Պատրիարք Հայոց Մեծաց. զի ինքն և ամենայն աթոռաժառանգք սորա ինքնադուլս եղիցին՝ յիւրեանց եպիսկոպոսացն առնելով ձեռնադրութիւն առաջարկութեամբ իւրեանց թագաւորին: Եւ Հայոց հայրապետն ձեռնադրէ կաթողիկոս Վրաց աշխարհին ... Եւ ուր և Հայ աղգ սփռեալք յընդհանուր աշխարհ ի մէջ այլալեզու քրիստոնէից, իշխանութիւն ունի Հայոց սլատրիարքն ձեռնադրել նոցա եպիսկոպոս. ևս և աշխարհն Աղուանից եղիցի ընդ հնազանդութեամբ Հայոց հայրապետին. և առաջարկութեամբ Աղվանից թագաւորին Հայրապետն Հայոց ձեռնադրեսցէ կաթողիկոս նոցա. և սլատրիարքքն երեքին՝ Երուսաղէմի և Անտիոքի»:

քայ և Աղեքսանդրիոյ յորժամ պատրիարք ձեռնադրին՝ կամաւ և ընտրութեամբ Հայոց հայրապետին լիցի, և որ ոք նոր նստցի յաթոռ պատրիարքութեան, գղաւանութիւն հաւատոյն իւրոյ, զոր պարտ էր մեզ (Հռոմի պապին — Հ. Բ.) ծանուցանել՝ զայն Հայոց հայրապետին ծանուցցէ. զի զնա կարգեցաք մեզ գլխափոխան և հրամանահան ի վերայ ամենայն ասիական միջնաշխարհի» (էջ 25):

10) «Գրեցի հրովարտակս ընդհանրականս առ Աւետարանչացն աթոռակալ պատրիարքունս, որ յԱրևելս զի զՀայոց հայրապետն համապատիւ տեսցեն ինքեանց մանաւանդ թէ և նախագահ իսկ. վասն զի յերկոտասան Առաքելոցն չորքն անդ կատարեցան» (էջ 27):

11) «Յետ մեր վեհագոյն հրամանացս Հայոց հայրապետին կայ իշխանութիւն, զոր ինչ և կամեսցի ըստ առաքելական կանոնացն կապել և արձակել ի յերկինս և յերկրի» (էջ 28-29):

12) «Եւ հրաման հանէ Հայոց հայրապետն ի Հայս և ի Հոռոմս, ի Վիրս և յԱղվանս, յԱսորիս և ի Պարսս ի ծովէ ի ծով և ի գետոց մինչև ի ծագս աշխարհի և ի դրուսս Դրախտին» (էջ 30):

Չզինված աչքով անգամ ականջայտ է, որ համեմատութիւններ ավելի քան «հօգուտ» հայոց է:

Վերևում անդրադարձանք Սեղբեստրոս պապի այն հայտարարութիւնը, թե «ունիմ իշխանութիւն յԱրևմտից մինչև յԱրևելս ի վերայ ամենայն ազգաց և ազանց քրիստոսագաւանից, կապօզ և արձակօզ ի յերկինս և յերկրի և հրամանահան հօր յընդհանուր յեկեղեցիս Քրիստոսի»: Այստեղ կրկնենք, որ սրա մեջ հայերիս ներառելը սխալ է, քանզի հենց «Դաշանց թղթում» Հռոմի Սեղբեստրոս պապը Գրիգոր Լուսավորչին նախ որակում է «Լուսաւորիչ ամենայն Արևելից և Հիւսիսոյ», իր ժամանակի եկեղեցու չորս սյուններից Արևմուտքինը համարում է իրենը, բայց Արևելքինը Գրիգոր Լուսավորչին «Սուրբ Սեղբեստրոս յԱրևմուտս և Սուրբն Գրիգորիոս յԱրևելս», Լուսավորչին համարում է իր «զահակիցը», «համապատիւ մեր հօր աթոռոյս, և Երուսաղէմացուց և Անտիօքացուց և Աղէքսանդրացուց» (էջ 24-25), որոնց պատրիարքները պիտի ձեռնադրվեն «կամաւ և ընտրութեամբ Հայոց հայրապետին» (էջ 25), հենց նրան սլիտի իրենց հավատողականութիւնը ծանուցանեն, քանզի սլապը հենց հայոց կաթողիկոսին է կարգում իր «գլխափոխան և հրամանահան ի վերայ ամենայն ասիական միջնաշխարհի» (էջ 25): Կաթողիկոսն «ինքնագլուխ» է, ձեռնադրվում է հայոց թագավորի առաջարկութեամբ հայոց եպիսկոպոսների կողմից: Ուստի «Արևելքի» տակ, ինչպես ասվեց վերևում, պիտի հասկանալ Մերձավոր Արևելքի երեք լատին պատրիարքութիւնները՝ Երուսաղեմի, Անտիօքի և Ալեքսանդրիայի: Չսխալ է մեզ խրտնեցնի ասվածը, թե սլապը հայոց կաթողիկոսին իր «գլխափոխան» է կարգում, դա ևս ունի իր բացատրութիւնը, ինչպես կտեսնենք ստորև:

Այսպիսով, պնդումն այն մասին, թե «Դաշանց թուղթ»-ը կազմող «անձնավորութիւնը» ունի թոռական հայացքներ ունի, ընդգծում է Հռոմի սլապի գերակայութիւնը նաև հայոց եկեղեցու վրա, որ անգամ համողված է, որ փաստաթղթում խոսքը վերաբերում է երկու եկեղեցիների միութեան:

ներ, ընդ որում ի վնաս Հայոց եկեղեցու ինքնուրույնություն, քննադատության չի դիմանում:

Մի հետևանքն զնացող նպատակադրված կեղծիք է նաև հետևյալը. իբրև թե Սևղբեսարոս պապը դրեց «հրովարտակս ընդհանրականս առ Աւետարանչացն աթոռակալ պատրիարքունս, որ յԱրևելս, զի Հայոց Հայրապետին Համապատիւ տեսցեն ինքեանց, մանաւանդ թէ և նախագահ իսկ վասն զի յերկոտասան Առաքելոցն չորքն անդ կատարեցան» (էջ 28):

Կրկնենք. «Արևելք» ասելով, պապը նկատի ունի Արևելքի երեք պատրիարքությունները՝ Անտիոքի, Երուսաղեմի և Ալեքսանդրիայի: Բայց ինչու՞ է ընդգծում առաքյալներ չորս թիվը: Եթե չորսն են, բայց առկա են երեք պատրիարքություններ, ապա չորրորդը ո՞րն է: Պարզ չէ՞, որ Գրիգոր Լուսավորչին, այսինքն՝ Կիլիկիայի թագավորությունում հաստատված Ամենայն Հայոց կաթողիկոսությունը: Լռելյայն չի՞ ենթադրվում, որ «Դաշանց թղթի» կեղծիքի մասում Գրիգոր Լուսավորիչը հանդես է գալիս որպես չորրորդ «Աւետարանիչ», որին, ըստ Սեղբեսարոսի, պիտի ոչ միայն «Համապատիւ» համարեն իրեն ենթակա Հռոմի, Երուսաղեմացվոց, Անտիոքացվոց և Աղեքսանդրացվոց աթոռները, իսկ վերջին երեքը «մանաւանդ թէ և նախագահ իսկ», այսինքն՝ *primus inter pares*:

Բ) Մե՞կ աղբյուր, թե՞ երկու

Ուսումնասիրողները «Դաշանց թուղթը» մեզ հասած տեսքով համարում են մի ամբողջություն, ստեղծված XI-XIII դդ., որը և բնութագրվում է որպես «կեղծիք»: Մեր դիտարկումները, սակայն, հանդեցրել են այլ եզրակացություն, որ մեր ձեռքում երկու աղբյուր կա, մեկը ստույգ, մյուսը՝ դրա վրա կառուցված, որոշակի նստատակներ հետապնդող կեղծիք:

Իրական է Տրդատ-Մեծն Կոստանդին գաղիները: Դրա գոյություն մասին, ինչպես առանձին ուսումնասիրողներ ցույց են տվել, վկայում է V դ. Հայ մատենագիրներից Ջենոբ Գլակը: Նրա ասելով, Տրդատ արքան, իմանալով թե Կոստանդին կայսրը «հաւատաց ի Քրիստոս», զնաց կայսեր մոտ՝ Հռոմ «վասն դնելոյ դաշինս խաղաղութեան ի միջի»⁴⁴: Այդ մասին գրում է և Մովսես Խորենացին. «Ընդ հանդէն Շապհոյ արքայի Պարսից ի պատերազմացն, և ի դնալն Տրդատայ ի Հռոմ առ սուրբն Կոստանդինոս»⁴⁵: Ինչպես ժամանակին ցույց է տվել Կ. Շահնազարյանցը, դեպքերին մոտիկ կանգնած պատմիչները չգիտեն, որ Տրդատի հետ Հռոմ զնաց և Գրիգոր Լուսավորիչը, որ նրան, բացի Կոստանդինից, ընդունեց և Սեղբեսարոս պապը: Բերելով Խորենացու նշած մի այլ փաստ՝ Վրթանես կաթողիկոսի (333-341) նամակը Մեծն Կոստանդինի որդի Կոստանդ կայսեր, որտեղ հիշվում է Կոստանդին Տրդատ «սլայման ուխտին», հեղինակն անորոշ ենթադրում

⁴⁴ Պատմութիւն Տարօնոյ զոր թարգմանեաց Ջենոբ Ասորի. Վենետիկ, 1899, էջ 40:

⁴⁵ Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց (այսուհետեւ՝ ի ն ո բ ն ա ց ի). Տիգրիս, 1913, էջ 227: Դեռ հարց է, Մովսես Խորենացին այստեղ «Հռոմ» ասելով քաղաքը նկատի ունի, թե՞ Հռոմեական կայսրությունը: Բացառված չէ, թե կայսրությունը: Նա մի փոքր առաջ գրել էր. «Փեսայանայով նմա Կոստանդինոսի կեսարի որդւոյ Կոստայ թագաւորին Հռոմայ» (էջ 226): Կոստանդին Քլորոսը Հռոմ քաղաքի «թագավորը» չէր, այլ Հռոմեական կայսրության, բացի այդ նրա նստավայրը Հռոմում չէր, այլ Տրիրում:

է, որ գոյութիւնն է ունեցել «քաղաքական դաշնադրութիւնն մը Կոստանտինոսի և Տրգատա մեջ»: Նա փորձում է որոշել այդ «քաղաքական դաշնադրութեան» պայմանները, որ պիտի լինեն, 1) «Հայոց Տերութիւնը տարեկան հարկ մը տար Հռոմայեցիոց», 2) «անոնք ալ իրենց զորքովը պաշտպանեն Հայաստանը Պարսից դեմ» (էջ 67): Նա նկատի ունի ինորենացու «Պատմութեան» մեջ բերված Վրթանեսի նամակի պատճենը, և ոչ «Դաշանց Թղթում» հիշատակվածը: Նամակում ասվում է. «Եպիսկոպոսապետ Վրթանէս և որք ընդ նովաւ եպիսկոպոսունք և ամենայն նախարարք Հայոց Մեծաց. տեսուն մերոյ Կոստանդեայ կայսեր ինքնակալի խնդալ: Յուշ լինի քեզ պայման ուխտի հօրն քո Կոստանդիանոսի, որ առ մերում թագաւորին Տրգատայ. և մի՛ տացես զաշխարհս քո Պարսից անաստուածից, այլ օգնեսցես մեզ զօրօք՝ թագաւորացուցանել զորդի Տրգատայ զԽոսրով... Այսմ լսող եղեալ Կոստանդեայ՝ առաքեաց զԱնտիոքոս յարդարիչ իւրոյ պալատանն զօրու ծանու, և ծիրանիս Հանդերձ պսակաւ և թուղթ՝ որ ունէր օրինակ զայս. Աւգոստոս ինքնակալ կայսր Կոստանդոս, մեծիդ Վրթանիսի և ամենայն աշխարհականաց քոց խնդալ: Առաքեցի ձեզ զօր յօղնականութիւն, և հրաման թագաւորացուցանել ձեզ զԽոսրով որդի արքայի ձերոյ Տրգատայ. որպէս զի ի բարեկարգութիւն Հաստատեալ, մեզ ծառայեսցիք միամտութեամբ: Ողջ լերուք»⁴⁶:

Տասներորդ և հետագա դարերի հայ հեղինակների գործերում հանդիպող Տրգատ արքայի հետ Հուսսավորչի Հռոմ գնալու և Սեղբեստրոսին հանդիպելու վկայութիւնները Կ. Շահնազարյանը համարում է անարժեք:

Այսպիսով, մեր ձեռքի տակ կա երկու աղբյուր. Տրգատ-Կոստանդին պայմանագիրը և մեր համոզմամբ՝ XIII դ. կեղծիքը:

Գ) Որտե՞ղ և ե՞րբ է կնքվել դաշինքը

Թվում է՝ այստեղ հարց չպիտի գոյութիւնն ունենա. իհարկե Հռոմում: Տրգատ թագավորը և Գրիգոր Հուսսավորչի իրենց ստվարաթիվ թափորով «ժամանեցին ի տեսութիւն տեղւոյս տէրունական տանս արևմտեան և արևելաժառանգ սրբոց և գլխաւորաց Առաքելոցս, և փոխանորդի Աստուծոյ պատուեալ պապիս» (էջ 12) Սեղբեստրոսի⁴⁷:

Մի կարևոր (և հիմնական) փաստի վրա (որ, ինչպես կտեսնենք ստորև, առանձին ուսումնասիրողներ նկատի ունեցել են) պիտի անպայման կանգ առնել: Նշենք, որ այն մասնագետները, ովքեր ընդունում էին Տրգատ արքայի և Գրիգոր Հուսսավորչի Հռոմ ճանապարհորդած լինելը, ուշադրութիւն չէին դարձնում այն հանգամանքի վրա, որ Դիոկլետիանոսը, ելնելով այն փաստից, որ կայսրութեան հսկայածավալ տարածքը մեկ կենտրոնից (Հռոմից) կառավարելը դարձել էր անհնարին, ստեղծեց այսպես կոչված տետրարքիան՝ քառապետութիւնը, չորս կայսրերի կառավարումը: Գահակալութեան սկզբում Դիոկլետիանոսը կառավարչակից ընտրեց Մաքսի-

⁴⁶ Նույն տեղում, էջ 261:

⁴⁷ 1709 թ. հրատարակութեան մեջ՝ «և փոխանորդի նոցա (Առաքելոց – Հ. Բ.) պատուելի պապիս» (էջ 411):

միանոսին: Դիոկլետիանոսն ու Մաքսիմիանոսը կրում էին Օգոստոս տիտղոսը (286 թ.): 293 թ. երկու կայսրերը իրենց համար նշանակեցին կառավարչակազմներ, որոնք կոչվեցին կեսարներ: Կայսրություն արևելյան մասի համար, որը կառավարում էր ինքը՝ Դիոկլետիանոսը, կառավարչակազմը ընտրեց Գայիոս Գալերիոս Վալերիոս Մաքսիմիանոսին, իսկ Արևմուտքի Օգոստոս Մաքսիմիանոսը կեսար նշանակեց Գայիոս Փլավիոս Վալերիոս Կոստանդին Քլորոսին (Կոստանդին Մեծի հորը): Յուրաքանչյուր կառավարիչ օժտված էր կայսերական ողջ իշխանությունով, թեև կեսարները ավելի ցածր էին համարվում, քան օգոստոսները: Ահա իշխանության Դիոկլետիանոսի և Մաքսիմիանոսի միջև բաժանումից հետո փաստորեն սկիզբ առավ Հռոմեական կայսրության Արևելքի և Արևմուտքի բաժանումը⁴⁸:

Կայսրերից և ոչ մեկը Հռոմը չդարձրեց իր աթոռանիստը: Դիոկլետիանոսը իր նստավայր էր դարձրել Բյուզանդիայի Նիկոմեդիան, Գայիոս Գալերիոսը՝ Սիրմիոնը: Ստորին Պանոնիայում, Սավա դետի ձախ ափին, Մաքսիմիանոսը՝ Մեդիոլանը (Միլան), ապա Ռավեննան, իսկ Կոստանդին Քլորոսը՝ Տրիրը: «Հավիտենական Հռոմը» (Roma aeterna), թեև նախկինի պես համարվում էր կայսրության մայրաքաղաքը, կայսեր նստավայր չէր և կորցրել էր իր վաղեմի քաղաքական նշանակությունը⁴⁹: 305 թ. մայիսի 1-ին Դիոկլետիանոսը Նիկոմեդիայում, իսկ Մաքսիմիանոսը Միլանում հրաժարվեցին իշխանությունից: Օգոստոս հռչակվեցին Գալերիոսն ու Կոստանդին Քլորոսը: Դիոկլետիանոսի տեղը զբաղեցրեց Գալերիոսը: Նա Կոստանդինին (Մեծին) ճանաչեց կեսար⁵⁰, որը շատ չանցած հռչակվեց կայսր՝ Օգոստոս: Հետևաբար Հռոմում չէր նստում և Կոստանդին Քլորոսի որդի Կոստանդին Մեծը, «որդիացեալն Դիոկլետիանոսի», ինչպես գրում է Մովսես Խորենացին⁵¹: Նա մուտք դրածեց «Հավիտենական քաղաքը» Մաքսենտիոսի դեմ Մուլվիոս դետի ափին տարած հաղթանակից հետո 312 թ. հոկտեմբերի 29-ին և այնտեղ մնաց մեկից երեք ամիս: 313 թ. Կոստանդինը հեռացավ Հռոմից և գնաց Մեդիոլանոն (Միլան), ուր հանդիպեց Լիկինիոսին և ամուսնացրեց նրան իր քույր Կոնստանտիայի հետ⁵²: Դրանից հետո Կոստանդինը Հռոմում եղավ երկու անգամ ևս. 315 թ. հուլիսի 18-ից մինչև սեպտեմբերի 27-ը՝ Decennalia-ների (իր իշխանության տասնամյակի սլատվին կաղամակերպված հանդիսությունների առթիվ) և 326 թ. հուլիսի 18-ից մինչև 25-ը՝ Vicennalia-ների (քսանամյակի): 315 թ. Կոստանդին

⁴⁸ Н. А. Машикин. История Древнего Рима. М., 1950, с. 591-592.

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում, էջ 601:

⁵¹ Խորենացի, էջ 226:

⁵² Կոնստանտիան հիշվում է և «Դաշանց Թղթում», որի վկայության համաձայն, Կոստանդին Մեծը իրառավոր ընդունելություն կաղամակերպեց Տրդատ արքայի (և Գրիգոր Լուսավորչի) սլատվին, իսկ նրա կին Մաքսենտեսը (Մաքսիմիան) «և քոյր իմ սքանչելագեղ Կոստանայ սլատրաստեցին ընծայս զարմանազանս, որովք սլակեցի մամբիչն արևելային վայելչափայլ թագուհին, մեծ Աշխէն, և զչքնաղագեղ օրիորդն Հայոց Մեծաց, Խոսրովի-դուխտ» (էջ 17):

Հռոմում գտնվելու ժամանակ Տրդատ III-ի այցելության մասին արևմտյան աղբյուրներում որևէ հիշատակություն չկա⁵³:

Տրդատ III-ի և Կոստանդին Մեծ կայսեր միջև կնքված պայմանագրի գոյությունը որպես կանոն ընդունված է հետազոտողների կողմից: Տարակարծությունները վերաբերում են դրա կնքման վայրին և ժամանակին: Ավելի վաղ հետազոտողներից Բ. Սարգիսյանը որպես դաշինքի կնքման վայր ենթադրում էր կամ Կոստանդնուպոլիսը, կամ Նիկոմեդիան⁵⁴: Նա գրում էր. «Ստուգել Կոստանդինոսի վերոյիշեալ Քսանամեակն՝ կամ Նորոյն Հռովմայ, եւ կամ լաւ եւս Նիկոմիդիոյ մէջ կատարեցաւ, զկնի ժողովոյն Նիկիոյ, ներկայութեամբ իսկ սուրբ Հարց ժողովոյն, զորս մեծապարգև ընծաներով մեծարեց»:

Ա. Տեր-Միքելյանը գտնում է, որ դաշինքը կնքվեց Նիկոմեդիայում 324 թ. վերջին, ելնելով այն փաստից, որ կայսրը Լիկիանոսի դեմ տարած հաղթանակը (324 թ.) հանդիսավոր կերպով նշեց հենց Նիկոմեդիայում⁵⁵:

Հ. Գեյցերը կարծում է, որ դաշինքը կնքվել է Սարգիկայում (Սոֆիա) 314 թ.⁵⁶, իսկ Ֆ. Թուռնըբիլը Կոստանդնուպոլսում կամ հռոմեական Արևելքի մի այլ վայրում⁵⁷: «Արևելքում» 324 թ. կնքված է համարում Հ. Աստուրյանը: Նա գրում է. «Որչափ անստույգ է ճանապարհորդությունը դեպի Հռովմ, նույնքան վավեր է դաշինքը Տրդատա և Կոստանդինոսի մեջ... Հայոց համար այդ ժամանակ հռովմեական պետություն կեղծոն էր Անտիոք և Նիկոմիդիա. ինծի շատ ավելի բնական և հավանական կը տեսնվի, որ այս դաշինքը 324-ին և այն՝ Արևելք կնքված ըլլա, երբ Կոստանդին Լիկիոսի վրա տարած հաղթությամբ բովանդակ Արևելքի և Արևմուտքի միակ տերը դարձավ... Այս դաշինքով մեկ կողմը ինքզինքը կը պարտավորեր Հայաստանը ընդդեմ Պարսից պաշտպանել, իսկ մյուսը կխոստանար իր ավատական վերաբերությունց մեջ հավատարիմ մնալ Հռովմա»⁵⁸:

Վ. Էնսլինը վճռականորեն անհիմն է համարում այն ենթադրությունը, թե Տրդատն ու Գրիգոր Լուսավորիչը ճանապարհորդել են Հռոմ, բայց և ընդունում, որ 314 թ. հնարավոր է, որ պայմանագիր կնքվել է⁵⁹:

⁵³ M a r i e - L o u i s e C h a u m o n t. Une visite du roi d' Arménie Tiridate III à l' Empereur Constantin à Rome ? L' Arménie et Byzance. Histoire et Culture. 12, Paris 1996, p. 60-61.

⁵⁴ Աղաթոնգեղոս և իւր բազմադարեան դաղանիքն (քննադատութիւն Հ. Բարսեղ վ. Սարգիսեանի ի Մխիթարեան ուրտէն). Վենետիկ, 1890, էջ 259:

⁵⁵ A. T e r M i k e l i a n. Die armenische Kirche in ihren Beziehungen mit den byzantinischen (vom IV. bis zur XIII Jahrhundert). Leipzig. 1892, S. 19-20 (apud: C h a u m o n t. Նշվ. աշխ., էջ 61):

⁵⁶ H. G e l z e r. Die Anfänge der armenischen Kirche. Berichte über Verhandlungen der königlichen sachsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig, Philologische - historische Klasse, 1895, S. 171. Մ.-Լ. Շումոնը ցույց է տալիս, որ փաստ չկա վկայող, թե Կոստանդինը 316 թ. առաջ հաստատված է եղել Սարգիկայում (M.-L. C h a u m o n t. Նշվ. աշխ., էջ 64):

⁵⁷ F. T o u r n e b i z e. Histoire politique et religieuse de l'Arménie. Paris, 1910, p. 55.

⁵⁸ Յ. Ա ս տ ու ռ ե ա ն. Քաղաքական վերաբերություններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190 էն ն.Ք. մինչև 428 յ.Ք., Վենետիկ, 1912, էջ 267:

⁵⁹ Paulys Realencyclopädie der Classischen Altertumwissenschaft, VI A/2, 1937, col. 2249 (apud: C h a u m o n t, Նշվ. աշխ., էջ 60):

Հարցը մանրամասնորեն և հանգամանալից ուսումնասիրվել է Մարի-Լուիզ Շոմոնի կողմից: Խնդրին նվիրված նրա հոդվածը վերնագրված է. «Հայոց արքա Տրդատ III-ի այցելութունը Կոստանդին կայսեր՝ Հռոմ»:⁶⁰ Հարցական նշանը վկայում է, որ հոդվածագիրը կասկածում է, թե Տրդատի այցելութունը տեղի է ունեցել Հռոմ քաղաքում: Նախ և առաջ նա քննում է այն հարցը, թե հիշյալ ժամանակաշրջանում Կոստանդին Մեծի նստավայրը սրտե՞ղ էր դառնում: Որպես պայմանագրի կնքման վայր նշելով Նիկոմեդիան, և ցույց տալով, որ Մեծ Հայքից Բյուզանդիա նահանգի Նիկոմեդիա քաղաքը ճանապարհորդելը և վերադառնալը Հայաստան շատ ավելի հեշտ էր (քան Հռոմ գնալը), նա իսկույն ևեթ հրաժարվում է այդ մտքից: Ելնելով այն փաստից, որ Կոստանդինը 324 թ. սեպտեմբերի 18-ին հալթանակ տանելով Լիկինիոսի դեմ Բրիտոլոսում, այդ առթիվ կազմակերպած հանդիսութուններն իրականացրեց Նիկոմեդիայում, նա այնտեղ էր դառնում 324 թ. վերջին և 325 թ.: Նիկիայի Ա Տրեգերական ժողովից առաջ և հետո, ապա, ըստ հոդվածագրի, այդ թվականները Տրդատ III-ի ճանապարհորդութան համար Հռոմեական կայսրութուն շատ ուշ են: Նա առաջ է քաշում մի նոր վարկած, ցույց տալիս, որ Կոստանդինը 316-ից մինչև 322 թ. «ավելի հաճախ էր մնում Մերձդանուբյան նահանգներում, հատկապես Պանոնիայի Սիրմիոնում և Սարդիկայում (այժմ՝ Սոֆիա)՝ Իլլիրիա նահանգում: Սարդիկան նշելով, նա մեջբերում է անանուն մի հեղինակի. «Կոստանդինը նախապես մտածեց պետութան (կենտրոնը) փոխադրել Սարդիկա: Այդ քաղաքի վրա սիրահարված, նա անընդհատ կրկնում էր. «Իմ Հռոմը Սարդիկան է»⁶⁰: Այսինքն նա չի բացառում, որ Տրդատ-Կոստանդին դաշինքը կնքված լինի հենց Սարդիկայում: Բայց, ինչպես կտեսնենք ստորև, դոյութուն ունի և Եվսերիոս Կեսարացու այն փաստը, համաձայն որի Նիկոմեդիան «իր» (Կոստանդինի) քաղաքն էր: Անանունի նախադասութան միտքը մենք հասկանում ենք այսպես. թե կայսրը նախքան Կոստանդինուպոլիսը (լուս՝ Բյուզանդիոնը) մայրաքաղաք դարձնելը, մտածում էր Սարդիկան դարձնել այդպիսին: Իսկ դա նշանակում է, թե Տրդատ-Կոստանդին պայմանագիրը հնարավոր է, որ կնքված լիներ Սարդիկայում (կամ Մերձդանուբյան շրջանի նահանգներում):

Մ.-Լ. Շոմոնի եզրակացությունը. «Եթե հարցը քննենք օբյեկտիվորեն, ապա պարզ է, թե ե՞րբ և ինչպե՞ս Տրդատը կարող էր ընդունվել Կոստանդինի կողմից Սարդիկայում կամ Մերձդանուբյան նահանգների որևէ կայսերական նստավայրում»: Համարելով դա միանգամայն անհնարին, Շոմոնը, այդուհանդերձ, չի բացառում կայսեր և հայոց արքայի միջև կնքված պայմանագրի վրասուր: Նրա համար անհասկանալի է 314 թ., որ առաջ է քաշվում ուսումնասիրողներից ոմանց կողմից, բայց և խուսափում է իջնել մինչև 324 կամ 325 թ.: Նիկիայի սիեղերական ժողովի սարին, որին նախադասում էր անձամբ կայսրը, երբ, թերևս, հայոց արքայի ներկա-

⁶⁰ Fragmenta Historicorum Graecorum (ed. C. Muller). Paris, 1928, IV, p. 199 - "Οτι Κωνσταντίνος έβουλεύσατο πρώτον έν Σαρδική μεταγαγειν τα δημόσια. φίλωι τε τήι' πόλιι' έκέλιτην συνεχώς έλεγειν „ή έμη' Ρώμη Σαρδική έστιν...". M.-L. C h a u - m o n t. Նշվ. աշխ., էջ 63:

յացուցիչների կողմից հնարավոր էին ղեկավանագիտական կոնտակտները⁶¹: Մ.-Լ. Շոմոնը իր հոդվածն ավարտում է մի շարք ենթադրություններով: Այսպես. Տրդատ III-ի և Կոստանդին կայսեր՝ մի ներկայացուցչության միջև Հռոմում կամ կայսերական որևէ այլ նստավայրում կնքվել է պայմանագիր, որի նպատակը ոչ այլ ինչ էր, քան հաստատումը Հին foedus-ի, Հռանդեայի պայմանագրի (63 թ) պայմանների, որոնց համաձայն Մեծ Հայքն իրենից ներկայացնում էր «խնամառու» պետություն, կամ Հռոմի մի պրոտեկտորատը: Հոդվածագիրը չի բացառում և Տրդատ III-ի Հռոմ կատարած այցելության պատմությունը համարել Տրդատ I-ի այցելության մի վերհուշը: Նա հարց է տալիս նաև, թե արդյոք Հիշյալ ավանդություն տակ թաքնված չէ՞ Տրդատ III-ի Հռոմ այցելությունը կատարված իր գահակալությունից առաջ: Նա հիշում է պարսից արքա Շապուհ I-ի արշավանքը Հայաստան, Տրդատի հոր՝ Խոսրովի պարտությունը և վերջինիս կողմից դեռևս մանկահասակ Տրդատին փախցնելը Հռոմեական կայսրություն: Բոլոր դեպքերում, գրում է Շոմոնը, մի քիչ կասկածելի է, որ հայոց դահի ժառանգորդը իր երկարատև աքսորի մեծ մասը անցկացրած լինի Հռոմում⁶²:

Մ.-Լ. Շոմոնը «Դաշանց թղթին» չի անդրադարձել ամենևին: Այդուհանդերձ Հիշյալ վիճահարույց հարցի առնչությամբ մենք չենք կարող Մովսես Խորենացու «Պատմության» մեջ առկա տեղեկությունների կողքով անցնել: Նախ կրկնենք. հայտնի է, որ Կոստանդին Մեծը, հաղթելով Լիկինիոսին (324), հաղթանակի հանդիսությունները կատարեց Նիկոմեդիայում⁶³: Նա Նիկոմեդիայում նշեց և իր թագավորության քսանամյակը (325), հրավիրելով նաև այլ ազգերի (ΛΟΙΠΟΙΣ ἔΘΝΕΣΙ) մեծամեծներին⁶⁴, հավանաբար և իր «վասալ» Տրդատ արքային: Հարցի վերաբերյալ Հիշատակություն ունի Մովսես Խորենացին: Կոստանդին Մեծը, «Հանդերձ որդու վրա մի թագաւորութիւն զՀռոմայեցւոցն ցուցեալ՝ զքսանամեակն ի Նիկոմիդացւոց քաղաքին կատարեաց»⁶⁵: Հենց նրա թագավորության քսանամյակին էլ, 325 թ., ըստ եվսեբիոս Կեսարացու, գումարվեց և Նիկիայի Ա Տիեզերաժողովը⁶⁶:

Եվսեբիոս Կեսարացին, ինչպես տեսանք վերևում, Նիկոմեդիան համարում է «իր (Կոստանդինի) քաղաք» (τῆν αὐτοῦ πόλιν) և Բյուզանդիա հանգի մայրաքաղաք (τῆν Βεθυσιῶν ἀρχουσαν) (որտեղ և նա վախճանվեց 337 թ. մայիսի 22-ին, իսկ աճյունը տեղափոխվեց Կոստանդնուպոլիս և ամփոփվեց Սրբոց Առաքելոց տաճարում): Շարադրելով Տրդատ արքայի Աշխենի հետ ամուսնության պատմությունը, նա ցույց է տալիս, որ «ընդ նոյն առուրս լինին հարսանիք և Մաքսիմինայ դստերն Դիոկղետիանոսի ի Նիկոմիդայ. փեսայանալով նմա Կոստանդիանոսի կեսարի որդւոյ Կոստայ

⁶¹ M. L. Chaumont. Նշվ. աշխ., էջ 65:

⁶² Նույն տեղում, էջ 66:

⁶³ E. Stein. Histoire du Bas-Empire. T. I, De l'Etat Romain a l'Etat Byzantin (284-476), Paris, 1959, p. 105.

⁶⁴ Eusebii Pamphili Caesareae Palaestinae episcopi De Vita Imp. Constantini, Lib. III, cap. XV. Migne. Patrologia Graeca. T. 20, col. 1072.

⁶⁵ Խորենացի, էջ 237-238:

⁶⁶ Eusebii De Vita Constantini, Lib. IV, cap. XLVII, col. 1197.

(իմա՝ Քլոդիոսի – Ն. Բ.) թագաւորին Հռոմայ... Այս Կոստանդինոս բարեկամայեալ ի Հարսանիսն ընդ Տրդատայ սեր թագաւորի»⁶⁷:

Վերոհիշյալ դեպքի մասին ակնարկ կա և «Դաշանց Թղթում»: Խոսելով Կոստանդին Մեծի՝ Տրդատի (և Գրիգոր Լուսավորչի) պատվին կազմակերպած ընդունելության մասին, աղբյուրում նշվում է. «սլաւատանն իմոյ պատուասիրեցի վսիրեցեալն իմ. ընդ որս և մեծափառ դշխոյս մեր Մաքսինտէս (կարգա՝ Մաքսիմինայ – Ն. Բ.) և քոյր իմ սքանչեւագեղ Կոստասիայ պատարասուցին ընծայս զարմանազանս, որովք սլակեցի բամբիշն արեւելային՝ վայելչափայլ թագուհին, մեծ Աշխէն, և վչքնադագեղ օրիորդն Հայոց Մեծայ, Խոսրովիդուխտ» (էջ 17): Պարզ էջ⁶⁸, որ այդ սլաւատը Հռոմում էջը գտնվում, այլ Նիկոմեդիայում⁶⁹. Իսկ որ Կոստանդինն ու Տրդատը ծանոթներ ու բարեկամներ էին նախքան այդ դեպքերը, վկայում է նույն աղբյուրը: Կոստանդինն ասում է. «Ձոր լուեալ սիրելին իմ ի մանկութենէ Տրդատ» (էջ 20): Այդ փաստը չի՝ արձանագրված Աբամբանդեղոսի («Անդ սմն ասրեցուցանէ ի հինէ անախ յորդուցն Խոսրովու թագաւորին Հայոց՝ մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ. առեայ դայեկացն վսխուցեալ ի դուռն կայսեր ի կողմն Յունաց») ⁶⁹, և Մովսէս Խորենացու («Յորմէ վաղթեալ նախարարքն Հայոց, հանդերձ ազգան Արշակունեաց ի Յոյնս ապաւինէին. յորոց մի էր եւ Արտաւազդ Մանգակունի, որոյ առեալ զՏրդատ որդի Խոսրովու՝ ի դուռն կայսեր հասուցանէր») ⁷⁰ աշխատութուններում:

Եզրակացությունը մեկն է: Տրդատ III-ը գնաց Հռոմեական կայսրություն, բայց ոչ Հռոմ, այլ Նիկոմեդիա, որը Դիոկլետիանոսը դարձրել էր կայսրության գահանիստը և վերջինիս կառավարման կենտրոնը⁷¹: Հենց այստեղ, Կոստանդին Մեծի թագավորության քսանամյակի (325) առթիվ կազմակերպված հանդիսություններին քայտոված էջ, որ հրավիրված էր և Տրդատը: Ուստի պատմագրության մեջ արտահայտված այն կարծիքը, թե իմր շփոթված է Տրդատ I-ի այցելությունը Հռոմ՝ Ներոն կայսեր օրոք, չի հաստատվում:

Վերջուցնելով մեր խոսքը Տրդատ-Կոստանդին պայմանագրի կնքման վայրի և ժամանակի մասին, գտնում ենք, որ այն կնքվեց հենց Նիկոմեդիա քաղաքում, իսկ թե կոնկրետ ե՞րբ, դժվար է ասել: Կամ Կոստանդին ամուսնության հանդեսի (որին հրավիրված էր Տրդատը), կամ էլ Լիկինիոսի դեմ կայսեր տարած հաղթանակի առթիվ Նիկոմեդիա քաղաքում կազմակերպված հանդիսությունների ժամանակ, որոնց մասնակցելու համար սլաւի հրավիրված լինեք Հայոց արքան:

⁶⁷ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, էջ 226:
⁶⁸ Եվսերիոս Կեսարացին ցույց է տալիս, որ կայսրը Նիկոմեդիայում եկեղեցի (սուրբ աղօթից – εὐκατήριον ὄκον) կառուցեց. Eusebii De Vita Constantini, Lib. III, cap. L, col. 1109: Իսկ Հեղինակի նույն կայսեր ներդրումում այն կոչված է ἀνάκτορον – սլաւա (նույն տեղում, ծանոթ. 37): Հայտնի է, որ Կոստանդին Մեծը հեթանոս մեղավ (մահվան նախօրյակին նա աստվածներին դո՛ւ աստուցեց), բայց եկեղեցին նրան հայտարարեց քրիստոնյա և սուրբ: Այժմ հասկանալի է, թե ինչու սլաւատը դարձավ եկեղեցի:
⁶⁹ Աբամբանդեղայ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Աբամբանդեղոս). Տիգրիս, 1909, էջ 24:
⁷⁰ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, էջ 215:
⁷¹ E. S t e i n. Նշվ. աշխ. հ. 1, էջ 2:

Հռոմի Սեղբեստրոս պապը պատճառ դարձավ, որպեսզի «Դաշանց թղթի» ստեղծողը Կոստանդին Մեծին Հռոմում տեսնի, հայոց համար կեղծիքի գլխավոր գերակատարը Սեղբեստրոսը պիտի լիներ. հետևաբար Գրիգոր Լուսավորիչը պիտի Հռոմ գնար:

Դ) Կնքված դաշնագրության պայմանները

Նախապես նշենք, որ մեր ձեռքում է ոչ թե պայմանագրի տեքստը, այլ մանրամասնություններով հագեցած դրա վերաշարադրանքը, ավելի ճիշտ՝ դաշինքի մասին պատմությունը:

Պայմանագրի պրեամբուլան հետևյալն է. «Երկոքին արքայքս [և երկոքին հայրապետք]⁷² և երկոքին ազգքս՝ Հռովմայեցիք և Հայք միարան և միախորհուրդ համաշունչ⁷³ եղբարք գրեցաք միմեանց, և ուխտ և դաշինս հաստատեցաք յաւիտենական ի միջի մերում» (էջ 14): Պայմանագրի գործելու ժամկետը «յաւիտենական» է, այսինքն ժամանակով անսահմանափակ⁷⁴: Առանձին կետով սահմանված է պայմանավորվող պետությունների տարածքային ամբողջականությունը: Ամենայն մանրամասնությամբ ու ճշգրտությամբ (XI-XIII դդ. «Կեղծիքի», «տգիտության տեր» մարդու համար անըմբռնելի) ներկայացված է Արևելահռոմեական կայսրության նահանգային բաժանումը, Արևմտահռոմեականի բացարձակ բացակայությունը պայմաններում, այն էլ այն դեպքում, երբ կարծես թե մշտական թատերաբեմը Հռոմն է՝ Արևմտահռոմեական կայսրության կենտրոնը: Ըստ «Դաշանց թղթի» Արևելահռոմեական կայսրության տարածքը սկիզբ է առնում Ադրիատիկ ծովից՝ «յայնկոյս Ադրիական ծովուն և ի միջոցն Պոնտական և Կասպիական պիղագոսաց» (էջ 15)⁷⁵: Նախապես նշենք, որ լատիներեն կազմված պայմանագրի Տրդատին հանձնված պատճենը թարգմանված պիտի լիներ հայոց արքունիքում ընդունված հունարեն լեզվով: Այդ մասին դեռ խոսք կլինի: Ըստ նահանգների («աշխարհների») այն ներկայացված է այսպես:

⁷² Անկյունավոր փակագծերի մեջ առնված բառերը բացահայտ ընդմիջարկություն ենք համարում, կատարված շատ ավելի ուշ:

⁷³ Հմտ. Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկոլայոս Միստիկոսի (901-907, 912-925) նամակը Հովհաննես Դրասխանակերացի կաթողիկոսին. «Զի այդպէս միախոհք և միաբան լինելով...» (էջ 268) և Գերմանոս Բ պատրիարքի նամակը Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին. «Վերադառնալ նախկին միության և համախոհության» (տե՛ս Հ. Բ ա ռ թ ի - կ ե ա ն. Հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերությունները փաստաթղթերում: Կոստանդնուպոլսի պատրիարքներ Գերմանոս Բ-ի (1222-1244) և Մանուէլ Բ-ի (1244-1255) թղթերը Հեթում Ա թագաւորին և Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսին. - «Գանձասար», հ. է, Երևան, 2002, էջ 68:

⁷⁴ Այդպիսի «հավիտենական» հաշտության պայմանագրեր շատ են կնքվել (տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5: Բյուզանդական աղբյուրներ. դ. Ա, Պրոկոպիոս Կեսարացի (թարգմ. բնադրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի). Երևան, 1967, Պարսկական պատերազմի մասին. դիրք Ա, դլ. 22 և Կոստանդին Մեծի և պարսից արքա Շապուհի միջև (Խ ո Ր Ե Ն ա ց ի, էջ 236):

⁷⁵ Ճիշտը՝ պեղագոսաց, ինչպես է 1709 թ. հրատարակության մեջ:

«Ա շ խ ա ր չ ն ե ր»		Ε π α ρ χ ι α ι	(Provinciae)
1	Ափրիկեցւոց	Ἀ φ ρ ι κ η	(Africa)
2	Արաբացւոց	Ἀ ρ α β ί α	(Arabia)
3	Միջագետաց	Μ ε σ ο π ο τ α μ ί α	(Mesopotamia)
4	Մեծ Ասորոց	Σ υ ρ ι α Μ ε γ α λ η	(Syria Magna)
5	Փիւնիկաց	Φ ο ι ν ι κ η	(Phoenice)
6	Կիլիկեցւոց	Κ ι λ ι κ ί α	(Cilicia)
7	Փռիւզացւոց	Φ ρ υ γ ί α	(Phrygia)
8	Պամփուլացւոց	Π α μ φ υ λ ι α	(Pamphylia)
9	Կապադովկացւոց	Κ α π π α δ ο κ ι α	(Cappadocia)
10	Բիթանացւոց	Β ι θ υ ν ι α	(Bithynia)
11	Գաղատացւոց	Γ α λ α τ ι α	(Galatia)
12	Պիսիդացւոց	Π ι σ ι δ ι α	(Pisidia)
13	Ասիացւոց	Ἀ σ ί α	(Asia)
14	Ոնուրացւոց ⁷⁶	Ὀ ν ο ρ ι α ϑ	(Onoriae) (էջ 15)

Ինչպես տեսնում ենք այս ցուցակից, Արևելահռոմեական կայսրութեան տարածքում բացակայում է Փոքր Հայքը (Armenia Minor): Ինչպես միանդամայն ճիշտ նշում է Ն. Ադոնցը, «Փոքր Հայքի մասին կազմված ավանդական սրատկերացումները դեռևս կարիք ունեն քննադատական ստուգման, որովհետև հիմք չկա հայոց պատմությունից դուրս հանելու վաղուց ի վեր բնիկ հայ բնակչություն ունեցող մի ամբողջ շրջան: Իրականում հայոց պատմական կյանքում Փոքր Հայքին վիճակվել է մի շատ լուրջ առաքելություն, և այն արդարացի դնահատել կարելի է միայն այն դեպքում, եթե հրաժարվենք եկեղեցական այն գաղափարախոսությունից, որին հարել և մինչև այսօր էլ հարում է հայ պատմագիտությունը: Այդ միակողմանի վերաբերմունքն էլ խանգարել է Փոքր Հայքի ուսումնասիրությունը հայկական տեսակետից: Նրա մասին գոյություն ունեցող սրատկերացումներն այնքան աղոտ են, որ շատերը չեն տարբերում Փոքր Հայքը Կապադովկիայից: Փոքր Հայքի հողերը հռոմեական նահանգների շարքն անցան որպես Կապադովկիայի բաղկացուցիչ մաս: Այդ վիճակում նա մնաց մինչև Դիոկղեսիանոսը, մինչ Գ. դարի վերջը, երբ Փոքր Հայքը առանձնացվեց որպես ինքնուրույն նահանգ»⁷⁷:

«Դաշանց թղթում», սակայն, Փոքր Հայքը, որ ամենայն հավանականություն մինչև Դիոկղեսիանոսը Կապադովկիայի մաս էր կաղմում, պիտի բաժանված լիներ Առաջին և Երկրորդ Հայքի (եթե կա Առաջին Հայք, ասլա սպասելի է և Երկրորդ Հայքի առկայությունը), ուստի այն չպիտի էլ լիներ այս ցուցակում, քանի որ Կոստանդինը զիջել էր Տրդատին. «և սեպհական աշխարհ սահմանեցի (Կոստանդին Մեծը – Հ. Բ.) նմա (Տրդատի արքային –

⁷⁶ «Դաշանց թղթի» 1709 թ. հրատարակության մեջ չի հիշված «Փիւնիկաց աշխարհը», ինչպես և «Մեծ Ասորոցը» և «Պիսիդացւոցը»: Բայց կա «Պոնդացւոց աշխարհը», որ բացակայում է Կ. Շահնազարյանցի հրատարակած տարբերակում: «Դաշանց թղթի» առկա արտագրությունների համեմատական քննությունը հնարավորություն կտա կազմելու Արևելահռոմեական կայսրության վարչական տարածքի ավելի ճշգրիտ սխեմները: Վ դ. սկզբում:

⁷⁷ Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 82:

Հ. Բ.) զՊոռտին Արմենիան, զԿապադովկիա» (էջ 18): IV դ. գրված Սլրոց եվստրատիոսյանց Վարքում Կապադովկիան չի համարվում «յունաց երկիր»: Ավելի որոշակի է սլասմահայրը. «...մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պոռտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք»⁷⁸: Այս առթիվ մի հարց էլ: Ունենք «Պոռտին Արմենիան» «Դաշանց Թղթի» և «Պոռտին Արմենիան» խորենացու: Ո՞րն է սկզբնականը, «Դաշանց Թուղթը», թե՞ պատմահոր «Պատմությունը»: Ուլքեր «Դաշանց Թուղթը» իր ամբողջության մեջ մեկ աղբյուր և կեղծիք են համարում, պարզ է, պիտի պնդեն, թե «Պոռտին Արմենիան»-ը «Դաշանց Թուղթը» վերցրել է խորենացուց: Բայց բազում փաստեր հաստատում են, որ «Դաշանց Թուղթը» ավելի վաղ է ստեղծվել, քան պատմահոր «Պատմությունը»: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, սույա Մովսես խորենացու «Պատմության» մեղ հայտնի հունական աղբյուրների թվում ավելանում է ևս մեկը: Եվ դա դեռ բոլորը չէ: Եթե «Պոռտին Արմենիան» է, և ոչ «Առաջին Հայք» (հայցական հոլով), ապա պիտի որ խորենացու ժամանակ «Դաշանց Թուղթը» դեռ հունարենից չէր թարգմանվել հայերեն:

Մի կարևոր փաստ ևս: Կոստանդին Մեծը, շարունակելով իր ասածը, թե «և սևսհական աշխարհ սահմանեցի նմա զՊոռտին Արմենիան, զԿապադովկիա», կոնկրետացնում է, ո՞վ նվաճեց այն հայերից. «դոր հանեալ էր ի Հայոց Պոմպիլի» (էջ 18): XI-XIII դ. «ազեա կեղծարարը» ս՛րտեղից պիտե, որ Փոքր Հայքը հայերից նվաճել էր Պոմպեոսը, փաստ, որի ճշգրտությունը այս դեպքում ևս հաստատվում է⁷⁹: Նշենք այստեղ, որ «Պոռտին Արմենիան» (Πρώτη Ἀρμενία) հունարենում հայցական հոլովով է և ուղիղ լսնդիր, ուղղականը՝ Πρώτη Ἀρμενία է: Սա ցույց է տալիս, որ աղբյուրն իր ձեռքի տակ ունեւ հունարեն բնագիր: Հայերենում «Առաջին Հայք» և՛ ուղղականում, և՛ հայցականում նույնն է: Հակառակ այն բանի, որ Ա. Երեմյանը «Պոռտին Արմենիան» ուզում է մեկնարանել «Նախասկզբնական Հայք»⁸⁰, այն Առաջին Հայք է: Բայց եթե կա Առաջին Հայքը, տրամաբանական է Երկրորդ Հայքի առկայությունը: Ըստ Մոմզենի, 386 թ. ոչ ուշ գրված Laetrculus Polemii Silvii հռոմեական նահանգների ցանկում Պոնտոսի դիրոցեզում հիշվում են. 7) Armenia Minor և 6) Armenia Major, այսինքն՝ Փոքր Հայքը և Մեծ Հայքը, ինչպես դրում է Ն.Ադոնցը, «հակառակ պատմական իրականություն»⁸¹: Կ.Գյուսերբուկը ենթադրում է, որ խոսքը վերաբերում է Առաջին և Երկրորդ Հայքերին, որոնք ցանկի հեղինակը կարող էր Փոքր և Մեծ Հայք անվանել, քանի որ Երկրորդ Հայքը շատ ավելի խոշոր էր, քան Առաջին Հայքը⁸²: Առաջին Հայքի մեջ մտնում էին, բացի Սեբաստիա քաղաքից, Սեբաստիա նահանգը, Նիկոսյուլիսը, Կոզոնիան, Սատալը, Սեբաստուոլիսն ու Վերիսան: Երկրորդ Հայքի մեջ՝ Մելիտենեն, Արկան, Արարիսոսը, Կուկուսոսը, Կոմանան և Արիարաթիան⁸³:

⁷⁸ Խ ո Ր Ե Ն ա Յ ի, էջ 46:

⁷⁹ Ն. Ա գ ո ն ց. նշվ. աշխ., էջ 90, 115, 168:

⁸⁰ Հայ ժողովրդի պատմություն. Հ. 1, Երևան, 1971, էջ 234:

⁸¹ Ն. Ա գ ո ն ց. նշվ. աշխ., էջ 102:

⁸² Կ. Գ ի Լ Թ Ե Ր Օ Կ. Հռովմէական Հայաստան և հռովմէական սատրապութիւնները Դ-Ձ դարերուն (գերմ. թարգմ. Հ. Մկրտիչ վ. Նորշուան). Վիեննա, 1914, էջ 38:

⁸³ Ն. Ա գ ո ն ց. նշվ. աշխ., էջ 15-16:

«Դաշանց Թղթի» Արևելահռոմեական կայսրության տարածքի նահանգների նշված մանրամասն ու մեր կարծիքով ճշգրիտ ցանկը ի՞նչ է իրենից ներկայացնում: Դեռևս 1862 թ. հրատարակվեց այսպես կոչված հռոմեական նահանգների Վերոնյան ցանկը: Հրատարակչի քննությունից պարզվում է, որ նահանգների պարզ թվարկումը իր ներքին կազմով վերաբերում է 297 թ. և Մոմզենի ենթադրությամբ իրենից ներկայացնում է Դիոկլետիանոս կայսեր նահանգային ռեֆորմը⁸⁴: Խնդրի վերաբերյալ գոյություն ունի և Վերոնյան ցանկի նման` *Laterculus Polemii Silvii*, գրված, ըստ հեղինակի, 448 թ., բայց ըստ Մոմզենի` 386 թ. ոչ ուշ⁸⁵: Արդ, «Դաշանց Թղթում» արդյո՞ք չի արտահայտված հենց Դիոկլետիանոսի նահանգային ռեֆորմը, և այն խնդրին վերաբերող հնագույն և ճշգրիտ փաստաթուղթը չէ՞, որ հարմարեցված է կեղծիքի ոգուն. Սեղբեստրոսը դիմում է Արևելահռոմեական կայսրության նահանգների ղեկավարներին, որպեսզի նրանցից և ոչ ոք չհանդգնի «դիմադարձ լինել հոյակապ հրամանաց հզորին Հայոց, կայսերակերպին Տրդատայ» (էջ 16), այդ թվում և Աֆրիկայի ու Արարիայի գլխավորներին... Ստորև մենք դեռ առիթ կունենանք «Դաշանց Թղթի» մի շարք փաստերի էլ անդրադառնալու, որոնք միանգամայն ճիշտ արտահայտում են IV դ. սկզբի իրական պատկերը, ուստի մեր ենթադրությունը, թե «Դաշանց Թղթում» բերված է Դիոկլետիանոսի վարչական բաժանումը, անհիմն հայտարարություն չէ: Դրա վերաբերյալ թող իրենց խոսքն ասեն մասնագետները:

Այսուխնով, Կոստանդին կայսրը, ըստ «Դաշանց Թղթի» Տրդատին գիշում է Փոքր Հայքի փոքր մասը, հարկավ իրեն սլահելով մեծը: Սրբոց նվաստախոսյանց Վարքում (Դիոկլետիանոսի ժամանակ) հենց «Երկրորդ Հայքի» քաղաքները կայսրության կազմում են հիշվում⁸⁶:

«Դաշանց Թղթում» դժվում են և Տրդատի թագավորության սահմանները. «Եւ այս է բուն հայրենիքն Տրդատայ ի լեռնէն Արճիոյ»⁸⁷ մինչև ի լեռն Արարատայ»⁸⁸ և ի Գայլ գետոյն Ելեսսյոնտացւոց մինչև ցհզոր գետն Տիգրիս մեծ. իսկ ի կողմանց Քոհաստանեաց որչափ բազուկ իւր լուսեսցէ և թուրն թափեսցէ» (էջ 18)⁸⁹:

Թեև Կոստանդին Մեծը «Դաշանց Թղթում» համարվում է հռոմայեցվոց կայսր, հաստատված Հոմում, Արևմտահռոմեական պետության տարածքի մասին մեր աղբյուրում բերված տեղեկությունները տարօրինակ են ու ծիծաղելի: Այն տարածվում է «ի Հերակլէսի արձանէն»⁹⁰ մինչ ի յարձանն Մե-

⁸⁴ Նույն տեղում, էջ 101:

⁸⁵ Նույն տեղում, էջ 102:

⁸⁶ Հ. Բ ա ռ թ ի կ յ ա ն. Քրիստոնեությունը Փոքր Հայքում: Աղգային-կրոնական և սոցիալ-քաղաքական իրավիճակը նահանգում III դ. երկրորդ կեսին (ըստ IV դ. սրբոց վկայաբանությունից). - «Պատմա-բանասիրական հանդես», 2001, №2, էջ 10-17:

⁸⁷ Այժմ էրջիս դաղ Թուրքիայում: Հմմտ. Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ Յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 25: «Առաջին Հայք (Պոստին Արմենիան - Հ. Բ.) յիլից կալով Առաջին Կասպոնովկիոյ առ երի Բ. Հայոց, և սահմանի յիլից Եփրատու. և լեռնն ունի զԱռգէսս»:

⁸⁸ «Դաշանց Թղթի» 1709 թ. հրատարակության մեջ սխալ է. « և ի լեռնէն Արարադայ և ի Գայլ գետոյն Ելեսսյոնտացւոց մինչև ցհզոր գետն մեծ Տիգրիս» (էջ 408):

⁸⁹ «Սահման քաջաց գէն իւրեանց»:

⁹⁰ Ջիրբալտար նեղուցը (Հն. Գաղիբա): Այստեղ «արձան» նշանակում է «սյուն»:

լիտեան,⁹¹ և ի Սեպտէ կղզւոյն⁹², որ հայի հանդէպ Ատլաս լերինն⁹³ մինչև ի Սիկիլիայ կղզին, յորում կայ հրակատարն բուռկանիայ» (24): Առաջինում լիակատար վարչական բաժանում, երկրորդում խղճուկ աշխարհադրական, որ, ոչ ավելի, ոչ պակաս, համարվում է Մեծն Կոստանդնի Հռոմեական կայսրութեան «աշխարհ» «որք կան ի մերում աշխարհիս»: Կարծես գոյութեան չունեն հենց ինքը կայսրութեան բունը՝ Իտալիան, ժամանակակից Իսպանիայի, Ֆրանսիայի, Բրիտանիայի, Գերմանիայի, Ավստրիայի տարածքները, Դալմատիան, Պանոնիան և այլն, և այլն: Հետագրքիւր է, որ կան, ըստ ոչ որպէս Հռոմեական կայսրութեան մաս, այլ, ինչպէս որ պիտի լինէր XIII դ., կեղծիքի շարադրման ժամանակ որպէս առանձին անկախ պետութիւններ եկեղեցական իմաստով Հռոմի պապին ենթակա: «Հրաման հանի, — ասում է Սեղբեստրոս պապը, — ի Հնազանդեալք իմ ի մերձակայ յալգս և յաշխարհս Իտալացւոց, Ալամանացւոց (Գերմանացւոց — Հ. Բ.), Իսպանիացւոց և ժողովեցի զամենայն արքայիսկոպոստնս և զամենայն ուխտ եկեղեցւոյ» (էջ 24): Պարզ չէ՞, որ նախակղզնական սլայմանագրի բնագրում Արևմտահռոմեական կայսրութեան տարածքը հիշատակված չէր ամենևին, և, երևի, չպիտի էլ հիշվեր, քանի որ սլայմանագիրը կնքվում էր Արևելահռոմեական կայսրութեան և Հայաստանի միջև: Պարզ է, երբ ստեղծվում էր, մեր համոզմամբ, XIII դ. առաջին կեսի «կեղծիքը», Հռոմեական կայսրութեան վաղեմի նահանգները (միջնադարյան Եվրոպան) ինքնուրույն պետութիւններ էին, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Հունգարիայի թագավորութիւններ, Իտալիան բաժանված էր Իտալիայի և Սիկիլիայի թագավորութիւնների ու սլաւական պետութեան («կեղծիքի» ստեղծողը չէր կարող դրանք Կոստանդնի Մեծի և Սեղբեստրոս պապի ժամանակակից համարել), իսկ քանի որ Հռոմի կողմից դործող անձինք էին Հռոմի կայսր Կոստանդինը և Հռոմի արքայի հոգևոր պետ Սեղբեստրոսը, պետք էր մի կերպ հիշատակվեր և կայսրութեան արևմտյան մասը: Եվ դա կատարվեց շատ սլրիմիտիվ ձևով, կարծես այն սահմանափակվում էր Սեպտե (որ սլաւամամբ կղզի է համարվում), ապա իրոք կղզիներ Մելիտեն (Մալտան) և Սիկիլիան: Վերջին երկուսը հավանաբար վերցված Գործ Առաքելոցից (28,1, 28,12):

Արևելահռոմեական կայսրութեան վարչական բաժանումից բացի, «Դաշանց Թղթում» կա և դրա տարածքի մասին համառոտ նշում: Այն ձգվում է «ի դրանէ Բիւզանդացւոց մինչև ի դրունս հոնաց» (էջ 15), ընդ որում չկա «Կոստանդնուպոլիս» հասկացողութիւնը, այսինքն արտացոլում է մինչև 330 թ. ընկած ժամանակը, երբ Բյուզանդիոն քաղաքը պաշտոնապէս ստացավ Կոստանդին կայսեր անունը:

«Դաշանց Թղթում» ասվում է, որ Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի Հռոմից վերադառնալու նախօրյակին Մեծն Կոստանդնի հրամանով «ժողով եղև մեծ առաջի սուրբ Առաքելոցս» (նկատի ունի «ի վկայարանս Սուրբ Առաքելոցս»), ուր գտնվում էին Պետրոս և Պողոս առաքյալ-

⁹¹ Մալտա կղզին:

⁹² Սեպտե կղզի չէ, այլ հենց Զիրբալտար (արաբ. Զիրել առ-Տարիք - Տարիքի լեռ):

⁷¹¹ թ. գրավել էր արաբ զորավար Տարիք իբն Սալիդը, որը և կաշվեյ իր անվամբ:

⁹³ Հյուսիսարևմտյան Աֆրիկայի լեռնաշղթա:

ների «աստուածամուկս սուրբ նշխարները» (էջ 13): ժողովին ի միջի այլոց մասնակցում էին «320 Սինկղիտոսք»⁹⁴ (էջ 14) : Այդ ժողովում «ուխտ և դաշինն հաստատեցաք յաւիտենական ի միջի մերում ... արիական Լատինացիքս և անյաղթելի Թորգոմացիքս» (էջ 14): Սակայն վերջաբանում այդ ժողովը չի կոչվում «սինկղիտոսաց» ժողով, այլ «սինհոզոս» (էջ 30): Առաջին հիշատակման ժամանակ ժողովը կատարված է լինում «առաջի սուրբ Առաքելոցս», երկրորդ դեպքում՝ «ի տօնի սուրբ Առաքելոցս»: Ստեփանոս Ասողիկի վկայությամբ Կոստանդինը «յերկրորդ ամի թագաւորութեան իւրոյ փոխեաց զարքունիսն ի Հռովմայ ի Բիւզանդիա կղզի և պարսպիալ զնա քաղաք մեծ անուանեաց յիւր անուն Կոստանդնուպօլիս, և բերեալ ընդ իւր մասն ինչ ի նշխարաց սրբոյն Պետրոսի և Պօղոսի առ ի հաստատութիւն թագաւորութեանն յետոյ շինէ զմեծ և զհռչակաւոր եկեղեցին ի տիեզերական մայրաքաղաքին, զոր յանգագոյն անուամբ Առաքելաւս անուանեաց. և յերրորդ ամին արար ժողով ՅԺԸ հայրապետացն ի Նիկիա»⁹⁵:

«Դաշանց թղթի» «Սուրբ Առաքելոց» վկայարանը Կոստանդնուպոլսի Առաքելոց տաճարը չէ՞, Պետրոս ու Պողոս առաքյալների «աստուածամուկս սուրբ նշխարները» Կոստանդին կայսեր Հռոմից Կոստանդնուպոլիս բերած նրանց «մասն ինչ նշխարաց»-ը չէ՞, 320 «սինկղիտոսք»-ը (սենատորները) Նիկիայի Ա տիեզերական ժողովի (հունարենում *συνδός* - «սինհոզոս») (ինչպես «Դաշանց թղթում»՝ «ի մեծ սինհոզոսի», այդպիսին էր իրոք Նիկիայի Առաջին տիեզերական ժողովը) 318 եպիսկոպոսները չե՞ն: «Սինհոզոսը» «սինկղիտոս» չէ, եկեղեցաժողով է: Չմոռանանք, որ Արևելյան եկեղեցու IV - VIII դդ. գումարված յոթ տիեզերական, ինչպես նաև բոլոր նահանգային, տեղական, պատրիարքական ժողովները «սինհոզոս» են կոչված:

Այժմ ավելի ուշադիր և պատասխանատվությամբ անդրադառնանք «Դաշանց թղթի» մի առեղծվածի ևս: Բնագրի սկզբում, Տրգատ-Կոստանդին պայմանագրի ստորագրության առիթով ասված է. «Ստորագրեցաւ հրովարտակս հրամանաւ իմով մեծի Պապուս Հռոմայեցոց, Եւսեբիոսի, որ և Սեղբեստրոս» (էջ 12): Կ. Շահնազարյանցը դա համարում է «յայտնի վրիպակ» (էջ 71) և բացառում Եւսեբիոսի գոյությունը: Բայց այդպե՞ս է սրբադոք: Հայ աղբյուրներից Ազաթանդեղոսը, շարագրելով Տրգատի և Գրիգոր Լուսավորչի Հռոմ դնալը, ցույց է տալիս, որ նրանց գլխավորելու ելան «Կոստանդինոս, և հայրապետն մեծ, արքեպիսկոպոսն աշխարհամուտ դրանն, նրում անուն կոչէր Եւսեբիոս»⁹⁶: Նա մնում էր «յարքունա-

⁹⁴ Արաբական թվերը Կ. Շահնազարյանին են: Բնագրում հարկավ հայոց այբուբենի ստուգելով:

⁹⁵ Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 137: Ասողիկի շարադրանքում այստեղ կան մի շարք անճշտություններ: 330 թ. մայրաքաղաք դարձած Բյուզանդիոնը Կոստանդինի թագավորության երկրորդ տարին չէր, այլ 25-րդը, ոչ էլ 325 թ. գումարված Նիկիայի ժողովը թագավորության երրորդ տարին: Բացի այդ Բյուզանդիոնը կղզի չէ: Թերևս դրչական սխալն է՝

⁹⁶ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 461: Չհուզրերում նախապես եղել է Եւսեբիոս, հետագայում ձեռագրի լուսանցքում «ուղղված» է Սեղբեստրոս, ապա՝ «կոչիւր և Սեղբեստրոս», որպեսզի վերջում մնա «Սեղբեստրոս» և նույնացվի Հռոմի պապին, քանի որ կեղծիքի հեղինակը Կոստանդին Մեծին պետք էր Հռոմում ապրել:

կան պաղատանն»։ Հիշյալ ժամանակաշրջանում Հռոմում Եվսեբիոս անու-
նով պապ գոյությունն չի ունեցել։ 309/310 թթ., այսինքն քրիստոնյաների
հալածանքների ժամանակ ընդամենը չորս ամիս աթոռակալել է Եվսեբիոս
անունով մեկը, որ Մաքսիմիանոս կայսեր կողմից Սիկիլիա աքսորվեց ու
տեղում էլ վախճանվեց։ Արգ, եթե Արևելահռոմեական կայսրության մայ-
րաքաղաքը Նիկոմեդիան է, ապա Եվսեբիոսին այնտեղ պիտի փնտրել։ Եվ
նա ոչ այլ ոք է, քան քաղաքի նշանավոր եպիսկոպոս Եվսեբիոս Նիկոմե-
դացին։ Նա 318 թ. գլխավորում էր Նիկոմեդիայի եկեղեցին։ Թեոփանես
նոստովանողը գրում է, թե Կոստանդին կայսրի 18-րդ տարում (324 թ.)
«ինչպես ասում են ոմանք, Մեծն Կոստանդինը իր Կրիսպոս որդու հետ,
Հռոմում Սեղբեստրոսի կողմից մկրտվեց։ Ավագ Հռոմում մինչև այսօր,
որպես դրա ապացույց ցույց են տալիս ավազանը, որում նա մկրտվեց
Հռոմում Սեղբեստրոսի կողմից՝ բռնակալների վերացումից հետո։ Իսկ
արևելքցիները ասում են, թե նախքան վախճանվելը նա մկրտվեց Եվսե-
բիոս Նիկոմեդացու կողմից։ Հենց այդ քաղաքում էր նրա մահը վրա հա-
սել։ Բայց ինձ պելի հավանական է թվում, թե նա Հռոմում մկրտվեց՝
Սեղբեստրոսի կողմից»⁹⁷։ Պարզ է, թե ինչու է դա հավանական Թեոփանե-
սի համար։ Եվսեբիոս Նիկոմեդացին, ինչպես դեռ պիտի տեսնենք, արիո-
սական էր։

Ինչպես և մեր Ադաթանգեղոսը, Սոզոմենոսը ցույց է տալիս, որ Եվսե-
բիոս Նիկոմեդացին վայելում էր Կոստանդին կայսեր հովանավորություն-
ը. «Նիկոմեդացվոց եկեղեցվո այն ժամանակվա առաջնորդ Եվսեբիոսը
զարգացած, արքունիքում մեծ պատվի արժանացած այր էր» (Εὐσεβίου τῶν
τότε προεστώτα τῆς Νικομηθέων ἐκκλησίας, ἀνδρα ἐλλόγιμοι καὶ εἰ-
ποὶς βασιλείοις τετιμημένοι)⁹⁸։

Եվսեբիոս Նիկոմեդացին ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել
Նիկիայի առաջին Տիեզերական ժողովում (որին անձամբ մասնակցում էր
Կոստանդին կայսրը), հանդես դալով ի պաշտպանություն Արիոսի, որի
համար էլ իր հակառակորդների կողմից շարունակ փնովվել է։ Ըստ Սոկ-
րատ Սքոլաստիկոսի. «Պաշտպանէին կարծեացն Արիոսի և այլք բազումք
և մանաւանդ Եւսեբիոս, ոչ Կեսարացին, այլ նախկին եպիսկոպոսն եկեղեց-
ւոյն Բիւրիտացւոց, որ յայնժամ եպիսկոպոսն էր ի Նիկոմիդեայ՝ երկրին
Բիւթինեայ»⁹⁹։ Նրանք (նաև իր համախոհ Նիկիայի եպիսկոպոս Թեոփանե-
սը), թեև մասնակցեցին Նիկիայի հավատո հանգանակի կազմմանը, Արիո-
սի կարդալույծ արվելուն չհամաձայնեցին և համապատասխան փաս-
տաթղթի տակ չստորագրեցին¹⁰⁰։ Բյուզանդիոնը (Կոստանդնուսուլիսը)

⁹⁷ Theophanis Chronographia, recensuit Carolus de Boor, vol. I, Lipsiae, 1883, p. 17-18.

⁹⁸ S o z o m e n u s. Kirchengeschichte. Herausgegeben von Joseph Bidez, eingeleitet, zum Druck besorgt und mit Registern versehen von Günter Christian Hansen. Zweite, durchgesehene Auflage (GCS, N.F.4), Berlin, 1995 (1960), S. 34.

⁹⁹ Սոկրատայ Սքոլաստիկոսի Պատմութիւն եկեղեցական և Վարք Սրբուն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ թարգմանեալ Աբասուն Կրիզոստի Զորափորեցւոյ (աշխատութեամբ Մեսրոպ վ. Տէր Մովսէսեան). Վաղարշապատ, 1897, էջ 10:

¹⁰⁰ S o z o m e n u s. Kirchengeschichte, S. 42.

մայրաքաղաք հռչակվելուց հետո, 338 թ., Եվսերիոս Նիկոմեդացին Նիկոմեդիայից տեղափոխվեց Նոր Հուտմ և դարձավ դրա եպիսկոպոսը¹⁰¹:

Այսպիսով, ըստ Ադաթանգեղոսի «Պատմության» գրչագրերի, նախապես եղել է «Նևսերիոս», հետագայում, ինչպես ցույց են տալիս բնագրի հրատարակիչները, Բ խմբի գրչագրի լուսանցքում գրիչն «ուղղել է» Սեղբեստրոս, Դ խմբի ձեռագրում արդեն «Նևսերիոս կոչվեր և Սեղբեստրոս», որպեսզի վերջում «Նևսերիոսը» վերանալով մնա միայն «Սեղբեստրոսը»: Ընդհանրապես, ըստ նույն հրատարակիչների, գրում է՝ «ղգացուցեալ ... մեծ հայրապետն Եւսեբիայ»: Արդ, «կեղծիքի» ստեղծողը հանդիպելով Եվսերիոսի անվան, և քանի որ «Իրադարձությունները» Կոստանդինի հետ տեղի են ունենում Հուտմում, նրան այնտեղ է տեսնում և նույնացնում Սեղբեստրոս պապի հետ. «Ստորագրեցաւ հրովարտակս հրամանաւ իմով մեծի պապուս Հուովմայեցոյ Եւսեբիոսի, որ և Սեղբեստրոս» (էջ 12): Ուստի՝ «Դաշանց թղթի» առաջին մասի terminus ante quem-ը 318 թ. է, Եվսերիոս Նիկոմեդացու Նիկոմեդիայի եպիսկոպոս դառնալու տարին: Պարզ չէ, մեր պրոյեկտի առաջին հրատարակիչը ինչի հիման վրա է այն թվագրում 316 թ.:

Պատահական չէ նաև, որ Նիկիան և Նիկոմեդիան «Դաշանց թղթում» լուսնային են մասնավոր, առաջին պլանում Հուտմն է, քանզի կեղծիքի ամբողջ սյուզեթի կենտրոնում Հուտմի պապ Սեղբեստրոսն է: Հուտմի պապի և Հուտմիական Սրբազան կայսրության կողմից կեղծիքի ստեղծման ժամանակ թանկագրվել էր Կիլիկիայի թագավոր Լևոն II-ը և այդ բոլորը հենց այս իրողությունն արձագանքն է (հիշենք ակադ. Աշ. Հովհաննիսյանի ենթադրությունը): Չմոռանանք, որ և՛ Նիկոմեդիան, և՛ Նիկիան գտնվում էին հարևանությամբ, միևնույն նահանգի՝ Բյութանիայի սահմաններում¹⁰²: Եվ պատահական չէ, որ Նիկոմեդիայում նստող Կոստանդին կայսրը¹⁰³ Ա Տիեզերական ժողովը գումարել ավելի իր նստավայրի հարևանությամբ՝ Նիկիա քաղաքում: Դեռ Կոստանդնուպոլիս չկար: Հուտմում նստած Կոստանդինը ինչու՞ ժողովը պիտի գումարել տար Նիկիայում, և ինչպե՞ս Հուտմից պիտի հեռաներ դրա շրջանցիկ: Նշենք մի իրողություն ևս: Դիոկլետիանոսի (պարզ է առավել ևս Կոստանդին Մեծի ժամանակ) սենատը (սինկլիտոս) կորցնում էր իր նշանակությունը: Համապետական նշանակություն հարցերը նրա քննությունն չէին դրվում, այն զբաղված էր զլաղիատարների խաղերով և նրա բոլոր որոշումները կայսեր հաստատման կարիքն ունեին: Սենատորները թիվը, հաստատված Օդոատոսի կողմից, 600 էր: Այսպիսով Տրդատ-Կոստանդին պայմանագրի առաջին կեսը վերաբերում էր դրա

¹⁰¹Theophanis Chronographia, t. I, p. 32, 33. Նաև Sozomenus Kirchengeschichte, S. 105. Հմմտ. Ս ո կ ր ա տ Մ ք ո լ ա ս տ ի կ ո ս. էջ 123 (Կոստանդին Մեծը «զԵւսերիոս Նիկիմեդացի փոխեալ, մեծ քաղաքիս (Կոստանդնուպոլսի – Հ. Բ.) եպիսկոպոս ցուցանելով»: Հարկավ Կոստանդին Մեծը չէր կարող ինքը եպիսկոպոսին 338 թ. Կոստանդնուպոլիս տեղափոխել, քանզի 337 թ. վախճանվել էր:

¹⁰²Հմմտ. Աշխարհացոյց. «Ունի Բիւթանիա ... մայրաքաղաքս հրիս, զՆիկիա, զՔաղկեդոն, զՆիկոմիդիա»:

¹⁰³Հմմտ. «... մինչդեռ անդէն ի քաղաքին (Նիկոմեդիայի – Հ. Բ.) էին երկրքին իսկ ինքնակալքն, որ հրէցն էր քան զայլս ամենեսին (Կոստանդին Մեծը – Հ. Բ.) և զչորրորդ աստիճան ունէր իշխանութիան: Եւ սա յայնժամ առաջին քան զամենեսին արիական դործովս փառաւորեցաւ ի քաղաքին»: Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն Եկեղեցոյ: Ի ձեռն Հ. Աբրահամ վ. Ճարեան. Վեներիկ, 1877, էջ 625:

գործելու ժամանակին, երկրորդը՝ պայմանավորվող կողմերի պետական սահմանների գծմանը:

Պայմանագրի հաջորդ կետը վերաբերում է պայմանավորվող կողմերի փոխադարձ պարտավորություններին. «Սիրելեացն սիրելի լինելով և թշնամեացն՝ թշնամի» (էջ 14), այսօրվա տերմինաբանությամբ՝ «քարեկամություն և փոխադարձ օգնություն պայմանագիր»: Հանվանե հիշված է և թշնամու անունը՝ «Շապուհ մոխրապաշտ» պարսից արքայից արքա Շապուհ II-ը (309-379)¹⁰⁴:

Փոխադարձ օգնություն դաշնագրությունը հիշվում է և առարկայորեն: Մեծն Կոստանդինն իր իշխանավորներին կոչ է անում. «Միանգամայն կա՛ղմ ու պատրաստ լերուք ի գէն ղինուորութեան արի արանց և ուղամամուտ երիվարաց զինեալք և զօրացեալք հզօր զօրութեամբս մերով, և գումարեսըի՛ք առաջին անսլատմելի և անպարտելի քաջիդ Տրդատայ ի գործս սլատերագմի ընդդէմ ատելոյն Քրիստոսի և թշնամույն իմոյ Շապհոյ մոխրապաշտի» (էջ 16): Եվ դա միանգամայն տեղավորվում է այդ շրջանում ծագած իրագրություն շրջանակներում: Տրդատը «Հռոմ» դնաց, նկատի ունենալով այն հանդամանքը, որ պարսից Շապուհ արքան դադարեցրել է պատերազմը հայոց դեմ. «Ընդ հանգչելն Շապհոյ արքայի Պարսից ի սլատերագմացն, — գրում է Մովսես Խորենացին, — և ի դնալն Տրդատայ ի Հռոմ առ սուրբն Կոստանդինոս»¹⁰⁵: Բայց Շապուհ արքան փորձեց օգտագործել Տրդատի բացակայությունը երկրից. «...սլարապ առեալ խորհրդոց Շապհոյ նիւթէ չարիս ի վերայ մերոյ աշխարհիս. թովեալ զհիւսիսայինսն ամենայն, ելանել ի Հայս ժամ դնէ և իւր գալ Արեօք ի միւս կողմանէն»¹⁰⁶: Եվ ահա՛ պարսից արքայի դեմ պատերազմում հայ-հռոմեական դաշինքը, որ արձանագրված է «Դաշանց թղթում», դաշինք, որը հռոմայեցիներն հարգեցին: Տրդատը «զանդիտեաց ինքեամբ յատուկ մարտնչել ընդ Շապհոյ, մինչև եհաս բաղմութիւն զօրուն Հռոմայեցոց»¹⁰⁷: Շապուհը պարտվեց և «աղաչեաց զյաղթողն Կոստանդինոս՝ խնդրել ղհաշտութիւն և հաստատել զխաղաղութիւն մշտնջենաւոր»¹⁰⁸:

«Դաշանց թղթում» նշվում է և Տրդատի սլարտականությունը տվյալ հարցում. «Ձամենայն գէնս պատերազմականս և զհռոգ հեծելիդ և զամենայն պատրաստութիւն երիտասարդաց և երիվարաց հրամանաւ Տրդատայ տարէ՛ք ի կողմանս Ատրպատականաց և Արաղայ. և ժուովեցարուք անհուն բաղմութիւնք իբրև զաւազ առ ափն ծովու յալաղս պահակին Հոնայ Դարբանդայ և Դարիւլայ. զի և զնոսս ի մեծն Տրդատս վստահացայ» (էջ 16):

¹⁰⁴ Կ. Շահնազարյանցը (էջ 101-102) «Սիրելեացն սիրելի լինելով և թշնամեացն՝ թշնամի» նախադասությունը «Դաշանց թղթի» «երրորդ ստույթին» է համարում, քանզի Գրիգոր Լուսավորչի քարոզած Ավետարանում Քրիստոսն ասել է. «սիրեցէք զթշնամիս ձեր» ... բարի արարէ՛ք ատելիաց ձերոց» (Մատթ. 5,44): Բայց չէ՞ որ իրականում սա Տրդատ-Կոստանդին դաշինքին է վերաբերում, Գրիգոր Լուսավորչի չկա, ոչ էլ Քրիստոսի Ավետարան:

¹⁰⁵ Խ ո Ր Ե ն ա ջ ի, էջ 227:

¹⁰⁶ Նույն տեղում:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 234:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 236:

Պայմանագրի հաջորդ կետը վերաբերում է հարկահանության հարցերին. «եկեղեցի և եկեղեցականք և վանք և վանականք ամենայն գոյիւք իւրեանց ազատ և անհարկ լիցին յամենայն գիմոսական հարկաց արքունի» (էջ 23): «Իսկ որ ... ընդ հարկաւ արկանեն գեկեղեցի կամ գքահանայ, ղկրօնաւոր կամ ղհաւատաւոր, հարեա՛լ, հալածեա՛լ լիցին յերեսացն Աստուծոյ» (էջ 23): Չի բացառված, որ այս կետը խմբագրված լինի՝ հօգուտ եկեղեցու և նրա սպասավորների:

Պայմանագրով վերացվում է հռոմայեցի և հայ քաղաքացիներից դանձվող գլխահարկը. «Իսկ համօրէն մարգիկ սեփհական ազգացս Դաղմատացւոց և Հայոց ամենեկին անգլխահարկ լիցին. բայց յամենայն վաստակոց իւրեանց հնգեակս տացեն ի դրուես արքունի և այլ դիմոս ի դրուես նոցա մի՛ երթիցէ» (էջ 23): Գլխահարկը վերաբերում էր միայն նվաճված ժողովուրդներին, «իսկ այլ ազգք և լեզուք, զորս մեծաւ պատերազմաւ հնադանդեցուցաք մեք և Հայք, նոքա պարտին մեղ զգին գլխոյ իւրեանց¹⁰⁹: Բաց ի հնգեակէն և տան մեզ ոսկի և արծաթ ըստ կարի ի տարին երեք անդամ, ի գարուն ի գլխէ և յամառն յանասնէ և յաշուն յարդեանց մտէ» (էջ 23-24):

Հատուկ կետով անդրադառնում է վաճառականներին, որոնց պետութունը պաշտպանում է ավաղակներից. «Բայց վաճառականք, որք շրջին անահք և շահին ի մերում աշխարհիս և յամենայն իշխանութեան մերում, և ոսկէհանք և արծաթահանք բաժին հանցեն մեղ» (էջ 24):

Հաջորդ կետը վերաբերում է զնդանները նետված, հարկավ ոչ քրեականներին՝ դող, ավաղակ, մարդասպան, այլ «քաղաքական» բանտարկյալների ազատ արձակմանը. այն է՝ բանտ նետված Փոքր Հայքի (Պոռտին Արմևիայի) հայ քրիստոնյաներին: Հայասնի են սրբոց Եվստրատիոսյանց, ապա և Սեդաստիայի քառասուն վկաների վարքագրություններից¹¹⁰: Նրանք, ըստ «Դաշանց Թղթի», ազատ են արձակվում Գրիգոր Լուսավորչի հրամանով. «Իսկ ի հրամանէ Սրբոյ Լուսաւորչիս գերծցին բանդեալքն» (էջ 13): Հրաման է արձակում և Տրդատ արքան. «Իսկ ի հրամանէ քաջ արանց եղբորս մեր (Կոստանդնի – Հ. Բ.) Տրդատայ դարձցին ամենայն դատաւարտեալք, որ ի քրէական մեաղս իցեն» (էջ 13)¹¹¹, այսինքն աշխատում են մետաղահանքերում:

¹⁰⁹ Իրավացի է է Կ. Շահնազարյանցը, երբ ջանալով ցույց տալ «Դաշանց Թղթի» սխալները, հիշում է «գին գլխոց» կոչված հարկը: Նա գրում է. «Գին գլխոց, որ Արաբաց խառն րառի թարգմանութիւնն է: Հռոմայեցոց կայսրութեան ատենը ամեն հպատակ հարկ տալու պարտական էին, այլ ոչ գին գլխոյ, զոր Արաբիոյ մարգարէի յաջորդները հնարեցին այլապիօններու համար, իբրև վրկանք անոնց մահմետական չրոյալուն և չմեռնելուն» (էջ 95): Բրականում հենց Դիոկղետիանոսի հարկային ռեֆորմներում կալվածներ չունեցող քաղաքային բնակչությունը պարտավոր էր գլխահարկ վճարել (capitatio plebeia): Capitatio հենց գլխահարկ է նշանակում (caput - գլուխ): Այն հիշված է Թեոդոսիոսի Դատաստանագրքում: Գյուղական բնակչությունը վճարում էր annonae, գլխավորապես մթերք (ցորեն, յուղ, բուրգ, միս): Sicut O s t r o g o r s k y. Նշվ. աշխ., էջ 67. Նաև՝ Н. А. М а III к и Н. Նշվ. աշխ., էջ 595:

¹¹⁰ Հ. Բ ար թ ի կ յ ա ն. Քրիստոնեությունը Փոքր Հայքում:
¹¹¹ Հմտ. De Vita Imp. Constantini, Lib. II, cap. XXX, col. 1008.- Νόμος ἀπολυῶν ἐξοπίρσιου καὶ βουλήσ καὶ δημεύσεως («Օրենք վերացնող աքսորը, բռնագրավման վճիռը»: cap. XXXII - τοὺς ἐν μεταλλοῖς καὶ δημοσίοις ἀτιμασθέντας («Մետաղահանքերում

Վերջապես, դաշնագրում առկա է նաև մի կենցաղային հոդված. «Եւ յերկուց ազգացս (իմա՛ Հայ և Հռոմայեցի – Հ. Բ.) ո՛չ ոք իշխէ միմեանց սուր քարշել, և որք յանդգնին՝ սուր նոցա մտցեն ի սիրտս իւրեանց» (էջ 14): Ասել է՝ հայը Հռոմայեցուն և հակառակը իրավունք չունեն միմյանց կյանքի դեմ ոտնձգություն կատարել, իսկ կատարողները ենթակա են մահապատժի:

Սա վկայում է այն մասին, որ «Դաշանց Թղթի» առաջին իրական մասը ներառում է հարցեր ու կետեր, որոնք վերաբերում են տարբեր տարիների, բայց անկասկած Կոստանդնի և Տրդատի ժամանակներին: Ամենավաղ տարվան է վերաբերում քրիստոնյաներին բանտից ու աքսորավայրից ազատ արձակելը: Դա պիտի որ կատարված լիներ 313-ից հետո և պիտի վերաբերեր Կոստանդնի կողմից Տրդատին զիջված Փոքր Հայքի այն մասին, որ հիշված է որպես «Պռոտին Արմենիան» (Սեբաստիա քաղաքը և նույնանուն նահանգը, Նիկոպոլիսը, Կողոնիան, Սատաղը, Սեռաստուպոլիսը և Վերիսան), քանզի 301 թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակած Հայաստանում հազիվ թե մնացած լինեին բանտարկված և աքսորված քրիստոնյաներ:

Վերջապես, կարևոր մի կետ ևս, որ ուսումնասիրողները ոչ միայն չեն գնահատել ըստ արժանվույն, այլ սլարդապես անտեսել են որպես հերթական կեղծիք: «Խնդրեցի յարքայէն Տրդատայ արս 300 հասակաւ և արիւնթեամբ հոյակապք¹¹², գորս և Արմէնք անուանեցի. և կարգեցի ի սպասաւորութիւն արքունական գահոյիս իմոյ, հզօրիչք գլխոյ իմոյ և թիկնապահք իմ ի տուէ և ի գիշերի, և առաջապահեստք իմ ի պատերազմի» (էջ 18): Եթե նկատի առնենք աղբյուրում գրվածը, թե «Հասին առ մեզ զօրքն Հայոց» (էջ 12), Տրդատ արքան ընդառաջել է Մեծն Կոստանդնի խնդրանքին:

«Դաշանց Թղթի» վերոհիշյալ փաստը փայլուն կերպով հաստատվում է բյուզանդական իուռնորագույն պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու կողմից: Նա իր «Գաղտնի պատմություն» մեջ գրում է. «Նախկինում պլաւտի պահպանության համար առանձնացվել էին երեք հազար հինգ հարյուրից ոչ պակաս զինվորներ, որոնց սքոլարիոս էին անվանում: Ի սկզբանե անտի (Կոստանդնի ժամանակներից – Հ. Բ.) պետությունը սրանց վճարում էր շատ ավելի բարձր ուժեղ, քան մնացած բոլոր զինվորներին: Անցյալում կայսրերը սրանց ընտրության ժամանակ նկատի էին առնում մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը (ἀριστινότητα ἀπολέξαντες ἐξ Ἀρμενίων ἐς ταύτην δὴ τιμὴν ἴγουν): Բայց սկսած Ջենոն կայսրից, զինվոր անունը սկսեց տրվել երկչոտ և պատերազմի մասին ամենևին գաղափար չունեցող մարդկանց: Ժամանակի ընթացքում նույնիսկ ստրուկները դրամով գնում էին զինվորի կոչումը: Երբ թագավորությունը Հուստինոսը ստացավ (518 թ. Հ.Բ.), Հուստինիանոսը շատերին արժանացրեց այդ պատվին, նրանցից շատ դրամ շորթելով»¹¹³: Ստացվում

աշխատելու և պետական հանցագործություններ կատարած լինելու համար դատապարտված», նույն տեղում, սյունակ 1009:

¹¹² 1683 թ. հրատարակության մեջ ավելի ճիշտ՝ «հսկայակապս»:

¹¹³ Պրոկոպիոս Կեսարացու Գաղտնի պատմություն (Թարգմ., առաջաբան և ծանոթ Հ. Բարթիկյանի). Երևան, 1987, էջ 114:

է, որ Կոստանդին Մեծի ժամանակներից սկիզբ առած կայսերական սլաւա-
սի պահպանութիւնը հայերին վստահելը («նախկինում», «անցյալում»,
«ի սկզբանէ անսի») գոյատեւեց մինչև Զենոն կայսեր թագավորութիւնը
(174-175, 176-191 թթ.): Զինվորների թվաքանակի տարբերութիւնը՝ Կոս-
տանդինի ժամանակ 300 հոգի, Հուստինիանոս I-ի օրոք՝ 3500, բացատրվում է
մայրաքաղաքի ընդարձակմամբ, նաև սլաւաստական բյուրոկրատիայի
զգալի աճով ավելի քան երկդարյա ժամանակամիջոցում: Իսկ թե ինչու
Կոստանդինը և հաջորդող կայսրերը նախապատվութիւնը տալիս էին հա-
յերին, բացատրվում է ոչ միայն նրանց արիութեամբ, այլ նախ և առաջ «օ-
տարութեամբ»: Տեղյակ չլինելով օտար երկրին և նրա լեզվին, չէին մաս-
նակցի սլաւաստական հեղաշրջումներին և քաղաքական ներքին պայքա-
րին, կծու աշխիւն հավատարմաբար:

Քանի որ հիշեցինք Պրոկոպիոս Կեսարացուն, անդրադառնանք նաև
Կոստանդին Մեծ կայսեր Տրդատ թագավորին շնորհած ընծաներին, որոնց
մասին խոսվում է «Դաշանց թղթում»: Կոստանդինն ասում է. «Պսակեցաք
զմեծ արքայն Տրդատ կայսերական թագիւս լուսասուռ ակամբ յօրինեալ և
մեծամեծ մարգարաօք շրջապատեալ, և զարդարեցաք զհսկայագոյն հասակ
սորա ծովային ծիրանեօք, օքսունական մետաքսօք, մարդարամաւծօք ևս
և զանգին դաւտի հաւրն իմ հղաւրի ամի ընդ մէջ Տրդատայ քաջի... անգին
դոհարօք և զուռնագեղ գնդօք, տալաղիոնօք, սիդնայօք, խոսուկեփաղօք...»¹¹⁴
և միանգամայն իսկ չորս հազար զարդուք...» (էջ 16-17): Այս առթիվ հի-
շենք Մովսես Խորենացու գրածը, որ Հռոմի կայսր Կոստասը հայոց Խոս-
րով արքային ուղարկեց «ծիրանիս հանդերձ պսակաւ»¹¹⁵: Ինչպես նաև
Թեոփանիոս Խոստովանուղի գրածը լազերի թագավոր Յւթիոսի մասին:
Պատմիչը (Ալեքսանդրյան տոմարի 6014 թվականի տակ – մ.թ. 522) ցույց
է տալիս, որ սլաւոսից Կավատ արքայի (488-531) կողմից թագավոր հռչակ-
ված Յաթիոսը, աստամբելով Կավատի դեմ, եկավ Բյուզանդիոն՝ Հուստին-
ոս կայսեր մոտ, խնդրեց իրեն քրիստոնյա մկրտել և թագավոր ճանաչել:
Հուստինոսն ընդառաջ գնաց, նրա վլլսին թագ գրեց, հազցերեց թագավո-
րական սպիտակ քլամիդ (φορέσας στεφάνιον – սլաւ կալ չլամիդա
βασιλικήν: Նրա դոսին ոսկե էր՝ մարգարիտներով ազուցված¹¹⁶: Հովհան-
նես Մալալաը ևս հիշում է այս դեպքերը: Յաթիոսին, ըստ նրա, շնորհ-
ված էին «հռոմեական թագավորական սլակ» (στεφάνιον Ῥωμαϊκόν
βασιλικόν), «սպիտակ ամբողջութեամբ մետաքսյա քլամիդ» (χλαμύδα
ἄσπρον ὀλοστήρικον): Նրա հագին կային իր երկրից (Լազիկայից) բերած կո-
շիկները, դրանք սլաւոսիական ձևի էին՝ մարգարիտներով ազուցված, ինչ-
պես և իր դոսին, այն ևս մարգարիտներով էր»¹¹⁷:

Արդ, պարզ չէ՞, որ «Դաշանց թղթում» Տրդատի մասին Կոստանդին
կայսեր ասածը, թե «պսակեցաք զմեծ արքայն Տրդատ կայսերական թա-
գիւս», «և զանգին դաւտի հաւրն իմ հղօրի ամի ընդ մէջ Տրդատայ քաջի»

¹¹⁴ «Դաշանց թղթի» 1709 թ. հրատարակութան մեջ՝ «խոսակեփաղօք» (էջ 406, կարգա՝
«խոսակեփաղօք»), հուն. χρυσοκέφαλος՝ «ոսկե թագ կրող», բառադի «ոսկեգլուխ»:

¹¹⁵ Ի ո ս յ ի, էջ 261:

¹¹⁶ Theophanis Chronographia, vol. I, p. 168-169.

¹¹⁷ Ioannis Malalae Chronographia. Ex recensione Ludovici Dindorfii, Bonnae, 1831, p. 415.

կեղծիք չէ, այլ իրական փաստ: Իհարկե հավատալու չէ, որ այդ դոտին Կոստանդին Քլորոսինն էր...

«Դաշանց Թղթի» վերը բերված նախադասության մեջ առկա է և մի առեղծված, որի լուծման համար անհրաժեշտ է կանգ առնել Արշակունյաց Հայաստանի քաղաքական իրադրության վրա, որ ստեղծվել էր Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև 298 թ. Մծբինի հաշտության պայմանագրով: Այդ թվականին, ինչպես դրում է Ն. Ադոնցը, «Սասանյանների կողմից ցնցված հայ Արշակունիների գահը հռոմայեցիների օգնությամբ նորից վերականգնվեց Մեծ Հայքում: Այդ ժամանակվանից սկսած՝ Հայաստանն ընկավ կայսրերի քաղաքական ազդեցության տակ կամ, ինչպես պատմագիրն է արտահայտվում¹¹⁸, դարձավ *juri Romano obnoxia* և սկսեց օգտվել նրանց հովանավորությունից»¹¹⁹:

Նախ անդրադառնանք 298 թ. 40-ամյա հաշտության պայմանագրով Հռոմեական կայսրությանն անցած հարավարևմտյան Հայաստանի գավառներին՝ Անգեղտան, Մեծ Ծոփքին, Աղձնիքին, Կորդուքին և Ծավդեքին¹²⁰: IV դ. ընթացքում, հատկապես Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո, այս տարածաշրջանի այլ կազմավորումներ ևս անցան Հռոմեական կայսրության վերահսկողության ներքո, ձևավորելով ինքնավար «սատրապություններ»¹²¹: Հուստինիանոս կայսեր ժամանակաշրջանում դրանք, ըստ Պրոկոպիոսի, հինգն էին, իսկ ըստ Հուստինիանոս կայսեր 31-րդ նովելլայի՝ վեց. Անձիտ, Անգեղտուն, Հաշտեանք, Ծոփք, Ծոփք Շահունյաց և Բաղնատուն¹²²: Սրանց գլխին կանգնած էին, ըստ Պրոկոպիոսի, հայ սատրապներ (նախարարներ)¹²³, «որոնց իշխանությունը ժառանգական էր և ցմահ: Նրանք հռոմայեցիների կայսրից ստանում էին միայն նշանակներ»: Ահա և կարևորը Պրոկոպիոսի պատմածում: «Այդ նշանակների մասին արժե խոսել, քանի որ դրանք ոչ ոք չի տեսնելու այլևս¹²⁴: Դա բրդյա քղամիդ էր, սակայն ոչ թե ոչխարի բրդից, այլ ծովից հավաքված: Այդ բուրդը բուսնում է պիննոս կոչված ծովային կենդանիների վրա (*χλαμύς* ή έξ έρίων πεποιτημένη, ούχ οία των προβατίων έκπέφυκεν, άλλ' έκ θαλάσσης συνειλεγμένω. πίννουσ τά ζώα καλεϊν νενομίκασιν, έν οίς ή τών έρίων έκφυσίς γίνεταί): Ծիրանիի այն մասը, որի վրա սովորաբար գտնվում էր բեհեզը, ոսկուց էր: Քղամիդի վրա ամրացված էր լինում ոսկե ճարմանդ՝ մեջտեղում թանկագին քար: Այդ ճարմանդից ոսկե լայն շղթայով կախված էր երեք հակինթ: [Քղամիդից բացի] կար նաև մետաքսյա պատմուճան, ամենուրեք պաճուճված ոսկե զարդերով, որոնց պլուսմիա են անվանում, և մինչև ծունկը հասնող կարմիր կոշիկներ, որոնք սովորա-

¹¹⁸ Ամմիանոս Մարկելլինոսը (XXIII,5):

¹¹⁹ Ն. Ա. դ. ո. ն. ց. նշվ. աշխ., էջ 103-104:

¹²⁰ Բ. Հ. Հարությունյան. Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգի ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 2001, էջ 141:

¹²¹ Նույն տեղում, էջ 142-143:

¹²² Պրոկոպիոս Կեսարացի, էջ 190-191:

¹²³ Այդպես են կոչված և հայկական աղբյուրներում: Հմմտ. «Կմեծամեծ նախարարսն սատրապսն Հայոց» (Փառստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 113):

¹²⁴ Ջենոն կայսրը վերացրել էր Զորորդ Հայքի հայ նախարարների իշխանությունը՝ 484 թ. իր դեմ բարձրացված ապստամբությանը մասնակցած լինելու պատճառով:

րսար Հապնում են Հռոմայեցիներին և սլարսից թագավորները: Հռոմեական զորքը երբևիցե օգնութիւն չի ցուցաբերել ոչ Հայոց թագավորին, ոչ էլ սատրապներին: Պատերազմական գործերում նրանք ինքնուրույն էին»¹²⁵:

Տրամաբանական չէ՞ Կոստանդին Մեծի՝ Տրդատ թագավորին շնորհած «ծովային ծիրանու», «օքսուենական մետաքսօք» և թանկագին քարերով ազուցված հանդերձանքի տակ տեսնել սկզբնական շրջանում 298 թ. Հռոմին անցած հարավարևմտյան Հայաստանի Անգեղտան, Մեծ Ծոփքի, Աղձնիքի, Կորդուքի և Ծավդեքի ինքնավար նախարարներին, հետագայում նաև Չորրորդ Հայքի հինգ (կամ վեց) սատրապներին շնորհված նշանակները, ամենևին առաջ «ծովային կենդանիների վրա բուսնոգ բույլից պատրաստված քղամիզը, մետաքսյա պատմուճանը»: Եթե նրանց Հագած երկարածի կարմիր կոշիկները¹²⁶ նույնն էին, ինչ Հռոմայեցիներին և սլարսից վեհապետներին Հագածը, այն, որ նրանք սլատերազմական դործերում ինքնուրույն էին, դա վկայութիւններ չէ՞ այն բանի, որ նրանք (ինչպես և Տրդատ արքան) ընդամենը վայելում էին կայսեր Հովանավորութիւնը: Եվ այն, ինչ Տրդատը ստացավ Կոստանդինից, նրան «հասնում էր» ըստ կանոնակարգի:

Պրոկոպիոսից հետո «սատրապներին» կայսրից ստացած «ծովային կենդանիներից» հավաքված բրդից կարված քղամիզի մասին այլևս իմացող չկար: XI–XIII դդ. կղզիքի հեղինակը կարող էր այդ մասին գիտենալ: Պարզ չէ՞, որ Տրդատի ստացածի մասին վկայութիւններ Համապատասխանում է իրականությանը, որ այդ մասին գրված է եղել հենց IV դ. փաստաթղթում:

Քանի որ անդրադարձանք և ճշգրտեցինք «Դաշանց թղթում» առկա վերոհիշյալ «ծովային» թեման, ապա նշենք հաև, որ նրանում կան և ուրիշները: Կոստանդին կայսրը «ծովային ծիրանեօք»-ից բացի, Տրդատ թագավորին «օժտեց» «և արքունադրոշմ նշանաւոր կառօք և ծովային օգտաթուիչ երկվարօք ոսկէսարօք» (էջ 17): Երկվարի առնչութեամբ «օգտաթուիչ» նշանակում է «արագավաղ», «արագ սլացող»: Իսկ «ոսկէսարօք»: «Ոսկին» հասկանալի է, իսկ «սարօք»: Պարզվում է, որ նշանակում է «ձիու բաշ»: Ուրեմն, Տրդատի ստացածը կայսերական դրոշմը կրող կառք է, որին լծված են արագավաղ, սրաթուիչ, սրարչավ «ոսկե (չեկ) բաշ» (վարսք) ունեցող երկվարներ: Ավելորդ է ասել, որ ուսումնասիրողները այս նախադասութեան վրա էլ ոչ մի ուղղորդութիւն չեն դարձրել: Մենք ստիպված ենք մխրձվել հին հունական դիցաբանութեան մեջ և սլարդել սրանց ինչ լինելը:

Հին հունների բանաստեղծական երևակայութեամբ, երբ հեռու հորիզոնում տեսնում են քամու բարձրացրած փրվրած ու սլացող ալիքները, նրանց թվում է, թե դրանք իրենց բաշը աատանող, արագ խոյացող երկվարներ են: Այդպիսիք են ծովի ատաված Պոսեյդոնի կառքին լծված ձիե-

¹²⁵ Պրոկոպիոս Կեսարացի, էջ 190-191:

¹²⁶ Թեոփանես խոստովանողի վկայութեամբ, Լազերի վերահիշյալ թագավոր Յաթիոսի կոշիկները ևս կարմիր էին, մարդարիտներով ազուցված «սլարսկականների նման»: (τα γὰρ τὰ γὰ γὰ αὐτοῦ ροῦσια ἦσαν ἐχοῦτα μαργαριτὰς περὶ στικῶ σχηματι). Theophanis Chronographia, p. 168.

ըր¹²⁷: Այդ մասին տեղեկանում ենք Հոմերոսի *Իլիականից*: Այսպես, Իլիական, գլ. 13, 23-24.

ἔϊθ' ἔλθωϊ (ὁ Ποσειδωϊ) ὑπ' ὄχεσφι τετιυκετο χαλκοπόδ' ἱππιω
ἠκυπέτα χρυσέησιν ἔθειρησιν κυμῶσιν τε.

(«Հասնելով այնտեղ (Պոսեյդոնը էգես վայրը — Հ. Բ.) կառքին լծեց երկու սղոնձասմբակ ձիեր, որոնք սլանում էին արագ և ունեին ոսկե բաշեր»):

Նշենք այստեղ Արսեն Բաղրատունու մեղ հետաքրքրող տողերի թարգմանությունը.

«Անդր Հասեալ՝ զպղընձասմբակ լըծեաց ի գոյգսըն զերկվարսն
ըսրաթուիչ օղապարիկս՝ ոսկեգիսակ վարսագեղեալս:

Ահա և Համաղասս շամբարձումյանի թարգմանությունը.

«Հենց որ աստվածն Հասսավ այնտեղ, կառքին լծեց ձիերն արագ
գեղեցկագես ու ոսկեբաշ սղոնձակուռ սմբակներով»:

Արդ, կասկած կա՞, որ «Դաշանց Թղթում» ասվածը գալիս է Հոմերոսի *Իլիականից*: Կրկնենք. «արքունադրոշմ նշանաւոր կառօք և ծովային օդաթուիչ երկվարօք ոսկէսարօք»: Նշանակութուն չունի «Դաշանց Թղթում» դա մուտք է գործել ուղղակի՝ Հոմերոսի *Իլիականից*, թե՛ վերցվել է որևէ այլ, անտիկ շրջանի երկի միջնորդութամբ: Բոլոր դեպքերում XI—XIII դդ. կեղծիքի հեղինակն այդ մասին հստակ թե գաղափար ունենար: Մնում է խորհրդածել և Հայոց «Հղօր Հաղարսպետաց» Կոստանդնի սրբաբանած «նժոյգ ծովայինք»-ի շուրջը ևս:

Կանգ առնենք «Դաշանց Թղթի» մի այլ «ծովային» թեմայի վրա: Մի շատ հետաքրքիր, բայց և անչափ կարևոր, նախագասութուն և բառ հանդիպում են Մեծն Կոստանդնի կողմից Տրիատ թագավորին (և իրը՝ Գրիգոր Լուսավորչին) մատուցած պարգևների թվում: Այդ նախագասութունը Կ. Շահնազարյանցի հրատարակած «Դաշանց Թղթի» բնագրում մասամբ աղավաղված է, մասամբ կրճատված և մեղ Հայտնի է աղբյուրի 1683 թ. editio princeps-ից և 1709 թ. հրատարակությունից: Կ. Շահնազարյանցի հրատարակության համաձայն, Հյուերերին ճանապարհելու առիթով Կոստանդնիսն ասում է. «Ետու տուրս մեծամեծս և սրտրաստեցի վամենայն սլիսոյս նոցա ընդ ծով և ընդ ցամաք ճանապարհին, որ յԱրևելս նաև զօրս արքունականս մինչև ի սահմանս Հայոց» (էջ 28): Իրականություն մեջ նախագասութունն այսպիսին է. «յԱրևելս» բառից հետո կարդում ենք. «զնաւս նորս (Կ. Շահնազարյանցի հրատարակության մեջ՝ «նաև զօրս») արքունականս և գիոսկորանչանս» (1683 թ. հրատ. էջ 32, 1709 թ. հրատ. էջ 419): «Դիոսկորանչան» նշանակում է նավախելի (կամ ցուռի) վրա դրված Դիոսկորոսների պատկերներ: Դիոսկորոսները՝ Կաստորն ու Պոլլիդեկեսը, Ջևսի և Լեզայի երկվորյակ որդիներն էին (հռոմայեցիների մոտ՝ Pollux), սրանցից՝ Երկվորյակների համաստեղությունը (լատ. Gemini): Հին հույների հավատալիքների համաձայն, եթե փոթորկի և ալեկոծություն բռնված նավի վերևում երևա հիշյալ համաստեղությունը, դա փրկություն

¹²⁷ P. D e c h a r m e. Mythologie de la Grece Antique. Cinquieme edition. Paris, 1879. p.328.

¹²⁸ Հոմերի *Իլիական*. Հան ի Հայ Հ. Արսէն Կոմիտաս Բաղրատունի ի Մխիթարիանց, Ի Վեներիկ, 1893, էջ 222: Հ ո մ եր ո ս. *Իլիական* (Թարգմ. Հ. Համբարձումյան). Երևան, 1955:

և սպառնալից լինելը կրե՞րի: Համարվելով նավաստիների սլաշապան աստվածություններ, Դիոսկորոսները կոչվում էին արշաներ, փրկիչներ, բարի պաշտպաններ: Մարսիմոս Տյուբրացի փիլիսոփան (II դ.) գրում է, որ ալեկոնոսթյան ենթարկված իր նավից երկնքում նկատել է Դիոսկորոսների համաստեղությունը, որ ճանապարհ էր ցույց տալիս¹²⁹:

«Հոմերոսյան» անվանվող, բայց նրան չողտկանող «Հիմներում» ցույց է տրված, որ ալեկոնոսթյան բունված նավաստիները, կանգնելով նավախելի վրա, փրկություն կոչ են անում Դիոսկորոսներին (Զեւսի որդիներին).

οἱ ο' ἀπό νηῶν

εὐχόμενοι καλέουσι Δίος κούρους μεγάλοιο

ἄρνευσιν λευκοισιν, ἐπ' ἀκρωτήρια βάντες

πρόμνης,

որոնց հանկործակի երեւոյով (համաստեղությունը), դադարում են բամբիները և խաղաղվում ալիքները¹³⁰:

Վ. Վերեսաևի թարգմանությունը.

И кораблям дыстпроходным, когда на неласковом море

Зимние бури бушуют. С судна восылая молитвы,

Люди на помощь зовут сыновей многомощного Зевса¹³¹,

այսինքն Կաստորին և Պոլլիքեկեսին:

Նման մի նավի հիշատակության հանդիպում ենք «Գործք Առաքելության» (28.11): Հոմերի քաղաքացի Պոպոս Առաքյալին տանում են Հռոմ դատելու: Ծանապարհին իրեն ասնող նավը նախապես խորխոր է պցում Մալաա կղզում (հունարենում՝ Μελίτη - Մելիտա, որ Սուրբ Գրքի հայերեն թարգմանության հրատարակություններում սխալմամբ դարձել է Սելիտին): Զմեռելով այնտեղ «յես երից ամսոյ ելաք ի նաւ մի Աղեքսանդրացի որ ձմերեղ էր ի կղզւոջն նշանաւորաւ (բնադրում՝ παρασηνω, այստեղ՝ նավի գինանշան) Դիոսկորացւոց»: (ἀνήχθημεν ἐν πλοίῳ παρακεχειμακότι ἐν τῇ νήσῳ, Ἀλεξανδρίῳ, παρασηνω Διοσκούροις): Հմմտ. մեր աղբյուրի «նաւս նորս արքունականս և դէսկորոսնշանս»:

XI-XIII դդ. «Կեղծարարը» հազիվ թե Դիոսկորոսների և նավի վրա գրված նրանց պատկերների մասին գիտենար¹³²: Իսկ սվեբեր, որ Տրդատին շնորհված նավի պատմությունը իրողություն էին համարում, սպա նրան նավարկելիս էին համարում, թեկուզև լսելյայն, Հռոմից: Այսինքն Տրդատար կարեց Միջերկրականը, ասի դարս եկալ Փոքրասիական լեռանեզս:

¹²⁹ P. D e c h a r m e. Mythologie..., p. 500.

¹³⁰ Վ. Վերեսաևի «Օլիպիկոյ», XXXIII, 6.

¹³¹ Гомеровы гимны. Перевел с древнегреческого В. Вересаев, М., 1926, с. 81, стихи 7-9. Վաղագույն հիմները վերաբերում են մ.թ.ա. VIII- VII դդ., մեղ հետաքրքրողը ստեղծված է Ալեքսանդրյան շրջանում (մ.թ.ա. III- I դդ.):

¹³² XI-XIII դարերի քրիստոնյա հեղինակի համար նավաստիների պաշտպան Ս. Նիկողայոսն է: Ծնվել էր III դ. կեսից Հատ Լիկիայի Պատարա քաղաքում, անվանի քրիստոնյաների բնասնիքում: Դեպի Երուսաղեմ ուխտի դնալիս նրա նավը սարսափելի ալեկոնոսթյան հանդիպեց և իր աղոթքներով այն զաղարեց: Այսուհետե նա համարվեց նավարկողների պաշտպան սուրբը: Մասնակցեց Նիկիայի եկեղեցիաժողովին: Մահացավ 330 թ.: Ինքնըստինքյան հասկանալի է, որ XI-XIII դդ. նավարկողների նավերի վրա ոչ թե Դիոսկորոսների «նշանները» պիտի լինեին, այլ Ս. Նիկողայոսինը: Այսօր էլ Հունաստանում բոլոր նավերը կրում են նրա սրբապատկերը: Եղել են հետազոտողներ, սվեբեր Ս. Նիկողայոսի անձի մեջ տեսնում են Պոսեյդոնի վերահերպությունը քրիստոնեական պաշտամունքում:

չգիտես որ նավահանգիստը, ասիա անցնելով Արևելահռոմեական կայսրության բազում նահանգներով, հասավ իր երկիրը (գնալիս էլ՝ հակառակը):

Նիկոմեդիայի վերաբերյալ մեր դատողությունները մեզ իրավունք են տալիս եզրակացնելու, որ Տրդատը Նիկոմեդիայից Հայաստան վերադարձավ Եվքսինյան Պոնտոսի վրայով, ընդամենն անցնելով մեկ նահանգի՝ Պափլագոնիայի ավերով: Ելենոպոնտոսը Ամասիա կենտրոնով գտնվում էր Տրդատի պետության սահմաններում (Հմմտ. «Դաշանց Թղթում» (էջ 18). «Եւ այս է բուն հայրենիքն Տրդատայ ի լեռնէն Արճիոյ մինչև ի լեռուն Արարատայ և ի Գայլ գետոյն Ելեսպոնտացւոց (կարգա՛ Ելենոպոնտացւոց – Հ. Բ.) մինչև ցհզօր գետն Տիգրիս մեծ», և Նիկոմեդիայից շատ հեռու էր:

Ե) Տեխնիկական տերմիններ (terminus technicus) «Դաշանց Թղթում» - «հայր», «եղբայր», «բարեկամ»

Այստեղ անհրաժեշտ է կանդ առնել մի քանի բառերի վրա, որոնք մաստավորված չեն ուսումնասիրողների կողմից, դեռ ավելին, սխալ են հասկացված: Խոսքը վերաբերում է «հայր», «եղբայր» և «բարեկամ» բառերին, որոնք այլ բան չեն, քան terminus technicus, ոչ, ինչպես կարծում է (կոնկրետ «եղբայր» բառի վերաբերյալ) Կ. Շահնազարյանցը՝ թե «որպես օրենք օգտագործված է դովեստական մակդիրներով» (էջ 20):

Այսինքն «հայր» բառից: Կոստանդին Մեծը, ըստ «Դաշանց Թղթի» մեզ հասած բնագրի, մի քանի անգամ այդպես է անվանում Գրիգոր Լուսավորչին. «Նաև զդաւանութիւն հաւատոյ սուրբ «հօրս մերոյ Գրիգորի» (էջ 13-14), «հոգեզարդ հայրս մեր» (էջ 14), «հայրս հանուրց Գրիգորիոս» (էջ 21): Կոստանդինը «հայր» է անվանում նաև Սեղբեստրոս պապին. «Արդ յայսմ հետէ հնազանդեմք հօրս մերոյ հոգևորի» (էջ 22): Այդ բոլորը, հարկավ, ասպացույց է, որ Կոստանդինը («Հռոմում») անձամբ հանդիպեց Գրիգոր Լուսավորչին: Դա հետո է ավելացվել: Սա սովորական հաճոյախոսություն է, այլ կանոնակարգված սիստեմ, որ դոյատևեց շատ երկար՝ անցնելով Բյուզանդական կայսրություն: Կոստանդին VII Միրանաթին կայսեր (913-959 թթ.) «Բյուզանդական արքունիքի Արարողություններ մասին» (De Cerimoniis aulae byzantinae) աշխատության երկրորդ գրքի 48-րդ գլուխը կրում է «Այլազգիներին ուղարկվող նամակների վերնագրերը» խորագիրը, ուր անդրադառնալով Հռոմի պապին ուղարկվելիք նամակին, ցույց է տրված, որ այն սլետք է լինի այսպիսին. «Հանուն հոր և որդվո և հոգվոյն սրբո՛ մեր մեկ և միակ ճշմարիտ աստուծո: Կոստանդին և Ռոմանոս¹³³ հավատացյալ ի նույն աստված հռոմայեցիների կայսրերը Հռոմի սրբազնագույն այսինչ պապին, մեր հոգևոր հոր»¹³¹: Ինչպես տեսնում ենք, դա բառացի համընկնում է Կոստանդին Մեծի Գրիգոր Լուսավորչի

¹³³ Ռոմանոս I Լեկապենոսը 920-944 թթ. Կոստանդին Միրանաթինի կայսերակիցն էր:

¹³⁴ Օտար աղբյուրները Հայաստանի և Հայկերի մասին 6: Բյուզանդական աղբյուրների գիրք Բ: Կ ո ս տ ա ն գ ի ն Մ ի ր ա ն ա ծ ի ն (Թարգմ., առաջաբան և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի). Երևան, 1970, էջ 152:

վերաբերյալ ասվածին՝ «Հօրս մերոյ Հոգևորի»: Կոստանդին Միրանածինը հիշում է նաև հայոց, վրաց և աղվանից կաթողիկոսներին ուղարկվող նամակների վերնագիրը. «Քրիստոսասեր տերերի հրամանքը այսինչ երկրի ամենարարեսպաշտ այսինչ [Հոգևոր] առաջնորդին»: Կոնկրետ հայոց և աղվանից կաթողիկոսներին նա չէր կարող «Հոգևոր Հայր» անվանել, քանզի մեջտեղում արդեն եկեղեցիների կես հազարամյակի բաժանում կար և մեկը մյուսին «Հերետիկոս» էր համարում, իսկ վրաց քաղկեդոնիկ կաթողիկոսին էլ սրանց էր հավասարեցրել:

Տրդատը (ինչպես և Կոստանդինը) ևս Սեղբեստրոս պապին «Հոգևոր Հայր» է անվանում. «Արդ՝ յայսմ հետէ Հնազանդեմք Հօրս մերոյ Հոգևորի» (էջ 22): Սա այն դեպքերից է, երբ ուզում են կեղծիք տեսնել՝ ընդդեմով պապի վերադահումը: Բայց դա պարտադիր չէ: Հռոմի պապը մինչև 867 թ. Բյուզանդական կայսրության մեջ չորս պատրիարքների թվում՝ Կոստանդնուպոլսի, Անտիոքի, Երուսաղեմի և Ալեքսանդրիայի, որպես Պետրոս առաքյալի փոխանորդ, համարվում էր առաջինը:

Անցնենք «եղբայր» բառին: Դեռևս Կոստանդինից առաջ Դիոկլետիանոս կայսրը դիմում է Տրդատին հետևյալ կերպ. «Ինքնակալ կայսր Դիոկլետիանոս առ սիրելի եղբայր Թագաւոր Հայոց Տրդատ, ողջոյն»¹³⁵: Նույն կերպ շարունակում է և Կոստանդին Մեծը բուն Ազաթանգեղոսի «Պատմութեան» մեջ. «Սոյնպէս և արքային Տրդատայ իբրև եղբաւ սիրելոյ, սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ...»¹³⁶: Նաև «Դաշանց Թղթում».¹³⁷ «Իսկ ի հրամանէ քաջ արանց եղբօրս մեր Տրդատայ» (էջ 13), «եղբայրս Տրդատ» (էջ 14), «բազկակից եղբայր մեր Տրդատ արքայ» (էջ 14), «Համաշունչ եղբարք (Կոստանդինն ու Տրդատը, էջ 14), «զմեծ արքայն Տրդատէս, զհամամիտ և զհամակարի եղբայրն իմ և զբազկակից բարեկամն» (էջ 15), «սպարդևեցի և սիրելի եղբօրն իմոյ Տրդատայ» (էջ 18), «Պատմեցաք Տրդատայ վեսայ եղբօրս իմում» (էջ 22):

«Եղբայր» (լատ. *frater*) բառը ևս *terminus technicus* է, որ Հռոմեական կայսրությունում որոշակի իմաստ ունենր: Դա սլատվո տիտղոս էր Հռոմին դաշնակից ժողովրդին տրվող (*Aedui a senatu fratres appellati*, C. Julius Caesar): Եվ եթե մեր բնագրում Կոստանդինն ու Տրդատը «Փրեր միմեանց» են անվանված (էջ 14), իսկ Տրդատը «Փրերս մեր Տրդատիոս» (էջ 20), փաստ, որին բոլոր հետազոտողները արտակարգ նշանակություն են տալիս; «Թերևս միայն «Փրեր» ֆրանսերեն բառը, որը միակը չէ այս տեքստում, բավական է գրություն ու ժամանակի մասին դադափար կազմելու» (էջ 84), այս դա ոչինչ չի նշանակում, սպարդպես նախասկզբնական «*frater*»-ի («եղբայր») ու թարգմանությունն է:

Հատկաներն *frater* (եղբայր) բառը նույն իմաստով անցել է նաև Բյուզանդական կայսրություն, այս անգամ հունարեն ἀδελφός գառնալով: Կոստանդին Միրանածինի վերոհիշյալ աշխատության մեջ մենք կարդում ենք. «Ռեքսին Սաքսոնիայի: Ռեքսին Բավարիայի (սա Նեմիցներ կոչված-

¹³⁵ Ազաթանգեղոսի Պատմության նորահայտ խմբագրությունը (Վարք) (Թարգմ. բնագրից Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի). – «Էջմիածին», 1966, № 8, 1966, էջ 46:

¹³⁶ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 462:

ների երկիրն է): Գալլիայի ռեքսին: Գերմանիայի ռեքսին: Բուրգ վերոհիշյալներին ուղղված նամակը վերնագրված է այսպես. «Հանուն հոր և որդւն և հոգւուն սրբո, մեր մեկ և միակ ճշմարիտ աստուծո: Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի նույն աստված Հռոմայեցիների կայսրեր, սիրելի և հոգևոր այսինչ եղբոր, երևելի ռեքսին»¹³⁷: Նաև «Ֆրանկիայի ռեքսին ... Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի նույն աստված, վեհ օգոստոս ինքնակալներ, Հռոմայեցիների մեծ կայսրեր, մեր սիրելի, ցանկալի և հոգևոր եղբոր, Ֆրանկիայի ամենաազնիվ, երևելի այսինչ ռեքսին»¹³⁸:

Բացի արքաների «եղբայր» հանդիսանալուն, հոգևոր ղեկավարները ևս միմյանց «եղբայր» էին անվանում: Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկոդայոս Միստիկոսը (901-907, 912-925) Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին դիմում է հետևյալ կերպ. «Սիրելի եղբոր մերում՝ Յովհաննու կաթողիկոսի Հայոց Մեծաց»¹³⁹:

Վերջապես անդրադառնանք նաև «բարեկամ» բառին: «Դաշանց թղթի» հենց սկզբում Կոստանդին կայսրը և Հռոմի պապը, դիմելով Տրդատ թագավորին և Գրիգոր Լուսավորչին, ասում են. «Սիրելի եղբարք մեր ի Քրիստոս և բուն բարեկամքս բարձրագահ իշխանութեանս մերոյ» (էջ 12), «զմեծ արքայն Տրդատէս, զհամամիտ և զհամակարի եղբայրն իմ և զբաղկակից բարեկամն» (էջ 15):

«Բարեկամ» բառը ևս *terminus technicus* է: Լատիներեն *amicus*, որ անցել է Բյուզանդիա, դառնալով φίλος, որ որպես կանոն վերաբերում էր ոչ քրիստոնյա պետութւյան վեհապետին: Այսպես, «Կոստանդին և Ռոմանոս ի Քրիստոս բարեպաշտ ինքնակալներ, մեծ, վեհ օգոստոսներ, Հռոմայեցիների կայսրեր, մեր սիրելի բարեկամ եղբայրս ամիրային»¹⁴⁰: «Հնդկաստանի վեհապետին. «Կոստանդին և Ռոմանոս, հավատացյալ ի Քրիստոս աստված Հռոմայեցիների ինքնակալ մեծ կայսրեր, Հնդկաստանի այսինչ վեհապետին, մեր սիրելի բարեկամին»¹⁴¹:

«Հին փահնամակների հիման վրա Լևոն¹⁴² քրիստոսասեր և իմաստնագույն մեր կայսեր կողմից» 899 թ. Ֆիլոթեոսի կազմած նշանավոր «Գահնամակում»՝ (Վլետորոլոգիոն) այդ «բարեկամը» որպես *terminus technicus* հիշվում է կայսերական ընդունելութւյունների ժամանակ հրավիրված օտարերկրացի մեծավորների առնչութւյամբ. ու էջ՝ Ἀγάριων φίλοι (հաղաբացի բարեկամներ), ἀπὸ Βουλγάρων φίλοι (բուլղար բարեկամներ): Οἱ δὲ ἐκ τῶν λοιπῶν ἐθνῶν ἐρχόμενοι φίλοι (այլ այլազգիներից եկող բարեկամներ)¹⁴³:

¹³⁷ Կ ո ս տ ա ն դ ի ն Մ ի ր ա ն ա ծ ի ն, էջ 152:

¹³⁸ Նույն տեղում, էջ 154:

¹³⁹ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 266:

¹⁴⁰ Կ ո ս տ ա ն դ ի ն Մ ի ր ա ն ա ծ ի ն, էջ 153:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 154:

¹⁴² Լևոն VI (886-912), Վասիլ I-ի որդին և Կոստանդին Միրանաձինի Հայրը:

¹⁴³ N. O i k o n o m i d è s. Les Listes de Preseance Byzantines des IXe et Xe siecles. Paris, 1972, p. 163. Նշեմ այստեղ, որ բյուզանդական արքունիքում որպիս տիրանիկական տիրմին կար նաև «որդի»-ն: Հովհաննես Դրասխանակերտցի կոստանդին Միրանաձին կայսրին հասցեագրված նամակում Սմրատ I Բագրատունու վերաբերյալ գրում էր. «որ

2) Տրդատ - Կոստանդին պայմանագրի կլաուզուլան

«Դաշանց Թղթի» վերջում, քանի որ այն ներկայացվում է որպես մեկ ամբողջություն, գրված է. «Այս գիր միաբանութեան և սիրոյ և Հաստատ Հայրենադրութեան ի Հետ Հայոց գրեցաւ Հրամանաւ մերով Կոստանդեայ կայսեր [և Սեղբեստրոս պապի] ի մեծ սիւնհոլոսիս և ի տօնի սուրբ Առաքելոցս լատին լեզուաւ մակագրեալ և արքունական մատանեաւ մերով կնքեալ և ստորագրեալ»: Դժվար չէ նկատել, որ թեև այն գրված է Կոստանդին կայսեր [և Սեղբեստրոս պապի] «Հրամանաւ», ստորագրված է միայն կայսեր կողմից: Շատ հնարավոր է, որ սույնայ նախագատութունը կրատուցույան (բացի մեր կողմից փակագծերի մեջ առնված բառերից), գտնվում էր «Դաշանց Թղթի» Տրդատ-Կոստանդին դաշնագրութեան վերջում և այն XIII դ. տեղափոխվել է դրան կցված կեղծիքի վերջում, ավելի լայնելով Սեղբեստրոս պապի անունը: Հասկանալի է, պայմանաւորի մասը ակնհայտ պատճառներով (որոնց մասին դեռ կխոսվի), սխալի որ գրված լինելու լատիներեն: Իսկ Տրդատին տրված պատճենը: Հայ Արշակունիների արքունիքում իշխող էր ոչ թե լատիներենը, այլ վրիպավորապես հունարենը: Տրդատն ինքը «յունական աշխարհական դպրութեանն, երկնաւոր իմաստութեանն, յառաջագոյն էր սեղեակ, առաւել վիճիտութեան մտաց հանճարադրութեան հմուտ էր, զի ուսեալ էր զայն»¹⁴⁴: Ինչպես նշվեց վերևում, Հայերեն գրերի գյուտից հետո «Դաշանց Թուղթը» հունարենից թարգմանվեց Հայերեն: Եթե նկատի առնենք Տրդատ-Կոստանդին պայմանագրի Հայերեն թարգմանութեան մեջ սպրդած հունարեն առանձին բառերը՝ սկզբագրաւ (ἰτελευτος - ծով), սիւնհոլոս (σύνδοδος - ժողով, եկեղեցատեղով), դիմոստիան (δῆμοσιοι - պետական, հարկ), դիմոս (δῆμος, ավելի ճիշտ՝ δῆμος - դատական կատարածու), խսուսկեփալթ (χρυσοκέφαλος - բառացի՝ ոսկեգլուխ, այսինքն ոսկե թագ կրող), սուլագիոն (τοπάζιοι, թանկագին քար, բառի հունարեն վերջավորութեամբ), յակունթեայ (βακινθίνος - թանկագին քար), սղամանալէս (ἀδάμαντες հունարենի հողանակի ուղղական վերջավորութեամբ, եղակի ուղղականը կլինի ἀδάμας - ադամաս), վրիպավորուս (δρακοντοκέφαλος-ի բառացի թարգմանութեանը), սղա կարելի է ենթադրել, որ սղամանը գրված է եղել հունարեն¹⁴⁵: Իրրև թե հունարեն էր թարգմանել Ագաթանգեղոսը. «Իսկ միւս գիրս վրիպավորաւ ասեանագրին Հայոց թագաւորին Տրդատայ մեծի, Ագաթանգեղոսի, քաջ ճարտար գրչի և տարեալ ի Հայս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն»:

Հոգևորապես արժանացաւ անուանել ի ձէնը որդի ձեզ ծառայն ձեր» (նույն անգում, էջ 276-277):

¹⁴⁴ Ա գ ա թ ա ն գ ե ո ս, էջ 453:
¹⁴⁵ Դա հաստատվում է և կողմնակի վկայութեամբ: Խոսքով արքայի Հայաստանի արևմտյան բաժնի նախարարների գրած նամակի և նախարարների Խոսքով արքային գրած պատասխանը Արևադիոս կայսրը «Հրամայէ զհաւասար (հունարենում սխալ լինի ԼՏՕԻ՝ - հաւասար, այսինքն սղաման, հմտ. «Դաշանց Թուղթ. «Եւ զհաստարն այսմ թղթոյ», էջ 30 -2.Բ) հեղին գրով ի գիւտնի իւրում դնել, զի պահեսցին յիշատակք ազգաց ապրտամբողջաց. որ կայ մինչև ցայսօր» (Խ ո Ր Ե ն ա Յ ի, էջ 319): Հայերեն գրերի գյուտից հետո «Դաշանց Թղթի» այս առաջին մասը թարգմանվեց Հայերեն:

Բայց մենք, հենց Կոստանդին կայսրին վերաբերող ուղղակի փաստ ունենք: Վերջինիս ժամանակակից և նրա կենսագրությունը շարադրած (*de Vita Constantini*) Եվսեբիոս Կեսարացին վկայում է, որ «Թագավորը իր ճանաչող թելադրում էր լատիներեն, իսկ դրանք մեր լեզվին (հունարեն – չ. Բ.) թարգմաններն էին փոխադրում, դա էր նրանց պարտականությունը»¹⁴⁶ (տի̅ η̅με̅τέ̅ρα̅ Ῥω̅μα̅ία̅ μ̅έν̅ γ̅λώ̅τ̅τ̅η̅ τ̅ή̅ν̅ τ̅ω̅ν̅ λ̅ό̅γ̅ω̅ν̅ συ̅γ̅γ̅ρα̅φ̅ή̅ν̅ βα̅σι̅λ̅ε̅υ̅ς̅ πα̅ρε̅ῖ̅χε̅. με̅τέ̅βα̅λλ̅ον̅ δ̅ ἄ̅υ̅τ̅ή̅ν̅ με̅θε̅ρ̅μ̅η̅νε̅υ̅τ̅α̅ί̅ φ̅ω̅ν̅η̅ τ̅ή̅ ἡ̅με̅τέ̅ρα̅ ο̅ῖ̅ς̅ τ̅ο̅υ̅τ̅ο̅ ποι̅ε̅ῖ̅ν̅ ἔ̅ρ̅γ̅ο̅ν̅ ἦ̅ν̅). Նույն Եվսեբիոս Կեսարացուց հայտնի է, որ Կոստանդինը շատ լավ տիրապետում էր և հունարեն լեզվին և Նիկիայի ժողովում հանդես էր գալիս նաև հունարենով»¹⁴⁷ («Ἐλλη̅νι̅ζ̅ω̅ν̅ τε̅ τ̅ή̅ φ̅ω̅ν̅η̅ ὅ̅τι̅ μ̅η̅δ̅ε̅ τ̅α̅ύ̅τ̅η̅ς̅ ἀ̅μα̅θ̅ῶ̅ς̅ ε̅ῖ̅χε̅»). «Դաշանց Թղթի» առաջին մասում լատիներեն բնագրի թարգմանիչ չի հիշվում: Հնարավոր է, որ հիշյալ նախադասությունը դրված է եղել հետագայում՝ Ագաթանգեղոսի «Պատմություն» միջնորդությամբ:

Է) Ե՞րբ, ու՞մ կողմից է գրված և ու՞մ է հասցեագրված «Դաշանց Թուղթը» մերկա վիճակում

Եթե լուծենք առաջին հարցը, ապա իրենց պատասխանը կստանան և մնացածները: Ոչ ոք չի կասկածում, որ «Կեղծիքը» ստեղծվել է Կիլիկիայի հայկական պետություն սահմաններում¹⁴⁸, ենթադրաբար՝ XI-XIII դդ.:

Նախապես կանգ առնենք քաղաքական խնդրի վրա: XI դ. վերջին 20-ամյակում հռչակված Կիլիկյան Հայաստանի իշխանության գլխավորողը կարո՞ղ էր «կայսերակերպ», «կայսերական թագ կրող», «մեծն արքայն», «պսակաւոր», «արևելեան ահեղանշան» թագավոր, «թագաւոր և իշխան միահսծան», Արևելքի վրա «տիրաբար իշխող» համարվել: Երբ Կիլիկյան Հայաստանը որպես իշխանություն հռչակվեց 1080 թ. և տապալվեց 1137 թ. իշխան Լևոնի գերմամբ և Կոստանդնուպոլիս աքսորով ու մահո՞վ: Ուստի Տրդատ թագավորի անվան տակ XII դ. վերջի և XIII դ. առաջին կեսի Կիլիկիայի հզոր վեհապետն է թաքնված (Լևոն II - Հեթում I):

Անցնենք Գրիգոր Լուսավորչին: Նա «Քրիստոսի կենդանի վկան» է, «Լուսաւորիչն ամենայն Արևելից և Հիւսիսոյ», նա եկեղեցիների չորս սյուններից մեկն է՝ Հռոմի պապից հետո երկրորդը: Նա «Համապատիւ է Հռոմի հզօր աթոռին, և Երուսաղէմացւոց և Անտիօքացւոց և Աղեքսանդրացւոց»: Նրան Հռոմի պապն է օծել «պատրիարք Հայոց Մեծաց. զի ինքն և ամենայն աթոռաժանգք սորա ինքնազլուլս եղիցին՝ յիւրեանց եպիսկոպոսացն առնելով ձեռնադրութիւն առաջարկութեամբ իւրեանց թագաւորին»: Դեռ ավելին. «և պատրիարքքն երեքին՝ Երուսաղէմի և Անտիօքայ և Ա-

¹⁴⁶ Eusebii De Vita Constantini, Lib. IV, cap. XXXII.

¹⁴⁷ Նույն տեղում, Lib. III, cap. XIII, col. 1069:

¹⁴⁸ Անուղղակի կերպով դա մատնում է հենց «Դաշանց Թուղթը»: Սեղբեստրոս պապը Գրիգոր Լուսավորչին շնորհած ընծաները նկարագրելուց հետո, ցույց է տալիս, որ «բաղում զարդս անգինս և անգիւտս ամենայն աշխարհաց, զոր առաքեցի սուրբ խորանացն, որք ի խորին Հայս են, յորում էջ յայտնապէս Միածին Որդին Աստուծոյ» (էջ 24): Էջմիածինը (պարզ է, որպես Հայոց եկեղեցական կենտրոն, հետևաբար և Վաղարշապատը որպես քաղաքական իշխանություն կենտրոն) ամենևին էլ «ի խորին Հայս» չեն, այդպիսիք են նրանք եթե դիտենք Կիլիկիայից:

ղեքսանդրիոյ յորժամ ձեռնադրին՝ կամաւ և ընտրութեամբ Հայոց Հայրապետին լիցի, և որ ոք նստցի յաթոռ պատրիարքութեան, զգաւանութիւն հաւատոյն իւրոյ, զոր պարտ է մեզ (Հոռմի պապին — Ղ. Բ.) ծանուցել՝ զայն Հայոց Հայրապետին ծանուցէ. զի զնա կարգեցաք մեզ դիւստիտիան և հրամանահան ի վերայ ամենայն ասիական միջնաշխարհի»: Հոռմի պապը իբրև թե «ընդհանրական հրովարտակ» է առաքում Անտիոքի, Երուսաղեմի և Ալեքսանդրիայի լատին պատրիարքներին, որպեսզի նրանք «զՀայոց Հայրապետն համապատիւ տեսցեն ինքեանց մանաւանդ թէ և նախագահ իսկ»¹⁴⁹. Վասն զի յերկոտասան Առաքելոցն չորքն անդ¹⁵⁰ կատարեցան»¹⁵¹: Խոսքը հիշյալ երեք պատրիարքութիւններին հիմնադիրներին է վերաբերում: Իսկ չորրորդը՝ Ու՞մ է առջարկում «Դաշանց թուղթը»: Պարզ չէ՞, որ լուելյայն Գրիգոր Լուսավորչին, «Քրիստոսի կենդանի վկային»՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին, որ սվյալ պահին Հոռմկլայում էր նստում, և կաթողիկոսութիւնը: Կարճ ասած՝ Հայոց անկախ պետութեան հողերը կենտրոնում: Ուստի բացառվում է XI դ., քանզի բյուզանդացիները 1046 թ. լուծարել էին Հայոց կաթողիկոսութիւնը, Պետրոս կաթողիկոսին՝ աքսորել, իսկ հիշյալ դարի 80-ական թվականներին տարբեր վայրերում կազմավորվել էր չորս կաթողիկոսութիւն: «Ի մամանակիս այսմիկ, — գրում է Մատթեոս Ուռհայեցին, — ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա Տէր Վահրամ յԵգիպտոս, և Տէր Թէոփորոս ի Հոնին, և Տէր Իւրսեղ ի Թագաւորաբնակ քաղաքն Հայոց յԱնի, և Տէր Պողոս ի Մարաշ քաղաքն. և սոքա իւրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս և օծանէին եպիսկոպոստնս և տային օրհնութիւն սուրբ Վրթոյն, և ի նոցանէ օրհնէին քահանայք, և լինէր պատարադ և մկրտութիւն և պսակն կուսանաց: Եւ էր այս ամենայն սուգ մեծ ի վերայ Եկեղեցոյն Աստուծոյ»¹⁵²:

«Սեղբեստրոս պապը» սրանցից ո՞ր մեկին պիտի Անտիոքի, Երուսաղեմի կամ Ալեքսանդրիայի լատին պատրիարքութիւններին հավասարը համարեր: Սեղբեստրոս պապը Գրիգոր Լուսավորչին է նվիրում Երուսաղեմի առաջին եպիսկոպոս սուրբ Հակոբ Տեառնեղորոս պապական վակասը, իր մատանին, դավադանը և շատ այլ բաներ: Եվ ամենաանհավասարին. «Եկն ահիւ մեծաւ առաջի Սուրբ Լուսաւորչին և ի ծունկս իջեալ համբուրեաց զբարձս նորա» (էջ 26): Նախագաստութեան մեկը Հայոց կաթողիկոսի՝ Գրիգոր Լուսավորչի բոլոր «աթոռաժամանակները» ինքնագլուխ լինելն է, ձեռնադրվելը հայ եպիսկոպոսներից՝ առաջարկութեամբ հայոց թագավորի: Իսկ

¹⁴⁹ Չհասկանալ «նախագահող», այլ primus inter pares:

¹⁵⁰ Այսինքն Մերձավոր Արևելքում: Հակոբը, Մատթեոսը և Սիմոնը՝ Երուսաղեմում, Մարկոսը՝ Ալեքսանդրիայում:

¹⁵¹ Այս նախագաստութիւնը «Դաշանց թուղթի» 1683 թ. հրատարակութեան մեջ մի փոքր տարբեր է. «զի զՀայոց Հայրապետն համապատիւ տեսանցին ինքեանց, գոյով Հայր հոգևոր բոլորի արևելեան յորում առաքելոցն Քրիստոսի չորքն մարտիրոսութեամբ են կատարեցեանք» (էջ 32): Սրանք մարտիրոս են, Գրիգոր Լուսավորչը՝ «վկա», այսինքն հունարեն մարտիրոսի փոխարեն հայերեն վկա, որ հունարեն բառի հայերեն թարգմանութիւնն է: Հմմտ. Ագաթանգեղոսի հունարեն թարգմանութեան մեջ. «καὶ τὸν μαρτυρα (Գրիգոր Լուսավորչին) καὶ αρχιερέα δεξασθαι καὶ τὸν βασιλέα Ἀρμενίας εἰς πακτα καὶ φιλικαί προτρέψασθαι» (G. G a r t t e. Documents pour servir à l' etude du Livre d'Agathange. Città del Vaticano, 1946, p. 106).

¹⁵² Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ց ի. Ժամանակագրութիւն, էջ 229-230:

«աթոռաժառանգները» պարզ չէ՞, որ Ամենայն Հայոց կաթողիկոսներն են, իսկ թագավորները՝ Կիլիկիայի Հայոց թագավորները: Որտե՞ղ է այստեղ ունիթոռն ու ունիթոռությունը:

Այսպիսով սրազ է, որ Գրիգոր Լուսավորչի անվան տակ թաքնված է Ամենայն Հայոց կաթողիկոսը և «Դաշանց Թուղթը» չէր կարող արտացոլել Կիլիկյան Հայաստանի անդամ XII դ. քաղաքական իրավիճակը: Այն արտացոլում է Կիլիկիայի Հայկական պետության հզորացման շրջանը, երբ Լևոն II-ի օրոք իշխանությունից այն վերածվեց հզոր թագավորության, նրա վեհապետը՝ Լևոն II-ը «էր ճոխ և յաղթարդաց և հարկադիր և լծատանջ ամենայն շրջակա ազգացն»¹⁵³: Կիլիկիայի թագավորը Արևմտյան Եվրոպայի և Բյուզանդիայի կողմից ճանաչվեց *ռեքս* (*rex* - թիֆ), ինչպիսիք էին Ֆրանսիայի թագավորը («ոչ¹⁵⁴ տը Ֆրանցն» (*roi de France*), Անգլիայի թագավորը («ոչ ձառլն» - *roi Charles*), Գերմանիայի կայսրը («ըմբուսուրն Ալամանաց - *Imperator*)¹⁵⁵: Այսինքն Կիլիկիայի թագավորը համարվեց սրանց հավասարակորը (համտ. «Դաշանց Թղթի» վկայությունը Տրդատի մասին. «Թագաւոր և իշխան միահեծան ... իշխան սշխարհակալ և հրամանահան հզոր առհասարակ ծովու և ցամաքի, և մի՛ ոք իշխեսցէ ի ձէնջ (ակնարկվում է Մերձավոր Արևելքի խաչակիր պետությունները - Հ. Բ.) դիմադարձ լինել հոյակապ հրամանաց հզորին Հայոց» (էջ 15-16, Կիլիկիայի թագավորին):

Այդ չէ՞ր պատճառը, որ Կիլիկիայի վեհապետները, հիմե Ռուբինյանները իշխանություն շրջանում սեփական դրամ չհատեցին (Թորոս I-ի - 1099-1129, Թորոս II-ի 1145-1169 և Ռուբինյան վերջին իշխանի՝ Լևոն II-ի 1187-1198 կողմից սահմանափակ քանակությամբ սոսկ ներքին շրջանառության համար հատեցին պղնձե դրամներ), ապա թագավորության շրջանում սլաշտոնասպես ճանաչվելով Բյուզանդիայի և Սյրբազան Հռոմեական կայսրության (և Հուռի սլասի) կողմից *rex* - թիֆ, իրավունք ստացան հատելու միջազգային շրջանառություն ունեցող նաև արծաթե և ոսկե դրամներ: Հեթում I-ի օրոք (1226-1270) թողարկվեցին նաև Հեթումի և Լիոնիայի սելջուկյան սուլթաններ Քեյ-Կուբադի և Քեյ-Խոսրովի անունով՝ հայերեն և արաբերեն մակագրությամբ արծաթե դրամներ¹⁵⁶, փաստ, որ վկայում է Հայոց թագավորության ճանաչման մասին նաև սելջուկյան սուլթանության կողմից:

«Կեղծիքը» ստեղծվել է XIII դ. առաջին կեսում Կիլիկիայի Հայկական թագավորության եկեղեցական ու քաղաքական վերնախավի կողմից, այն հասցեագրված էր ո՛չ թե հայերին, այլ իրաչափիրներին: Օգտագործելով

¹⁵³ Վ ա ր գ ա ն Բ ա ր ձ ր ք Ե ր դ ց ի. Պատմութիւն Տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 182:

¹⁵⁴ Կորիկոսի անը Հեթումի ժամանակագրության մեջ Ֆրանսիայի և Անգլիայի թագավորները կոչված են «ոչ», այսինքն նշված է «Թագավորի» իտալերեն անվանումը (TC):

¹⁵⁵ Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պտտմութեանց, այսինքն ի Հայոց, ի Ֆրանկոց, ի Յունաց, ի Յասորոց, աշխատութեամբ իմոյ ծառայիս Քրիստոսի Աստուծոյ Հեթմոյ տեառն Կուռիկոսայ, ի թվականի Հայոց Չիւն (1296): Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., հ. Ա (կազմեց Վ. Ա. Հակոբյան). Երևան, 1951:

¹⁵⁶ Լևոն II - Քեյ Խոսրովի երկնդվյան դրամ գտնվել է անգամ Հունաստանի Թեսալիա նահանգում: Տե՛ս Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. Նյութեր գաղութահայ պատմության. - ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հաս. պիտ.», 1989, №3, էջ 76-77:

պետությունների հզորագույն ժամանակը, Կլիվկիայի հայոց ղեկավար այրերը փորձեցին շահարկել Տրդատի և Կոստանդին Մեծի միջև խոր անցյալում իրոք կնքված բարեկամության և փոխադարձ օգնության սլաշմանագիրը՝ հանդես գալու Մերձավոր Արևելքում հաստատված խաչակիր իշխանությունների և թագավորությունների, երեք լատին պատրիարքությունների հավասար կարգավիճակում¹⁵⁷, նամանավանդ, որ խոր անցյալում մեր պատմության մեջ նախընթացը կար: Հովհաննես Դրասխանակերտցին, պատրիարքական աթոռը Եփեսոսից նոր մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիս տեղափոխելու առթիվ, գրում է, թե «Կոստանդուս որդի մեծն Կոստանդինոսի, յԵփեսոս է յ Կոստանդինուպոլիս զնշխարս ոսկերայ Յովհաննու Աւետարանչին փոխեալ, և յայնմանէ համարձակութիւն աւետու պատրիարք յ Կոստանդնուպոլիս կացուցանէ: Ապա ըստ նմին յայսմ պատճառի համարձակութիւն և Երուսաղէմայուցն աւետու՝ զԻւրեանցն ևս աթոռ հաստատէին, ի պատիւ պատրիարքութեան իրաւունս համարեալ ըստ որում և ի նմա գոյ տեսեալ եղև բանին Հօր ծնունդ և ընդ մարգկան շրջիլ և ի Յովհաննէ մկրտիլ, և խաչիլ, թաղիլ և յերրորդ աւուր յաւնել: Եւ վասն զի ցայն վայր չորք միայն էին ընդ երկրաւ պատրիարք ըստ չորից աւետարանչացն՝ Մատթէոսին յԱնտիոք, Մարկոսին յԱղէքսանդրիա, Ղուկասն ի Հոսի և Յովհաննու յԵփեսոս. ապա յայսմանէ իրակերտութեանց վեց բովանդակեալ կային: Ըստ սմին սակի ասա և մերն թագաւոր Արշակ և նախարարութիւնք Հայոց համարձակութիւն աւետալ կացուցին ի սլաւարարութիւն սանս Թորգոմայ ղմեծն Ներսէս, վաստս իրաւաւորս ըստ արժանին ի մէջ աւետալ գոտրք առաքեալսն մեր՝ ղԲարթեղիմէոս և ղԹագէոս, որք Ասքանաղեանս ազին վիճակեցան ի Տեառնէ քարոզք և աւետարանիչք, և նշխարեալ ոսկերք նոցա՝ կան ի միջի մերում, զորոց և զաթոռն իսկ ընկալաւ կենդանի մարտիրոսն Գրիգորիոս»¹⁵⁸:

«Դաշանց թղթում» Բյուզանդիա դոյուքուն չունի, հիշյալ ժամանակաշրջանում՝ 1204-1261 թթ. այն պարփակված էր Նիկիայի շրջանում և քաղաքական ու ռազմական տեսակետից շոշափելի ուժ էր ներկայացնում: Իսկ Կլիվկիայի հայկական թագավորությունը գտնվում էր յոր հզորություն գագաթնակետին: Նրա հետ հաշիփ էին նստում և՛ Նիկիայի բյուզանդական կայսրերը (1204-1261), և՛ Տիեզերական պատրիարքը: Գերմանոս II պատրիարքի (1222-1244) Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսին հղած նամակի վերնադրում ասված էր. «Համայն սիեզերքի Հայոց եկեղեցւոյ վեհափառ կաթողիկոսին, իմաստութեամբ և խոհեմութեամբ բարեգորդեալ տէր Կոստանդին»: Իսկ նրա հաջորդ՝ պատրիարք Մանուիլ II-ը (1244-1255) թագավոր Հեթումին և Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին ուղարկած նամակում (1247/1248) գրում էր. «Ամենաբղանկազոյն, ամենազնվուզոյն, ամենափառաւորազոյն, ամենավեհագոյն, ամենսանուանի թագաւոր ամենաարի և մեծազօր հայոց ապգի»:

¹⁵⁷ Դա էր դրդապատճառը: Անտեսելով այն, Աշ. Հովհաննիսյանը գրում է, թե «Հայ կաթողիկոսությունը ոչ միայն դերիշխող, այլ նույնիսկ հավասարազոր չի ճանաչվիլ երբեք Երուսաղեմի, Անտիոքի կամ Ալեքսանդրիայի պատրիարքությունների հանդեպ» (Դրվագներ. հ. Ա, էջ 70): Դա միանգամայն ճիշտ է, բայց XIII դ. առաջին կեսին հայոց ղեկավար այրերը դա շատ էին ցանկանում...

¹⁵⁸ Յովհաննու Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 46-47:

Նաև՝ «ամենաերևելի հայոց ազգի երիցս ազնուագոյն, ամենաերջանկագոյն թաղաւոր»: Ահա և Հայոց կաթողիկոսին ու հայ կղերին նրա տված բնորոշումը. «Իմաստաւթյամբ, իրհմումնությամբ և կորովամտությամբ զարդարյալ Հայոց եկեղեցու վեհափառ կաթողիկոս, հայոց ազնւական ազգի համայն եպիսկոպոսներ»: Ապա և քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաները. «Գերամեծար, ամենաերևելի, սրբազան աստիճանակարգում աչքի ընկնող բարձրագույն պաշտոնյաներ, զինվորական կարգերում ընդգրկվածներ»¹⁵⁹:

Այս լույսի տակ պարզաբանվում և իրենց բացատրութունն են գտնում «Դաշանց թղթի» մի շարք այլ «Կեղծիքներ»: «Պարգևեցի և նորապսակ Պարթևիս մերոյ, – ասում է Սեղբեստրոս պապը, – յիշատակ յաւիտեանական ազգաց յաղոս ի յերուսաղէմ քաղաքի իջևան Հայոց աղօթականացն զվկայարանն Սրբոյն Յակոբայ, եղբօրն Յոհաննու, զի ի յարքունական դանձուցն շինեսցեն զեկեղեցի և ածցեն պարիսպ բարձր շուրջանակի և ի ներքս սրահս և սենեակս առանձնականս արանց և կանանց ի Հայոց եկեղոցն, և ռոճիկ՝ նոցա և ամենայն պիտոյք ի գալ և ի գնալն յարքունուստ լիցի: Պատրաստեցի և տեղի պատարագի Սրբոյն Գրիգորի ի Յարութեան մեծի եկեղեցուջն զԳողգոթայ զիսաչելութեանն և զսնարից զուպայն և զմիջի կանթեղն մշտավառ, որ կան երեք կանթեղք ի վերայ գերեզմանին Քրիստոսի յիշատակ Լատինացուց և Հայոց և Հելլենացուց» (էջ 28):

Այդ բոլորը հայերին «Սեղբեստրոս պապը» չէ, որ պարգևեց: Դրանք հայերն իրենց ջանքերով ձեռք բերեցին: «Կեղծիքը» մի նպատակ էր հետապնդում: Քրիստոնեական եկեղեցու կողմից մեծ հեղինակութուն վայելող, այդ թվում և Հայոց եկեղեցու կողմից (հիշենք նրա «Վարքի» հայերեն թարգմանութունը) Սեղբեստրոս պապի անվամբ ու հեղինակութամբ ամրագրել և տարածաշրջանի լատինների ոտնձգութուններինց պերժ պահել Սուրբ վայրերի հայոց շարժական ու անշարժ գույքը, այն պահպանել «հաստատուն և անփոխադրական» (էջ 11): Եթե «Դաշանց թղթում» ոչ մի այլ փաստ գոյութուն չունենար, ապա սոսկ այս «անփոխադրական» բանը բավական էր ապացուցելու համար մեր աղբյուրի լույս աշխարհ դալու հիմնական գրողապատճառներից մեկը: Անգամ եթե «Դաշանց թղթում» հնարավոր է նկատել ինչ-որ «զիջումներ» Հռոմի (կամ ըյուզանդական) եկեղեցու հանդեպ, դա մեզ չպետք է խրտնեցնի: Դա կիլիկյան իշխանութունների նրբին քաղաքականության արտահայտութունն է, որ հանդես է դալիս ամեն քայլափոխին, քաղաքականութուն, որով մեկ տասնյակ թշնամական պետութունների շրջապատում գտնվող հայ կիլիկիան գոյատևեց ամբողջ երեք դար, այնքան, ինչքան Արշակունիները, երկու անգամ ավելի, քան Բագրատունիներն ու Արծրունիները, որոնք, փաստորեն, մեկ թշնամի ունեին՝ Բյուզանդական կայսրութունը: Նման քաղաքականության վերաբերյալ մենք ունենք բազում օրինակներ: Գրիգոր Տղա կաթողիկոսը բյուզանդական կայսր Իսահակ II Անգելոսին նամակ էր գրել, թե վառվում է իր սիրտը բյուզանդական եկեղեցու հետ միանալու սիրով, Կոստանդին Դ Լամբրոնացի կաթողիկոսը Կոստանդնուպոլսի Եսայաս

¹⁵⁹ Հ. Բ. ր. թ. 4 Ե ա ն. Հայ-բիզանդական եկեղեցական յարաբերութիւնները փաստաթղթերում, էջ 62 և 74:

պատրիարքին՝ թե «բացարձակորեն խոստովանում են հունադավանութ-
յուն և խնդրում ու աղաչում հայերին ընդունել բյուզանդական եկեղեցու
գիրկը, որ խոստովանում են հույների հետ ամեն ինչում համամիտ ու հա-
մահավատ լինել»։ Միության մասին «գաղտնի» նամակ էր գրել նաև
Ներսես Դ Շնորհալի կաթողիկոսը։ Բայց միության գործով մազիստրոս
Թեորիանոսի գլխավորութամբ Կիլիկիա ժամանած բյուզանդական պատ-
վիրակությունը ձեռնունայն վերադառնալով Կոստանդնուպոլիս, սինոդին
զեկուցեց, թե կասկածելի է, թե Ներսեսը անկեղծորեն ցանկանում է միութ-
յունը, կաթողիկոսը «երբեք չի համաձայնի միությանը»։ Վերջապես եկե-
ղեցիների միություն էր խոստացել 1247/1248 թթ. նաև Կոստանդին
Բարձրբերդցի կաթողիկոսը, բայց երբ բյուզանդական պատվիրակությունը
ժամանեց Կիլիկիա, կաթողիկոսը նախօրոք գնացել էր Հռոմկա։ Իսկ Հե-
թում թագավորն ասաց, թե առանց կաթողիկոսի և Հայոց եկեղեցու բարձ-
րաստիճան գործիչների հնարավոր չէ միությունն իրականացնել։ Կոս-
տանդին Բարձրբերդցին նման քայլի էր դիմել նաև 1239 թ.։ Նշենք նաև,
թե ուլքեր են «լատիններն» և որը «լատիններն լեզուն», որով զբված է
համարվում ամբողջ «Դաշանց թուղթը»՝ իր երկու բաժիններով։ «Այս գիր
միաբանութեան և սիրոյ և հաստատ հայրենադրութեան ի հետ Հայոց
գրեցաւ հրամանաւ մերով Կոստանդեայ կայսեր [և Սեղբեստրոս պապի] ի
մեծ սրենհոգոսիս և ի տօնի սուրբ Առաքելոցս լատին լեզուաւ» (էջ 30)։

Վստահ ենք, որ այս նախադասությունը (առանց ուղղանկյուն փա-
կաթեթի մեջ մեր կողմից առնված բառերի, որ համարում ենք հետագա
հավելում, երբ դործող անձինք հանդես եկան Գրիգոր Լուսավորիչն ու
Սեղբեստրոս պապը), եղել է «Դաշանց թղթի» առաջին բաժնի վերջում։
XIII դ. կեղծիքում, բնականորեն նախադասությունը տեղավորվել է
տեքստի վերջը, վերաբերելու համար ամբողջ «թղթին»։ Այստեղ մնացել է
և «գրեցաւ լատին լեզուաւ»-ը։ Բայց երկրորդ բաժնում չկա լատիններեն
բառի և ոչ մի հետք։ Սակայն քիչ չեն ֆրանսերեն բառերը - ֆրեր- frere,
օֆրանդ - offrande, տամուստել - demoiselle, շամբո - chambre և այլն։ Սա
ևս չի՝ վկայում, որ այն հասցեագրված էր եվրոպայի խաչակիրներին։ Այս
առթիվ մի հարց ևս։ Ինչպե՞ս պատահեց, որ «Դաշանց թղթի» հայերեն
աարբերակից հասել են տասնյակ արտագրություններ, իսկ «լատիններեն
բնագրի» և ոչ մի օրինակ գոյություն չունի։ Դիմենք Միքայել Չամչյա-
նին. «Այլ յասել ոմանց, թէ զիս՞րդ ասպա հին օրինակ այնր թյլթոյ դա-
շանց ոչ գտանի ի Հռովմ, այդ չէ՛ ինչ. զի ասի ի վերջ թղթոյն, թէ զայն
թուղթ եգին ի դիւան արքունի, ասպ ի փոխադրիլ Կոստանդիանոսի ի
Հռովմայ ի Բիւզանդիա հանդերձ արքունեօքն՝ այն թուղթ ևս ընդ այլոց
թղթոց փոխադրեցաւ անդր... Արդ՝ դուցէ այն յիշատակարանք այրեցան ի
մեծի հրկիզութեան, յայրիլ մեծի գրատան Կոստանդնուպոլսոյ՝ յամի
տեառն 476. զկնի մահուն թէոգոսի Փոքո՛ւ՝ յաւուրս Զենոնի կայսեր, ... և
կամ յայլում հրկիզութեան, որ եղև յաւուրս Լևոնի կայսեր իսաւրացւոյ
պատկերամարտի, յամի տեառն իբր 730»¹⁶⁰։ Եվ Մատթեոս կաթողիկոսի
գրածը. «Ինչու՞ համար անհոգացան և չեն հետևիր մինչև ցայսօր այն
Հռովմա կորուստը գտնել, ոչ դահակալքն Հռովմա. ոչ կարգինալքն Փրո-

¹⁶⁰ Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց. Հ. Ա, էջ 642-643:

բականտայու, և ո՛չ ընկերությունն Հիսուսին: Ասոր պատճառը անհոգությունը է՛, այլ՝ հայտնի նախանձ: Վասն զի այն Ագաթանդեղոսին դրչեն ելած ստուգապատում Դաշանց թղթին մեջ քանի մը պարբերությունները՝ արդարև հետո եկած կարգինալներուն նախանձվիլ տվին, և անոնց թելադրութամբը բարբաբեցան վերջին դարերու Հռովմայ գահակալները նույն թուղթին կորստյանը վրա ներքին համոզմամբ ուրախանալու: Նա բերում է «Դաշանց թղթի» այն տողերը, ուր ասված է, թե Գրիգոր Լուսավորիչը «Հռովմայ դահին մէջ հրամանահան» եղած է, նրա կատարած «հրաշքները», Սեղբեստրոս սրապի խնդրանքը՝ Լուսավորչին՝ «ուսո՛ մեղ զհաւատոյ զգաւանութիւն», և այլ նման բաներ¹⁶¹:

Հայերեն բնագրի մեղ հասնելը բազմաթիվ արտագրություններով, իսկ «լատիներեն» բնագրից և ոչ մի օրինակի գոյությունն իր պարզ բացատրությունն ունի: «Դաշանց թղթում» խոսք է լինում հայ-հռոմեական ռազմական դաշինքի մասին: Ամեն անգամ, երբ հայ ժողովուրդը թշնամու կողմից դրված էր անել վիճակում, հույս էր կապում Եվրոպայից ակնկալվող օգնության հետ¹⁶²: Այլ էր «Թղթի» «լատիներեն» բնագրի հարցը: Դրա «տիրաժը» պիտի որ երեք օրինակից բաղկացած լիներ, հասցեագրված Արևելքի երեք լատին պատրիարքությունների և պետությունների ղեկավարներին մի կոչով՝ Հայոց կաթողիկոսին և եկեղեցին, Անտիոքի, Երուսաղեմի և Ալեքսանդրիայի լատին պատրիարքություններին հավասար դասել: Կիլիկիայի հայոց ղեկավարները նրանց մի-մի օրինակ ուղարկել են: Նրանք էլ հազիվ թե հավատացին իրենց խոշոր սրբություններին՝ Կոստանդին կայսեր և Հռոմի պապ Սեղբեստրոսի հայոց թագավորին և կաթողիկոսին ցուցաբերած պատիվներին ու մեծարանքին, ապա և միանգամայն դեմ լինելով հայոց «միաբնակ» եկեղեցին իրենց «երկաբնակ» եկեղեցուն՝ հավասար դասելուն, իրենց օրինակները դեն գցեցին հենց այն գլխից, և ոչ վերջին դարերում, ինչպես գրում է Մատթեոս կաթողիկոսը:

Ավարտելով «Դաշանց թղթի» մեր ուսումնասիրությունը, վստահություն ենք հայտնում, որ մասնագետները, ձերբազատվելով Կ. Շահնազարյանցի աղբյուրին տված խիստ ու կրքոտ, բացասական ու միակողմանի գնահատականից (ինչը կարելի է արդարացնել, եթե նկատի առնենք հեղինակի ժամանակներում տիրող մտահոգիչ մթնոլորտը, կապված հայոց շրջանում գլուխ առած կաթոլիկ պրոսլաբանգան ու հոգեորսությունը), կհետադոտեն այն, բժշկական տերմինով ասած ո՛չ թե շոշափելով, այլ աղբյուրն անցկացնելով ռենտգենյան ճառագայթների միջով: Համոզված ենք, որ գեռ շատ բան ունի ասելու «կեղծիք» մկրսվածը:

Ամենավերջում թի ցանկություն: Ընթերցողը շատ լավ պատկերացրեց, որ «Դաշանց թղթի» գիտական-քննական հրատարակությունը շատ անհրաժեշտ է և հրամայական: Եվ դա հնարավոր է հաջողությամբ կատարել նկատի առնելով տեքստը պահպանած բաղում արտագրությունները:

¹⁶¹ «Ճոռաբաղ». հ. Բ, տեարակ ԺԶ, 1861, էջ 255-256:

¹⁶² Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 50-51:

“ГРАМОТА О ДРУЖБЕ И СОГЛАСИИ”. СОСТАВ, ВРЕМЯ, АВТОР И
ЦЕЛЬ ЕЕ СОЗДАНИЯ

РАЧ БАРТИКЯН

Р е з ю м е

В опубликованной впервые в 1683 г. в Венеции “Грамоте”, озаглавленной “Грамота о дружбе и согласии между великим императором Константином, высочайшим папой святым Сильвестром и армянским царем Тиридатом, Просветителем армян святым Григорием”, говорится о посещении Тиридатом III и св. Григорием Рима, оказанном им Константином и Сильвестром пышном приеме, предоставлении им больших привилегий, преподнесении ценных даров и т.д. В ней же говорится о заключенном между двумя странами договоре. Исследователи усомнились в подлинности документа, расценили его как фальшивку XI–XIII вв. сфабрикованную в Киликийском армянском государстве сторонниками унии армянской и католической церквей. Наше исследование показало, что “Грамота” состоит из двух частей. В первой, восходящей к 20-м годам IV в. части, говорится о действительно заключенном договоре (имена папы и католикоса включены много позднее). Местом подписания договора был не Рим, а город Никомедия Вифинии Малой Азии. В “Грамоте” просматривается ряд статей договора. Имеется статья, которую можно озаглавить “О дружбе и взаимопомощи” в контексте войны против персидского царя Сапора II, статья о налогообложении, о купцах и их фискальных обязанностях, об освобождении узников и приговоренных работать в рудниках (скорее всего христиан Малой Армении). Кроме того, прорисовывается административный состав Восточноримской империи и царства армянских Аршакидов. На этой подлинной основе источника в первой половине XIII в., т.е. в эпоху наивысшего могущества Киликийского армянского государства, когда оно было провозглашено царством и признано Византией, Святой Римской империей и Сельджукским султаном Рума (кстати, тогда оно и приобрело право чеканить собственную монету, имеющую международное обращение), государственные и церковные мужи Киликии попытались воспользоваться именами, пользующимися наивысшим авторитетом у крестоносцев Востока Константина Великого и папы Сильвестра, и с их помощью обеспечить армянскому католикосату статус, идентичный латинским патриархиям Антиохии, Иерусалима и Александрии, а также защитить армянскую движимость и недвижимость в Святой Земле, будто бы преподнесенную армянам Константином и Сильвестром, от посягательств крестоносцев.

“CHARTER ON FRIENDSHIP AND CONCORD”. COMPOSITION, TIME,
AUTHOR AND GOAL OF ITS CREATION

HRACH BARTIKYAN

S u m m a r y

The “Charter on Friendship and Concord, signed by the Great Emperor Constantine, Supreme Pope Saint Sylvester, and the Armenian King Tiridates, the Illuminator of the Armenians Saint Gregory”, published for the first time in 1683, in Venice, contains information about the visit of Tiridates III and Saint Gregory to Rome, the sumptuous welcome accorded by Constantine and Sylvester, the large privileges granted to them, presentation of precious donations, etc. The same document informs about the agreement, concluded by two countries. The investigators doubted of the document’s authenticity, regarded it as a forgery, fabricated in the 11th-13th centuries in the Armenian state of Cilicia, by the adherents of the Armenian and Catholic churches’ union. Our investigation showed that the “Charter” consists of two parts. The first one, which goes back to the 20s of the 4th century, concerns the agreement concluded in reality (the names of the Pope and the Catholicos had been included much later). The agreement’s signing place was not Rome, but Nicomedia city of Bithynia in the Asia Minor. A series of that agreement’s articles are shown through the text of that document: an article which can be titled “About Friendship and Mutual Assistance” within the context of the war against the Persian king Sapor II, an article about taxation, the other one about the merchants and their fiscal obligations, an article about the release of the prisoners and those who had been sentenced to the works in the mines (most probably, the Christians of the Asia Minor). Certain information about the administrative structure of the Eastern Roman Empire and the Kingdom of the Armenian Arshakids can be found as well. On this genuine base of the source, in the first half of the 13th century, i.e. in the period of the utmost might of the Armenian state of Cilicia, when it was declared kingdom and recognized by Byzantium, Holy Roman Empire, and the Seldjuk Sultanate of Roum (by the way, it was in the same time when the Armenian Cilicia was entitled to mint its own coin which had international circulation), the statesmen and the clergymen of Cilicia tried to make use of the names of Constantine the Great and the Pope Sylvester -the figures of highest authority for the crusaders of the Orient, and to secure for the Armenian Catholicosate the status identical to the Latin Patriarchies of Antioch, Jerusalem and Alexandria. Besides, they wanted to protect the Armenian real and movable property, situated in the Holy Land, from the encroachment of the crusaders, posing them as presented to the Armenians by Constantine and Sylvester.